



ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ–ՀԱՅԱՍՏԱՆ
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԼԱՏՖՈՐՄ



ՁԵԿՈՒՅՑ

ՀԱՄԱՊԱՐԹԱԿ ԵՎ ԸՆԴԼՍՅՆՎԱԾ

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԿԻՐԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2024

ՀՈՒՆԻՍ
2025



ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ-ՀԱՅԱՍՏԱՆ
ՔԱՂԱՔԱՅԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՊԼԱՏՖՈՐՄԻ

ԶԵԿՈՒՅՑ

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴՀԱՅՆՎԱԾ
ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ
ԿԻՐԱՐԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
2024

Հունիս,
2025



*Ձեկույցը խմբագրել է
ԵՄ-Հայաստան քաղհասարակության
պլատֆորմի համանախագահ*

ԼՈՒՍԻՆԵ ՀԱԿՈՔՅԱՆԸ,
Իրավունքի Եվրոպա միավորում ՀԿ

Սույն զեկույցը մշակվել է ԵՄ-Հայաստան քաղհասարակության պլատֆորմի անդամների և հրավիրյալ փորձագետների կողմից: Դրանում արտահայտած կարծիքները, դիրքորոշումները, գնահատականները կարող են չհամընկնել Եվրոպական Միության և Հայաստանի Հանրապետության կառավարության պաշտոնական տեսակետների հետ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Երախտագիտության խոսք	6
ՆԱԽԱԲԱՆ	7
1. ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔ	11
Դատավորների գնահատում	12
Դատավորների կարգապահական պատասխանատվություն	15
Առաջարկություններ	20
2. ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ-ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ	21
Առաջարկություններ	24
3. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՑԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՑԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ	25
Կոռուպցիայի կանխարգելման համակարգի ներկա վիճակը	26
Կոռուպցիայի հակազդման ոլորտի իրավիճակը Հայաստանում	29
Հակակոռուպցիոն կրթության ոլորտի վիճակը Հայաստանում	32
Գործարար ոլորտում կոռուպցիայի կանխարգելման վիճակը Հայաստանում	34

4. ՀԱՅԱՍՏԱՆ–ԵՄ ՎԻՋԱՆԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ. ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿ, ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ	36
Նախապատմություն և ընթացիկ իրավիճակ	37
Մարտահրավերներ և հեռանկարներ	38
5 ՀՈՈՄԻ ՍՏԱՏՈՒՏԻ ԻՄՊԼԵՄԵՆՏԱՑՈՒՄ	41
Հայաստան և ՄԲԴ. կայուն առաջընթաց անդամակցության պահից ի վեր	41
Օրենսդրական նախաձեռնություն և կարողությունների զարգացման գործողություններ	42
Համագործակցության մասին ձեռնարկը.....	45
ՀՀ իշխանությունները և Միջազգային քրեական դատարանը	46
Եզրակացություն	47
6 ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ	50
ՀԸԳՀ–ն և աշխատանքային քաղաքականությունը	51
Բարեփոխումների կատարման ընթացքը և eu-armenia առցանց գործիքը	52
ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ	57
Օրենսդրական դաշտի համապատասխանությունը և գործնական խնդիրները	57
Գործադուլի իրավունքի սահմանափակում.....	57
Միավորման ազատության սահմանափակում.....	58
Միավորման ազատության խոչընդոտումը հանրային հատվածում	58
Հանրային հատվածում «գրպանային» արհմիությունների տարածվածություն	60
Բարդություններ արհմիությունների պետական գրանցման հետ կապված.....	62
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԿԻՈՍՈՒԹՅԱՆ (ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ) ՀԵՏ ԿԱՊԿԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ	64
ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ	66
Առողջ և անվտանգ աշխատանք, տեսչական վերահսկողություն	66
Աշխատանքի պաշտպանություն	68

Օտարերկրացիների աշխատանքային շահագործում.....	68
Պլատֆորմային զբաղվածություն	71
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ	73
Ճանապարհային քարտեզներ, թափանցիկություն, միջգերատեսչական հանձնաժողով	73
ԵՄ գործընկերության նոր օրակարգ	75
7. ՀՀ-ՈՒՄ ԱՆԿԱՆՈՆ ՄԻԳՐԱՑԻԱՑԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ԵՄ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴՀԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ	76
8. ՀԸԳՀ-ՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ	85

ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԽՈՍՔ

ԵՄ-Հայաստան քաղաքացիական հասարակության պլատֆորմն իր երախտագիտությունն է հայտնում իր բոլոր անդամներին, որոնք 2024թ. ընթացքում նպաստեցին Պլատֆորմի՝ որպես Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով նախատեսված կարևոր մարմնի կայացմանը: Պլատֆորմը ինքնուրույն, անկախ և պրոֆեսիոնալ կառույց է և իր կայուն տեղն ունի ՀԸԳՀ-ով նախատեսված մարմինների շարքում:

Մենք շնորհակալ ենք նաև ՀՀ պետական մարմինների և քաղհասարակության կառույցների բոլոր այն ներկայացուցիչներին, որոնք իրենց հետազոտություններով, առաջարկություններով և քննարկումներին մասնակցությամբ նպաստել են Եվրամիություն-Հայաստան համագործակցությանը:

Հատուկ երախտագիտություն ենք հայտնում ԵՄ-Հայաստան քաղհասարակության պլատֆորմի գործունեության շրջանակներում հետազոտություններ կատարած այն մասնագետներին, որոնց բացահայտումները և գնահատականներն ամփոփվել են սույն զեկույցում:

Նրանք են՝

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի իրավաբան

ՍՅՈՒԶԱՆՆԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի ծրագրերի համակարգող, ավագ իրավաբան

ՍՏԵՓԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ, «Գլոբալիզացիայի և տարածաշրջանային համագործակցության կենտրոն» ՀԿ-ի նախագահ

ԳՈՒՐԳԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ, Նյուրնբերգի համալսարանի դասախոս, միջազգային քրեական իրավունքի մասնագետ

ԱՐՍԵՆ ԻԳԻԹՅԱՆ, Հայաստանի պետիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիություն

ՀՈՎՍԵՓ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ, «Ազատ քաղաքացի» ՀԿ-ի նախագահ

ՆԱԽԱԲԱՆ

Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (այսուհետ՝ նաև ՀԸԳՀ) շուրջ Հայաստանի Հանրապետության և Եվրոպական Միության միջև բանակցությունները պաշտոնապես մեկնարկել են 2015թ. դեկտեմբերի 7-ին Բրյուսելում: Գործընթացի տրամաբանական ավարտը 2017թ. նոյեմբերի 24-ին համաձայնագրի ստորագրումն էր:

2018թ. ապրիլի 11-ին Հայաստանի Հանրապետության ազգային ժողովը միաձայն քվեարկությամբ վավերացրել է ՀՀ-ԵՄ ՀԸԳՀ-ն:

2018թ. հուլիսի 2-ի Հայաստանի Հանրապետության վարչապետի թիվ 906-Ն որոշմամբ ստեղծվել է Համաձայնագրի և ՀՀ-ԵՄ Գործընկերության առաջնայնություններ փաստաթղթի կիրարկումն ապահովող միջոցառումները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով:

2019 և 2021թթ. Հայաստանի Հանրապետության կառավարությունն ընդունել է ՀԸԳՀ-ի կիրարկման երկու ճանապարհային քարտեզներ:

ՀԸԳՀ-ն Հայաստանի Հանրապետությունում ամբողջությամբ ուժի մեջ է մտել 2021թ. մարտի 1-ին:

ՀԸԳՀ-ի 366-րդ հոդվածը նախատեսում է քաղհասարակության պլատֆորմի ստեղծում՝ կազմված Եվրոպական Միության քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից, այդ թվում՝ Եվրոպական տնտեսական և սոցիալական հարցերի կոմիտեից, և Հայաստանի Հանրապետության քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներից, այդ թվում՝ Արևելյան գործընկերության Հայաստանի ազգային պլատֆորմի ներկայացուցիչներից, որը հանդես կգա որպես հանդիպումների և կարծիքների փոխանակման հարթակ:

ԵՄ-Հայաստան քաղհասարակության պլատֆորմը վերջնականապես ձևավորվել է 2022թ. սկզբին՝ ներառելով ներկայացուցիչներ Եվրոպական Միության և Հայաստանի քաղհասարակության երեք հատվածների՝ հասարակական կազմակերպություններ, արհմիութենական և գործատուների կազմակերպություններ, կառույցներից:

Սույն զեկույցն ամփոփում է Եվրամիություն-Հայաստան քաղհասարակության պլատֆորմի 2024թ. գործունեության արդյունքները՝ հանդիսանալով այս հարթակի երկրորդ համակողմանի զեկույցը ՀԸԳՀ-ի կիրարկման մշտադիտարկման վերաբերյալ:

Զեկույցն ամփոփում է Պլատֆորմի անդամ և հրավիրյալ քաղհասարակության փորձագետների ուսումնասիրությունները ՀԸԳՀ-ի կատարման վերաբերյալ: Այն ներկայացնում է մի շարք ոլորտներում ՀԸԳՀ-ի կիրարկման ներկա իրավիճակի և մարտահրավերների գնահատականները և պարունակում է նաև առաջարկություններ իրավիճակի բարելավման շուրջ: Զեկույցը, մեծավ մասամբ, արտացոլում է ՀԸԳՀ-ի կիրարկման առաջընթացի գնահատականները 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հասկանալիորեն ՀԸԳՀ-ն ծավալուն փաստաթուղթ է և ներառում է բազում ոլորտներ: Սակայն, ժամանակային, մարդկային, ֆինանսական և այլ ռեսուրսների սակավությամբ պայմանավորված՝ Պլատֆորմի անդամները անհրաժեշտաբար իրենց գործունեության հիշյալ ժամանակահատվածի համար ընտրել են որոշակի առաջնահերթ թեմաներ, որոնց վերաբերյալ էլ մշակվել են սույն զեկույցում ամփոփված հետազոտությունները:

Այդ թեմաներից այս մասում հատկապես անհրաժեշտ ենք համարում առանձ-

նացնել ժողովրդավարական սկզբունքների, իրավունքի գերակայության, մարդու իրավունքների և հիմնարար իրավունքների նկատմամբ հարգանքը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀԸԳՀ-ի 2-րդ հոդվածում դրանք ճանաչված են որպես Եվրամիության և Հայաստանի Հանրապետության ներքին և արտաքին քաղաքականության հիմքը և Համաձայնագրի էական տարր:

Freedom House միջազգային հեղինակավոր կազմակերպության 2025թ. զեկույցի համաձայն՝ Հայաստանը շարունակում է դասվել մասամբ ազատ երկրների շարքին՝ հնարավոր 100-ից հավաքելով 54 միավոր¹: Դրան նախորդած տարվա զեկույցում նույնպես Հայաստանն ուներ նույնքան միավոր²:

Իրավունքի գերակայությունը, որը մեծապես կապվում է դատական իշխանության անկախության հետ, այս տարվա զեկույցում էլ նախորդ տարվա պես շարունակում է մնալ մտահոգիչ՝ չորս առավելագույն միավորից հավաքելով մեկը:

Այս առումով պետք է նշել, որ չնայած իրականացված և իրականացվող բարեփոխումներին և, ըստ այդմ, նաև համապատասխան ռազմավարական ծրագրերին՝ դատական իշխանության անկախությունը, մարդու իրավունքների պաշտպանությունը, կոռուպցիայի դեմ պայքարն ու մի շարք այլ կարևոր ոլորտներ դեռևս մնում են խնդրահարույց: Ավելին, վերջին շրջանում նկատվել է բարեփոխումների լճացում: Հարկ ենք համարում արձանագրել, որ ժողովրդավարական ինստիտուտների կայացումը Հայաստանում դեռևս մնում է բավական խնդրահարույց:

Քաղաքացիական հասարակությունը ԵՄ-Հայաստան ծավալուն գործակցությունը, այդ թվում՝ ՀԸԳՀ-ը և վիզաների ազատականացման վերաբերյալ երկխոսությունը, դիտարկում է որպես բարեփոխումների շարունակականությունն ապահովող կարևոր հնարավորություն, ինչն էլ իր հերթին պահանջում է պետական համապատասխան կառույցների կամքն ու արդյունավետ գործունեությունը, ինչպես նաև աջակցություն քաղաքացիական հասարակությունից և միջազգային գործընկեր կառույցներից:

Միևնույն ժամանակ, պետք է արձանագրել, որ վերջին տարիներին Հայաստանը լուրջ բացասական ազդեցություն է կրել Ադրբեյջանի կիրառած ռազմա-

1 <https://freedomhouse.org/country/armenia/freedom-world/2025>

2 <https://freedomhouse.org/country/armenia/nations-transit/2024>

կան ճնշումներից: Ավելին, 2023թ. սեպտեմբերին, երբ Ադրբեյջանի զինված ուժերը ամբողջական վերահսկողություն հաստատեցին Լեռնային Ղարաբաղի տարածքի վրա, գրեթե ողջ հայ բնակչությունը ենթարկվեց էթնիկ զտման և բնակություն հաստատեց Հայաստանում, ինչը պետության համար նոր մարտահրավերներ է ստեղծել:

Որպես նախաբանի ամփոփում՝ հարկ ենք համարում ընդգծել, որ մինչ առկա է գիտակցում Հայաստանի Հանրապետության պետական մարմինների մոտ այն հանգամանքի, որ ՀԸԳՀ-ի կիրարկում ասվածը նույնը չէ, ինչ մինչ այժմ ընդունած երկու ճանապարհային քարտեզների կիրարկումը, և որ վերջիններս արդիականացման կարիք ունեն, առայսօր հիշյալ ճանապարհային քարտեզների արդիականացման գործընթացն ավարտված չէ: Պլատֆորմը լիահույս է, որ ՀԸԳՀ-ի կիրարկման ճանապարհային քարտեզների արդիականացման գործընթացը կավարտվի հնարավորինս արագ՝ Պլատֆորմի հետ խորհրդակցությունների արդյունքում:

1

ԴԱՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵՓՈՒՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑՔ

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
*«Իրավունքների պաշտպանություն
առանց սահմանների» ՀԿ-ի իրավաբան*

Դեռևս ընթացքի մեջ է Կառավարության 2022թ. հուլիսի 21-ի թիվ 1133-Լ որոշմամբ հաստատված ՀՀ դատական և իրավական բարեփոխումների 2022-2026թթ. ռազմավարությունը (այսուհետ՝ Ռազմավարություն) և դրանից բխող գործողությունների ծրագիրը:

Ըստ ՀՀ արդարադատության նախարարության հրապարակած տարեկան հաշվետվության՝ Գործողությունների ծրագրով 2024թ. ընթացքում կատարման ենթակա է եղել սահմանված 12-ից 4 նպատակների 14 գործողություն, որից կատարվել է 4-ը, չի կատարվել՝ 7-ը, և 3-ը կատարվել է մասամբ³:

Հաշվետվության մեջ նաև ներկայացվում է, որ 2024թ. փետրվարի 1-ից գործարկվեց «Էլեկտրոնային դատարան» համակարգի քաղաքացիական գործերով էլեկտրոնային մոդուլը (cabinet.armlex.am): Համակարգը թույլ է տալիս քաղաքացիական դատավարությունն իրականացնել էլեկտրոնային եղանակով՝ հայցի հարուցումից մինչև եզրափակիչ դատական ակտի հրապարակում և կատարողական թերթի տրամադրում: Համակարգը ներդնելուց ու գործարկելուց հետո 2024-ին էլեկտրոնային եղանակով մուտքագրվել է շուրջ 15.000 էլեկտրոնային գործ և կայացվել շուրջ 5.000 դատական ակտ:

2024 թ. ընթացքում «Էլեկտրոնային դատարան» համակարգի վարչական գործերով էլեկտրոնային մոդուլը գործարկելու ուղղությամբ մեկնարկել են

3. <https://www.datairav.am/report/annual>
Տարեկան հաշվետվություններ

պայմանագրի 3-րդ փուլի աշխատանքները, որոնք ներառում են շահառուների վերապատրաստում, ինչպես նաև համակարգի պիլոտային գործարկում: 2024թ. ներդրվել ու գործարկվել է Հարկադիր կատարումն ապահովող ծառայության նոր էլեկտրոնային համակարգը (<https://cabinet.harkadir.am/>), ինչի շնորհիվ կատարելագործվել և ընդլայնվել է կատարողական վարույթում էլեկտրոնային ծանուցումների գործիքակազմը, կրճատվել է այլ գերատեսչությունների հետ փաստաթղթաշրջանառության ժամանակահատվածը: Ըստ հաշվետվության՝ համակարգի գործարկումն ապահովել է կողմերի համար կատարողական վարույթին առնչվող տեղեկության և փաստաթղթերի հասանելիությունը, ընդլայնել է էլեկտրոնային եղանակով կատարվող կատարողական գործողությունների շրջանակը:

Ներկայացված գործողություններն ու արձանագրված արդյունքները գնահատվում են դրական: Միևնույն ժամանակ, պետք է արձանագրել, որ դեռևս չեն գնահատվել պրակտիկայում այդ փոփոխությունների արդյունքներն ու, ըստ այդմ, նաև դրանց արդյունավետությունը, ինչը պահանջում է հատկապես քաղաքացիական հասարակության դերակատարների շարունակական մշտադիտարկում ու ՀՀ կառավարության ձեռնարկած քայլերի արդյունավետության բարձրացմանն ուղղությամբ առաջարկների և լրացումների ներկայացում:

Խոսելով դատական իշխանության մասին՝ չենք կարող մոռանալ նաև այն, որ 2024թ. նոյեմբերին Բարձրագույն դատական խորհրդի (ԲԴԽ) ղեկավարը հրաժարական տվեց վարչապետի խնդրանքով՝ ևս հինգ բարձրաստիճան պաշտոնյաների հետ միասին, ինչը դատական իշխանության անկախության վերաբերյալ լուրջ մտահոգություններ է առաջացնում:

2024թ. ընթացքում դատական համակարգի բարեփոխումների շարունակականության ապահովման շրջանակներում, բացի ռազմավարությամբ նախատեսված կատարման ենթակա գործողություններից, նախաձեռնվել են այլ օրենսդրական փոփոխություններ ևս:

Դատավորների գնահատում

ՀՀ Դատական Օրենսգրքի 136-րդ հոդվածի համաձայն՝
Դատավորի գործունեության գնահատման նպատակն է՝

- 1) դատավորի՝ առաջխաղացման ենթակա թեկնածուների ցուցակները կազմելիս նպաստել լավագույն թեկնածուների ընտրությանը.
- 2) նպաստել դատավորների վերապատրաստման ուղղությունների ընտրությանը.
- 3) բացահայտել դատավորի աշխատանքի արդյունավետությունը բարելավելու ուղիները.
- 4) նպաստել դատավորի ինքնակատարելագործմանը.
- 5) նպաստել դատարանի գործունեության արդյունավետության բարելավմանը:

Ըստ գործող կարգավորումների՝ Դատավորների ընդհանուր ժողովը ձևավորում է Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողով, Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողով և Ուսումնական հարցերի հանձնաժողով: Դատավորների գործունեության գնահատման իրավասությունը տրված է Գնահատման հանձնաժողովին:

Դատավորների գործունեության գնահատման հանձնաժողովը կազմված է հինգ անդամից. երեքը դատավոր անդամներ են, երկուսը՝ իրավաբան գիտնականներ: Դատավոր անդամներից մեկն ընտրվում է Վճռաբեկ դատարանի դատավորներից, մեկը՝ վերաքննիչ դատարանների դատավորներից, մեկը՝ առաջին ատյանի դատարաններից: Այսինքն՝ գործող կարգով դատավորները հանձնաժողովում մեծամասնություն են:

Դատական օրենսգրքի 137-րդ հոդվածը սահմանում է գնահատման տեսակները, ըստ որի՝ չորս տարին մեկ անգամ դատավորի գործունեությունը ենթակա է հերթական գնահատման, իսկ դատավորի նախաձեռնությամբ կամ օրենսգրքով սահմանված դեպքերում՝ արտահերթ կարգով:

Գնահատմանն առնչվող թերևս առավել խնդրահարույց հարցը գնահատման հիմքում օգտագործվող չափանիշներն են:

Չափանիշներն ու գնահատման մեթոդաբանությունը սահմանել է Բարձրագույն դատական խորհուրդը: Այն ներառում է՝

Դատավորի աշխատանքի որակի և արհեստավարժության ստուգումը

- Դատական ակտը հիմնավորելու կարողությունը
- Դատական նիստը կառավարելու և օրենքով սահմանված կարգով անցկացնելու կարողությունը
 - Դատավորի աշխատանքի արդյունավետությունը
- Աշխատանքային ծանրաբեռնվածության արդյունավետ կառավարման ունակությունն ու աշխատանքի պլանավորումը
- Ողջամիտ ժամկետում գործեր քննելն ու դատական ակտեր կայացնելը
- Դատավորի կողմից առանձին դատավարական գործողություններ կատարելու համար օրենքով սահմանված ժամկետների պահպանումը
- Արդյունավետ աշխատամիջավայր ապահովելու կարողությունը
 - Դատավորի էթիկայի և վարքագծի կանոնի գնահատումը
- Վարքագծի և էթիկայի կանոնների պահպանումը
- Դատարանի հանրային ընկալմանն ու դատարանի նկատմամբ վստահությանը նպաստելը
- Այլ դատավորների և դատարանի աշխատակազմի նկատմամբ դրսևորած վերաբերմունքը

Այս չափանիշները, սակայն, պրակտիկ մեկնաբանության և կիրառման հարցում վեր են հանում խնդիրներ՝ կապված վերջիններիս հիմքում ընկած տվյալների առկայության, տվյալների հավաքման մեթոդների հստակության, էլեկտրոնային գործիքակազմերի բացակայության, չափանիշների հիմքում ընկած ուղենիշերի բացերի և մի շարք այլ հանգամանքների հետ:

2024թ. դատավորների գործունեության գնահատման կարգի, մարմնի և չափանիշների փոփոխության վերաբերյալ քննարկումներ սկսվեցին, ինչի արդյունքում ՀՀ բարձրագույն դատական խորհրդի և Դատական դեպարտամենտի ձևավորած աշխատանքային խումբը մշակեց օրենսդրական փոփոխությունների փաթեթ⁴: Այն նախատեսում էր գնահատման մոդելի համակարգային փոփոխություն, որը ներառում էր առաջին հերթին գնահատող մարմնի ձևավորման նոր մոդել ու կազմ: Մասնավորապես, Դատավորների գործունեության գնահատման նոր ձևավորվող հանձնաժողովը պիտի կազմվեր 25 անդամից. տասը դատավորի պիտի ընտրեր Ընդհանուր ժողովը, հինգ

4 <https://news.am/arm/news/822982.html>

իրավաբան գիտնականի պիտի առաջադրեին բարձրագույն ուսումնական հաստատությունները, հինգ իրավաբանի՝ հասարակական կազմակերպությունները, և հինգ իրավաբան գիտնականի՝ Դատական դեպարտամենտը:

Առաջարկվում էր նվազեցնել նաև գնահատման պարբերականությունը, այն է՝ Դատավորի պաշտոնում առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ ունեցող դատավորի գործունեությունը երկու տարին մեկ ենթակա էր գնահատման:

Փոփոխություն նախատեսվում էր նաև գնահատման չափանիշների և հետևանքների առնչությամբ:

Այդ նախագիծը, սակայն, քաղաքացիական հասարակության և դատավորների հետ քննարկումների արդյունքում հավանության չարժանացավ և չընդունվեց: Խնդրահարույց է դիտարկվել ինչպես գնահատման հաճախականությունը, այնպես էլ գնահատող նոր մարմնի կազմը: Այն ներկայացվել է նաև Վենետիկի հանձնաժողովի կարծիքին⁵, ինչից հետո օրենսդրական փոփոխությունների նախագիծը վերանայվել է:

Ներկայումս ՀՀ արդարադատության նախարարությունը վերամշակված նոր նախագիծ է քննարկման դրել⁶:

Դատավորների կարգապահական պատասխանատվություն

Դատավորների անկախությանն առնչվող կարևորագույն հարցերից մեկը վերաբերում է դատավորների կարգապահական պատասխանատվության ինստիտուտին:

Այս հարցը ոչ միայն նախորդ տարում, այլ վերջին տարիներին մշտապես եղել է ուշադրության կենտրոնում և ուղեկցվել մի շարք խնդիրներով, ինչը պայմանավորված է հատկապես պրակտիկայի դրսևորումներով ու հարուցվող վարույթներով:

Վերջին տարիներին առավել մեծ ուշադրության է արժանացել կարգապահական վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմինների հարցը: Այսպես, ըստ Դատական օրենսգրքի՝ նման իրավասություն ունեն.

⁵ <https://www.moj.am/article/4148>

⁶ <https://www.e-draft.am/projects/8620>

- 1) Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը.
- 2) Լիազոր մարմինը՝ ի դեմս ՀՀ արդարադատության նախարարության.
- 3) Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ օրենքով նախատեսված դեպքերում:

2020թ. ՀՀ արդարադատության նախարարությունը ներկայացրել է 13 միջնորդություն, Դատավորների ընդհանուր ժողովի էթիկային և կարգապահական հարցերի հանձնաժողովը՝ 5 միջնորդություն: 2021-ին պատկերը եղել է համանման. հարուցված վարույթների թիվն աճել է. մեծ մասը՝ այն է՝ 18-ը, կրկին կազմել է արդարադատության նախարարության ներկայացրած միջնորդությունները, էթիկայի և կարգապահական հարցերով հանձնաժողովի ներկայացրած միջնորդությունների թիվը եղել է 6, իսկ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովինը՝ 4⁷:

2022-ին արդարադատության նախարարությունը ներկայացրել է վարույթ հարուցելու 18 միջնորդություն, էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովը՝ 5, Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը՝ 1 միջնորդություն⁸:

2023թ. ընթացքում էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովն ստացել է դատավորների կողմից ենթադրյալ կարգապահական խախտումներ թույլ տալու վերաբերյալ շուրջ 288 հաղորդում: Նշված ժամանակահատվածում Հանձնաժողովը հարուցել է 13 վարույթ, որից 3-ը՝ 2022-ի ընթացքում ստացված հաղորդումների, իսկ 1-ը՝ կարգապահական խախտման մասին զանգվածային լրատվության միջոցների հրապարակման հիման վրա: Հարուցված երկու կարգապահական վարույթների շրջանակում կայացվել է դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դատական խորհրդին դիմելու մասին որոշում⁹:

7<https://iravaban.net/405356.html>

8 https://court.am/storage/uploads/files/news/_/D4%B7%D5%A9%D5%AB%D5%AF%D5%A1%D5%B5%D5%AB%20%D6%87%20%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6%20%D5%B0%D5%A1%D6%80%D6%81%D5%A5%D6%80%D5%AB%20%D5%B0%D5%A1%D5%B6%D5%B1%D5%B6%D5%A1%D5%AA%D5%B8%D5%B2%D5%B8%D5%BE.pdf

<https://prwb.am/wp-content/uploads/2023/09/%D4%B4%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BE%D5%B8%D6%80%D5%B6%D5%A5%D6%80%D5%AB-%D5%AF%D5%A1%D6%80%D5%A3%D5%A1%D5%BA%D5%A1%D5%B0%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%BA%D5%A1%D5%BF%D5%A1%D5%BD%D5%AD%D5%A1%D5%B6%D5%A1%D5%BF%D5%BE%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%A1%D5%B6-%D5%A6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81-1.pdf>

ինչ վերաբերում է 2023թ. արդարադատության նախարարության հարուցած վարույթներին, ապա պատկերը հետևյալն է: 2023թ. ընթացքում արդարադատության նախարարությունում ստացվել է դատավորի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու վերաբերյալ 487 հաղորդում: 2023թ. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 146-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի աղիթով դատավորների նկատմամբ հարուցվել է 4 կարգապահական վարույթ, որոնցից 8-ով միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դատական խորհուրդ՝ դատավորներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու նպատակով¹⁰:

Նույն ժամանակամիջոցում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը վարույթ չի հարուցել, բայց ստացել է դատավորների կարգապահական պատասխանատվության ենթարկելու 9 դիմում, որոնք վերահասցեագրել է էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովին¹¹: Նմանատիպ պատկեր արձանագրվել է նաև 2024թ. դարձյալ ՀՀ արդարադատության նախարարության հարուցած վարույթները գերակշռել են, ինչը մի շարք հարցերի տեղիք է տվել:

Կարգապահական վարույթների հետ կապվող մեկ այլ խնդիր վերաբերում է Խորհրդի կայացրած որոշումների համաչափությանը:

Այսպես, 2023թ. տեղի ունեցած կարգապահական պատասխանատվության գործերով արձանագրվել են դատավորների լիազորությունները դադարեցնելու մի շարք դեպքեր, որոնց պարագայում Խորհրդի որոշած պատասխանատվության միջոցը՝ մասնավորապես դրա համաչափությունը, եղել է խնդրահարույց: Օրինակ, դատավորների լիազորությունների դադարեցման երկու դեպքով վարույթ հարուցելու հիմք է հանդիսացել հրապարակային կարծիք հայտնելը: Ընդ որում՝ այդ գործերից մեկով ներկայացված սահմանադրական բողոքի հիման վրա արդեն իսկ Սահմանադրական դատարանը կայացրել է որոշում՝ արձանագրելով մի շարք կարևոր խախտումներ¹²: Նմանատիպ խնդ-

10 Տվյալները ստացվել են ՀՀ Դատական դեպարտամենտից՝ ի պատասխան Տեղեկատվության հարցման

11 Տեղեկատվության հարցման պատասխան, Կոռուպցիայի Կանխարգելման Հանձնաժողով, 01.07.2024թ., 01/ 2029-2024 գրություն

12 Հետևյալ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄԸ ԴԱԿԻԹ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ ԴԻՍՈՒՄԻ ՀԻՄՆԱ ՎՐԱ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՐԹԻ 101-ՐԴ ՀՈՂԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ 2-ՐԴ ԿԵՏԻ ԵՎ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐԹ» ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ՕՐԵՆՔԻ 90-ՐԴ ՀՈՂԱԾԻ 6-ՐԴ ՄԱՍԻ՝ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՎ ՆԱԵՎ ՆՇՎԱԾ ԴՐՈՒՅԹՆԵՐԻՆ ԻՐԱՎԱԿԻՐԱՌ՝ ՊՐԱԿՏԻԿԱՅՈՒՄ ՏՐՎԱԾ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՊԱՏԱՆԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ, 21 մայիսի 2024թ

րահարույց գործեր արձանագրվել են նաև 2024թ., որոնց արդյունքում ԲԴԽ-ն կայացրել է դատավորի լիազորությունները դադարեցնելու որոշում, ինչը, սակայն, հարցեր է առաջացրել ինչպես հարուցման իրավաչափության, այնպես էլ ընտրված միջոցի համաչափության վերաբերյալ: Հատկանշական է, որ այդ գործերից մեկով ևս Սահմանադրական դատարանը արձանագրել է կարևոր օրենսդրական խնդիրներ¹³:

Հաշվի առնելով առկա խնդիրները, ինչպես նաև Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ նախատեսված գործողությունները՝ 2023թ. ՀՀ արդարադատության նախարարության նախաձեռնած փոփոխություններով դատավորների էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմը նախատեսվում է դարձնել 11 հոգի, որտեղ ոչ դատավոր անդամների թիվը դառնում է 5¹⁴: Թեև փոփոխությունները նախատեսված են, սակայն օրենսդրությամբ ամրագրված չեն և Հանձնաժողովի կազմը դեռևս փոփոխության չի ենթարկվել: Ռազմավարությամբ նախատեսված է նաև Բարձրագույն դատական խորհրդի՝ կարգապահական գործերով որոշումների բողոքարկման իրավական հնարավորության նախատեսում, ինչը կրկին, չնայած երկար քննարկումներին ու օրենսդրական ամրագրմանը, ցայսօր ԲԴԽ-ն կյանքի չի կոչվել: Փաստացիորեն դատավորները զրկված են խորհրդի որոշումները բողոքարկելու հնարավորությունից:

Դատավորների կարգապահական պատասխանատվության վերաբերյալ ոլորտային կառույցների մշտադիտարկումներն ու ուսումնասիրությունները այդ առնչությամբ վեր են հանել հետևյալ խնդիրները՝

- Դեռևս մտահոգիչ է վարույթի հարուցման փուլի ոչ հրապարակային լինելը՝ ներառյալ վարույթ հարուցելու իրավասություն ունեցող մարմիններին ներկայացվող դիմումները, դրանց վերաբերյալ կայացված որոշումները, այդ թվում՝ վարույթ չհարուցելու, հարուցված վարույթը կարճելու, և այդ մարմինների կողմից Խորհրդին ներկայացվող միջնորդությունները:

13 https://concourt.am/decision/decisions/680b69ec8defa_sdvd-1780pdf?fbclid=IwY2xjawKEZ0tleHRuA2FibQlxBicmlkETE0a0VHNHpKTnFJVE5VcGIUAR5SUL4rrr9aqsc6L0SKH3uY0AhDppZmWTdeTntVbWx6ZLzgknDnn5hmX_s0XA_aem_Qllvh0aOozeXaw-ISB2yYg

14 Հայաստանի Հանրապետության Սահմանադրական Օրենքը «Հայաստանի Հանրապետության Դատական Օրենսգիրք» Սահմանադրական Օրենքում Լրացումներ Եվ Փոփոխություններ Կատարելու Մասին, <https://www.e-draft.am/en/projects/5955>

- Խոսելով վարույթ հարուցելու մասին, պետք է նշել սրա հետ կապված մեկ այլ մտահոգություն՝ հատկապես արդարադատության նախարարի կողմից ՄԻԵԴ վճռի ուսումնասիրության հիման վրա հարուցվող վարույթների առնչությամբ: Մասնավորապես, հստակ չէ, թե ինչ չափանիշով ու ընթացակարգի հիման վրա է տեղի ունենում ՄԻԵԴ դատական ակտերով խախտումների հիման վրա կարգապահական վարույթներ հարուցելը:
- Շարունակում է մտահոգիչ մնալ դատավարական ժամկետների խախտման հիմքով հարուցվող վարույթների պրակտիկան: Թեև դատավարական ժամկետների խախտումները իրապես խնդրահարույց են և անթույլատրելի, միևնույն ժամանակ նման խախտումները վեր են հանում դատավորների ծանրաբեռնվածության համակարգային խնդիրը, որն առաջին հերթին պահանջում է համալիր միջոցառումներ, այլ ոչ՝ սոսկ դատավորների նկատմամբ պատժողական քաղաքականության կիրառում, հատկապես այն պարագայում, երբ հստակ չէ, թե ինչ ընտրանքով են այս հիմքով դատավորների նկատմամբ վարույթներ հարուցվում, քանզի դատավարական ժամկետների պահպանումն ու ողջամիտ ժամկետներում գործերի քննության խնդիրը ՀՀ արդարադատության համակարգի լրջագույն մարտահրավերներից է:
- Ուսումնասիրությունը ցույց է տալիս նաև, որ երբեմն հարուցված վարույթի հիմքում ընկած են իրավական ոլորտի և, մասնավորապես, պրակտիկայի առավել խորքային խնդիրներ, որոնք պահանջում են ոլորտի համալիր ուսումնասիրություն և ինչպես օրենսդրական, այնպես էլ պրակտիկայի վերանայում:
- Դեռևս խնդրահարույց է նաև Խորհրդի կողմից արարքի որակումը, մեղքի ձևի ու ընտրված պատասխանատվության միջոցի հիմնավորումը: Շարունակում է խնդրահարույց մնալ դատավորի կատարած խախտման համար կարգապահական տույժի կոնկրետ տեսակի ընտրության հիմնավորվածության և համաչափության հարցը, քանզի որոշումներով ներկայացվող հիմնավորումները բավարար չեն կամ դրանք առհասարակ բացակայում են¹⁵:

15 <https://prwb.am/>

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ արդարադատության նախարարությանն ու ՀՀ կառավարությանը՝ ապահովել Դատական և իրավական բարեփոխումների ռազմավարությամբ և դրանից բխող գործողությունների ծրագրի միջոցառումների շարունակական և արդյունավետ իրագործումը. այդ գործընթացը դարձնել առավել թափանցիկ ու մասնակցային:

Բարձրագույն դատական խորհրդին՝ երաշխավորել խորհրդի որոշումների պատշաճ հիմնավորվածությունը, մասնավորապես՝ ներկայացնել դատավորի արարքը որակելու, մեղավորության կամ մեղքի ձևի, ինչպես նաև նրա նկատմամբ կիրառվող կարգապահական տույժի տեսակի համաչափության վերաբերյալ հստակ և բավարար պատճառաբանություն ու հիմնավորում:

ՀՀ արդարադատության նախարարությանը՝ ապահովել կարգապահական վարույթներ հարուցելու միասնական պրակտիկա, նաև՝ միասնական պրակտիկա ՄԻԵԴ կայացրած ակտի ուսումնասիրության և առերևույթ կարգապահական խախտման հատկանիշներ պարունակող արարքի հայտնաբերման հիմքով հարուցված վարույթների առնչությամբ:

ՀՀ արդարադատության նախարարությանը և Ազգային ժողովին՝ ապահովել Դատավորների ընդհանուր ժողովի Էթիկայի և կարգապահական հարցերի հանձնաժողովի կազմում ոչ դատավոր անդամների թվակազմի ավելացումը և նրանց ընտրության օբյեկտիվ, թափանցիկ ընթակարգը: Ներդնել Բարձրագույն դատական խորհրդի դատական ակտերը բողոքարկելու արդյունավետ մեխանիզմ:

2

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ–ՔԱՂԱՔԱՑԻ ՀԱՐԱՔԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ՀԱՍՄԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ,
«Իրավունքների պաշտպանություն
առանց սահմանների» ՀԿ-ի իրավաբան

Լուրջ մտահագություններ կան նաև Մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության և 2023-2025 թթ. գործողությունների պլանի իրագործման արդյունավետության առնչությամբ: Գործողությունների պլանի մեծ մասը բաղկացած է կարիքների գնահատման և վերլուծությունների ձևով իրազեկումը բարձրացնելու և կարողությունները զարգացնելու միջոցառումներից, որոնք երբեմն մակերեսային են և անբավարար՝ մարդու իրավունքների խախտումների, օրինակ՝ ոչ մարտական պայմաններում զինված ուժերում տեղի ունեցած մահվան դեպքերը կանխարգելելու կամ լուծելու, ինչպես նաև ոստիկանություն-քաղաքացի հարաբերություններում վատ վերաբերմունքի դրսևորումները կանխելու համար: Հատկապես վերջինիս առնչությամբ կան բազմաթիվ հրապարակային տվյալներ և դեպքեր, որոնք ցույց են տալիս ոստիկանության կողմից վատ վերաբերմունքի աճող միտումը՝ ինչպես ոստիկանության բաժանմունքներում և ավտոմեքենաներում, այնպես էլ զանգվածային ցույցերի ժամանակ և բերման ենթարկելու ընթացքում:

Ոստիկանության խախտումների առնչությամբ գլխավոր խնդիրներից են հաշվետվողականության բացակայությունն ու անպատժելիությունը: Թեև վերջին տարիներին ոստիկանության կողմից բռնության դեպքերով հարուցվել է

մի քանի քրեական գործ, իրավապահ համակարգի ընդհանուր արձագանքը դեռևս մնում է անբավարար:

Նախորդ տարվա ապրիլից Հայաստանում տեղի են ունեցել մի շարք ցույցեր և հավաքներ՝ կապված Ադրբեջանի հետ սահմանազատման գործընթացի արդյունքում Ադրբեջանին տարածք հանձնելու ՀՀ կառավարության ծրագրերի հետ: Հունիսի 12-ին լուրջ բախումներ են տեղի ունեցել ոստիկանության և ցուցարարների միջև Ազգային ժողովի շենքի մոտ, այն պահին, երբ Վարչապետը պիտի ելույթ ունենար պատգամավորների առաջ: Ինչպես արձանագրել է Freedom House իրավապաշտպան կառույցը՝ Ոստիկանությունն այդ օրը աննախադեպ ձևով հզոր լուսաձայնային նոնակներ է կիրառել, ինչի հետևանքով ավելի քան 100 մարդ վնասվածք է ստացել: Նույնքան մարդ էլ ձերբակալվել է¹⁶:

Հունիսի 12-ի բախումներն ու ոստիկանության կիրառած ուժի արդյունքում արձանագրված խախտումները տեղ են գտել նաև Amnesty International միջազգային կառույցի պատրաստած զեկույցում: Մանավորապես, ըստ զեկույցի՝ ապրիլ և մայիս ամիսներին ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջով տեղի ունեցած բողոքի ակցիաների ժամանակ ոստիկանությունը ցուցարարների նկատմամբ մի քանի անգամ ապօրինի ուժ է կիրառել: Հունիսի 12-ին Հայաստանի մայրաքաղաքի կենտրոնում սահմանագծման կանոնակարգի դեմ բողոքի ակցիաների ժամանակ բախումներ են եղել Ոստիկանության և ցուցարարների միջև: 101 մարդ վիրավորվել է, այդ թվում՝ 17 ոստիկան, և հաղորդվել է 98 ձերբակալվածի մասին: Առնվազն 15 մարդու խուլիգանության և հասարակական կարգը խախտելու մեղադրանք է առաջադրվել: Ոստիկանության արձագանքի համաչափությունն ու օրինականությունը քննության առարկա դարձնելուց հետո ոչ մի իրավապահ պատասխանատվության չի ենթարկվել¹⁷:

Ինչպես հաղորդում են իրավապաշտպան կառույցներն ու լրատվամիջոցները՝ 2024-ին արձանագրվել են նաև «Թմրամիջոցների դեմ պայքարի» անվան տակ իրականացվող գործողություններ, որոնք ուղեկցվել են ակումբների անձնակազմի և այցելուների նկատմամբ ֆիզիկական և հոգեբանական բռնու-

¹⁶ <https://freedomhouse.org/country/armenia/freedom-world/2025>

¹⁷ https://www.amnesty.org/en/wp-content/uploads/2025/04/POL1085152025ARMENIAN.pdf?fbclid=IwY2xjawKEb-tleHRuA2FibQlXmABicmlkETfwcTRiUG11N2VBMjVWVaWxQAR41WJMQT3G4hZkvFQl1zI6m93nyz946m6ifbvwrQINR2o94CzJ7I1sOaUEBVQ_aem_z9L3CAK0GmS7XArdR3mMDw

թյան դեպքերով: Մի շարք տուժածներ հայտնել են այդ գործողությունների ընթացքում իրենց դատավարական և նյութական իրավունքների լուրջ խախտումների մասին¹⁸:

2024թ. ապրիլի 17-ին արձանագրվել է ևս մեկ խնդրահարույց դեպք, երբ Ս. Վ.-ն ձերբակալվել է խուլիգանության մեղադրանքով՝ իշխող կուսակցությունից ընտրված ԱԺ պատգամավոր Հակոբ Ասլանյանի հետ ավտոբուսում տեղի ունեցած վիճաբանությունից հետո: Ինչպես տեղեկացրել են Ս. Վ.-ի փաստաբանները՝ վերջինիս դիմակավորված անձինք ծեծի են ենթարկել այն ժամանակ, երբ նրան երկու ոստիկան ուղեկցում էին դեպի ձերբակալման կենտրոն¹⁹: Դեպքի առթիվ «Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների» ՀԿ-ի հաղորդման հիման վրա քրեական գործ է հարուցվել, բայց մինչ օրս Ս. Վ.-ի նկատմամբ բռնության և կատարած չարաշահումների համար ոչ ոք պատասխանատվության չի ենթարկվել: Հատկանշական է, սակայն, որ Ս.Վ. մեղավոր է ճանաչվել խուլիգանության համար, սակայն նրան նվաստացնելու վերաբերյալ գործը դեռևս որևէ արդյունք չի տվել²⁰:

Երևանում 2024թ. մայիսի 27-ի ցույցի ընթացքում ՀՅԴ Դաշնակցության կենտրոնական գրասենյակի մոտ արձանագրվել է ևս մեկ խնդրահարույց դեպք, երբ ոստիկանությունն աննախադեպ բռնություն և ծեծ է կիրառել Ազգային ժողովի պատգամավոր Աշոտ Սիմոնյանի նկատմամբ: Թեպետ միջադեպը արձանագրվել և լայնորեն հրապարակվել է, ոստիկանական ոչ մի աշխատակից մինչ օրս քրեական պատասխանատվության չի ենթարկվել: Ավելին, ոստիկաններից մեկը, որի լիազորությունները միջադեպից հետո դադարեցվել էին, հետագայում վերականգնվել է ծառայության մեջ՝ առանց որևէ հետևանքի²¹:

ՀՀ-ում ոստիկանության անօրինական գործողություններն ու բռնարարք-

18 <https://epress.am/en/2024/11/28/yerevan-municipality-assists-police-in-raiding-another-techno-club.html>

<https://oc-media.org/an-attack-on-the-clubbing-community-popular-yerevan-club-raided-by-police/>;

19 Սև հագուստով դիմակավորված մի խումբ անձինք մոտեցել են մեքենային, Ս. Վ.-ին ուժով դուրս բերել ավտոմեքենայից, ծեծել ու վիրավորանքների ենթարկել: Փաստաբանները նաև հավելել են, որ այդ անձինք նրա տաբատը իջեցրել են և փայտե ձող են պահել ոտքերի արանքում՝ նվաստացման և սեռական ոտնձգության ակտի շրջանակում, երբ Ս. Վ.-ն ծնկած, ձեռնաշղթաներով պառկած է եղել գետնին:

20 <https://www.azatutyun.am/a/avtobousi-gortsov-samvel-varpanyani-nkatmamb-nshanakvel-e-750-hazar-dram-tougank-na-azatvel-e-patzhits/33384981.html>

21 <https://www.aravot.am/2024/05/27/1422015/>

ների ամեն մի դրսևորում համակարգային անպատժելության հետևանք են՝ ապահովված ինչպես քննչական և դատախազական մարմինների, այնպես էլ դատական համակարգի կողմից: Ինչպես 2024-ին, այնպես էլ նախորդ տարիներին, հավաքների մասնակիցների և դրանք լուսաբանող լրագրողների նկատմամբ կատարված որևէ բռնարարքի, ինչպես նաև հատուկ միջոցներ գործադրելու համար ոստիկանության որևէ ծառայող պատասխանատվության և պատժի չի ենթարկվել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- **ՀՀ ներքին գործերի նախարարությանը՝** հարգել խաղաղ ցույցի մասնակիցների իրավունքները, զերծ մնալ բռնություններից և այլ անօրինական ու անհամաչափ ուժի գործադրումից և նրանց արժանապատվությունը նվաստացնող այլ գործողություններից,
- ապահովել ցանկացած խաղաղ բնույթ ունեցող հավաքի ընթացքը և ապահովել հավաքի ընթացքում ձեռնարկված ցանկացած միջոցի իրավաչափության գնահատման պարտադիր կանոններ,
- **ՀՀ գլխավոր դատախազությանը և ՀՀ քննչական կոմիտեին՝** վատ վերաբերմունքի յուրաքանչյուր հաղորդման և հրապարակման դեպքով անհապաղ նախաձեռնել քրեական վարույթ, ապահովել արդյունավետ քննություն և մեղավորների պատասխանատվություն:
- **ՀՀ իշխանություններին՝** ապահովել իրավունքի գերակայության սկզբունքի իրականացումը Հայաստանի Հանրապետությունում և երաշխավորել մարդու իրավունքների նկատմամբ հարգանքը:

3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԱՌԱՋԸՆԹԱՅԸ ԵՎ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԸ

ՍՅՈՒՋԱՆՆԱ ՍՈՂՈՄՈՆՅԱՆ

*«Իրավաբանների հայկական ասոցիացիա»
ՀԿ-ի ծրագրերի համակարգող, ավագ իրավաբան*

Ձեկույցի սույն բաժինը ներկայացնում է Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) կոռուպցիայի դեմ պայքարի ոլորտում արձանագրված առաջընթացի և առկա մարտահրավերների համապարփակ վերլուծությունը:

ՀՀ-ում կոռուպցիայի դեմ պայքարի առաջիկա տարիների հակակոռուպցիոն քաղաքականության ուղղություններն ու առաջնահերթությունները նախատեսված են ՀՀ կառավարության 2021-2026թթ. ծրագրով²² և ՀՀ կառավարության 2023-ի հոկտեմբերի 26-ին N 1871-Լ որոշմամբ հաստատված Հակակոռուպցիոն ռազմավարությամբ և դրա իրականացման 2023-2026թթ. միջոցառումների ծրագրով²³ (Հակակոռուպցիոն ռազմավարություն):

Հարկ է նշել, որ Հայաստանում կոռուպցիայի կանխարգելման և հակազդման համակարգերի ինստիտուցիոնալ և օրենսդրական զարգացման ուղղությամբ վերջին տարիներին գրանցվել է որոշակի առաջընթաց, սակայն դրանք ուղեկցվել են գործնական արդյունավետության հետ կապված զգալի մարտահրավերներով: Հակակոռուպցիոն կրթության ոլորտը, չնայած զարգացման որոշակի ճանապարհի անցնելուն, դեռևս բախվում է համակարգային լուծումներ պահան-

22 ՀՀ կառավարության 2021-2026 թթ. ծրագիրը հասանելի է հետևյալ հղմամբ. <https://www.gov.am/files/docs/4586.pdf>

23 26.10.2023 թ. N 1871-Լ որոշումը հասանելի է հետևյալ հղմամբ. <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=184674>

Տես նաև ՀՀ արդարադատության նախարարության հրապարակած Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիթորինգի և գնահատման 2024 թ. հաշվետվությունը հետևյալ հղմամբ. <https://moj.am/storage/uploads/pdf>

ջող խնդիրների: Գործարար ոլորտում կոռուպցիայի կանխարգելման ուղղությամբ քայլերը թեև որոշակի առաջընթաց են արձանագրել, սակայն մի շարք անհրաժեշտ բարեփոխումներ դեռևս լիարժեք իրագործված չեն:

Ձեկույցի այս բաժնում մանրամասն ներկայացվում են կոռուպցիայի կանխարգելման, հակազդման, հակակոռուպցիոն կրթության և գործարար ոլորտում կոռուպցիայի դեմ պայքարի ուղղություններով արձանագրված հիմնական ձեռքբերումները, բացթողումներն ու առկա մարտահրավերները: Ոլորտների վերլուծությունը հիմնված է փաստական տվյալների, իրավական կարգավորումների և իրականացված գործնական միջոցառումների համակողմանի ուսումնասիրության վրա՝ նպատակ ունենալով բացահայտել կոռուպցիայի դեմ պայքարի համակարգը կատարելագործելու հեռանկարները:

Կոռուպցիայի կանխարգելման համակարգի ներկա վիճակը

Վերջին տարիներին Հայաստանում կոռուպցիայի կանխարգելման համակարգի ինստիտուցիոնալ և օրենսդրական զարգացման ուղղությամբ արձանագրվել է որոշակի առաջընթաց: Նախորդ տարվա ընթացքում Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը (ԿԿՀ) մշակել և ներդրել է թվային վիճակագրություն վարելու մեթոդաբանություն: Հայտարարագրման համակարգը զարգացնելու ուղղությամբ նույնպես ձեռնարկվել են որոշակի քայլեր՝ ներառյալ պաշտոնատար անձանց հայտարարագրման պարտականություն ունեցող շրջանակի ընդլայնումը: Կուսակցությունների ֆինանսավորման ոլորտում ևս առաջընթաց կա՝ կուսակցություններին արվող նվիրատվությունների, պետական ֆինանսավորման և հաշվետվությունների ներկայացման կարգավորումների բարելավման տեսքով:

Չնայած նշված զարգացումներին՝ կանխարգելիչ համակարգը դեռևս բախվում է մի շարք էական մարտահրավերների: ԿԿՀ-ի անկախության և արդյունավետության հարցը շարունակում է մնալ առանցքային:

ԿԿՀ անդամների ընտրության համար ստեղծված մրցութային խորհուրդն այս գործընթացի կարևորագույն բաղադրիչն է, որը անցկացնում է մրցույթ, կատարում է թեկնածուների ընտրություն և ներկայացնում Ազգային ժողովի

հաստատմանը: Սակայն, երբ Ազգային ժողովի մեծամասնությունը որոշում է չմասնակցել քվեարկությանը²⁴, խաթարվում է թափանցիկությունը, քանի որ ներկայացուցչական քննարկման ու բաց քվեարկության գործընթացը ձևականացվում է, այնինչ ավելի պատասխանատու վարքն անհրաժեշտ է թեկնածուներին մանրամասն և հանրայնորեն հասկանալի գնահատելու համար: Նման վարքագիծը նաև ստվերում է մրցութային խորհրդի կատարած աշխատանքը և թուլացնում հանրային վստահությունը ամբողջ ընտրական մեխանիզմի նկատմամբ:

Մրցութային խորհրդում հանրային վերահսկողության նպատակով ներկայումս մշակված օրենսդրական փոփոխությունների նախագծով նախատեսվում է խորհրդում քաղաքացիական հասարակական երկու կազմակերպությունների ներկայացուցիչների ներգրավում²⁵: Այս գործընթացում կարևոր է ապահովել ՔՀԿ-ների ներկայացուցիչների ընտրության բաց և իրական մրցութային գործընթացի թափանցիկությունը, օբյեկտիվությունն ու ապաքաղաքական լինելը: Այս նորմերը ենթադրում են բաց, արժանիքների վրա հիմնված մրցակցային գործընթաց, որտեղ որոշումները կայացվում են հստակ սահմանված չափանիշներով՝ զերծ մնալով հնարավոր փոխկապակցվածությունից, ինչը կարող է հերթական անգամ վտանգել հակակոռուպցիոն մարմինների անկախությունն և արդյունավետությունը:

Կանխարգելման ոլորտում խնդրահարույց կետերից է ԿԿՀ-ի կողմից հրապարակվող բարեվարքության խորհրդատվական եզրակացությունների գաղտնիության ռեժիմը: Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀՀԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի հակակոռուպցիոն ցանցը Հայաստանի 5-րդ փուլի գնահատման զեկույցում²⁶ դատական իշխանության անկախությունը, դատախազների և քննիչների նշանակման գործընթացը գնահատելիս արձանագրում է, որ ԿԿՀ-ի բարեվարքության ստուգման եզրակացությունների հրապարակումն նախատեսված չէ, միաժամանակ առաջարկում է, որ այդ եզրակացությունները

24 Տե՛ս օրինակ՝ ԿԿՀ անդամի թեկնածուների քննարկման ու քվեարկության ընթացքի մասին հետևյալ հղումներով. <https://iravaban.net/515101.html> , <https://www.hetq.am/hy/article/162658>

25 Նախագիծը հասանելի է հետևյալ հղմամբ. <https://www.e-draft.am/projects/7873/about>

26 ՏՀՀԿ-ն Հայաստանի 5-րդ փուլի գնահատման զեկույցը հասանելի է հետևյալ հղմամբ՝ https://www.oecd.org/en/publications/baseline-report-of-the-fifth-round-of-monitoring-of-anti-corruption-reforms-in-armenia_fb158bf9-en.html

ները դատական ընտրության որոշումների վրա պետք է ավելի մեծ ազդեցություն ունենան²⁷:

Հատկանշական է, որ նույն զեկույցը որպես մտահոգություն ներկայացնում է ԿԿՀ-ի բարեվարքության եզրակացությունների պատշաճ դիտարկման բացակայությունը, նշելով, որ Բարձրագույն դատական խորհուրդը մի շարք դեպքերում ընտրել և առաջարկել է այնպիսի թեկնածուների, որոնք ունեցել են ԿԿՀ-ի բացասական եզրակացություն կամ բարեվարքության մտահոգություններ առաջացնող եզրակացություն²⁸:

Այս համատեքստում չափազանց կարևոր է, որ բարեվարքության եզրակացությունը ունենա օրենսդրորեն երաշխավորված բարձր մակարդակի հրապարակայնություն: Սա կարևոր է ոչ միայն ԿԿՀ-ի՝ սեփական հաշվետվողականության և թափանցիկության ապահովման տեսանկյունից, այլև հանրային վստահության և հակակոռուպցիոն գործիքակազմի ամբողջական արդյունավետության համար: Սրան զուգահեռ անհրաժեշտ է վերանայել և հզորացնել բարեվարքության եզրակացությունների իրավական նշանակությունը, որոշումների կայացման վրա դրանց պարտադիր ազդեցությունը և դրանք անտեսելու հնարավոր իրավական հետևանքները:

Նվերները հաշվառելու համակարգի զարգացումը դեռևս էական մարտահրավեր է: Թեև ԿԿՀ-ն հայտնել է ռեեստր գործարկելու մասին, սակայն իրականությունն այլ է: Ներկայում հաշվառումն արվում է սոսկ Excel աղյուսակների միջոցով՝ առանց ժամանակակից ռեեստրին անհրաժեշտ որոնողական, դասակարգման և վերլուծական գործիքակազմի: Ֆինանսավորման բացակայության պատճառով համակարգի լիարժեք ներդրումը կանգ է առել, ինչը սահմանափակում է դրա արդյունավետությունը: Բացի դա՝ նվերների ընդունման, հաշվառման հարաբերությունները կարգավորելու նպատակով ընդունված իրավական ակտերը բարելավման կարիք ունեն, այդ թվում՝ նվերների արժեքը գնահատելու միասնական մեթոդաբանությունը, որը ներկայումս պաշտոնյաներին թույլ չի տալիս ինքնուրույն, առանց հստակ չափորոշիչների գնահատել նվերների արժեքը²⁹:

27 Տե՛ս ՏՀԶԿ-ն Հայաստանի 5-րդ փուլի գնահատման զեկույցը, էջ 99

28 Տե՛ս նույն տեղում, էջ 103

29 <https://iravaban.net/508396.html>

Կոռուպցիայի հակազդման ոլորտի իրավիճակը Հայաստանում

Հակակոռուպցիոն պայքարի ինստիտուցիոնալ համակարգում կարևորագույն դերակատարում ունի Հակակոռուպցիոն կոմիտեն, որի ստեղծումն ու կայացումը Հայաստանի հակակոռուպցիոն քաղաքականության զգալի ձեռքբերումն է: Կոմիտեի հաստիքների համալրում է տեղի ունեցել. նախորդ տարի օպերատիվ-հետախուզական գործառույթ իրականացնող 120 պաշտոններից համալրվել է 77-ը, իսկ ինքնավար 80 պաշտոններից՝ 71-ը: 2024-ին Հակակոռուպցիոն կոմիտեի ծառայողների թափուր հաստիքներում նշանակվել է օպերատիվ-հետախուզական գործառույթներ իրականացնող 26 թեկնածու, և 24 թեկնածու էլ՝ ինքնավար պաշտոններում:

Կադրային հագեցվածությանը զուգահեռ, սակայն, Հակակոռուպցիոն կոմիտեի անկախության հարցը դեռևս մնում է առանցքային խնդիր: ՏՀԶԿ-ի Հայաստանի 5-րդ փուլի գնահատման զեկույցն ընդգծել է Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի նշանակման և պաշտոնանկության հետ կապված խնդիրները: Մասնավորապես նշվում է, որ *Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավարի ընտրության ներկայիս համակարգը թույլ է տալիս կառավարությանը կայացնել հայեցողական որոշում՝ ընտրելով մրցույթի արդյունքում առաջարկված երեք թեկնածուներից մեկին՝ առանց որևէ պարտավորության ընտրել առավելագույն միավորներ հավաքած թեկնածուին: Սա նշանակում է, որ վերջնական որոշումը կարող է պայմանավորված լինել քաղաքական կամ այլ նկատառումով*³⁰:

Մտահոգիչ է նաև պաշտոնանկության հետ կապված օրենսդրական կարգավորումների անկատարությունը: ՏՀԶԿ զեկույցը Հակակոռուպցիոն մարմինների ղեկավարների նշանակմանը նվիրված 8.3 ցուցիչով հատուկ ընդգծում է, որ *«պաշտոնանկության հիմքերից որոշները հստակ ձևակերպված չեն»*³¹, *«քաղաքական գործունեությամբ զբաղվելու արգելքի խախտման» հիմքը*³² նույնպես հստակ չէ:

Բացի դրանից՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության համար ձևավորված մրցութային խորհրդի կազմավորման մեջ ԲՀԿ-ների ներգրավման տեսանկյունից նույնպես խնդիրներ կային՝ կապված նրանց հնարավոր շահերի քախման հետ³³:

30 Տե՛ս ՏՀԶԿ-ն Հայաստանի 5-րդ փուլի գնահատման զեկույցը, էջեր 139-140:

31 Տե՛ս ՏՀԶԿ-ն Հայաստանի 5-րդ փուլի գնահատման զեկույցը, էջ 140:

32 Տե՛ս նույն տեղում:

33 <https://iravaban.net/504623.html>

Հակակոռուպցիոն մասնագիտացած դատարանների ստեղծումը նույնպես կարևոր ինստիտուցիոնալ առաջընթաց է: Հակակոռուպցիոն դատարանների տնտեսագիտական գիտելիքներով համալրման ուղղությամբ արված քայլերը դեռևս չեն հասել իրենց նպատակին: Թեև տրամադրվել են համապատասխան հաստիքներ (Հակակոռուպցիոն դատարանին՝ երկու, Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանին՝ մեկ), բայց այդ հաստիքները դեռ համալրված չեն:

Կոռուպցիոն հանցագործությունների վիճակագրության միասնական համակարգ ներդնելու ուղղությամբ արվել են որոշակի քայլեր: Բարձր տեխնոլոգիաների և արդյունաբերության նախարարության օժանդակությամբ մշակվել է դատախազի աշխատանքի վիճակագրական տվյալների վերաբերյալ էլեկտրոնային վիճակագրության համակարգը և արդիականացվել են Գլխավոր դատախազության Հակակոռուպցիոն կոմիտեում մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողության վարչության վիճակագրություն վարելու մեխանիզմները: Այդուհանդերձ, միասնական վիճակագրական համակարգ դեռևս չկա, թեև Հակակոռուպցիոն ռազմավարության Գործողությունների ծրագրով նախատեսված էր (2024 թ.):

Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման ինստիտուտի կատարելագործման ուղղությամբ իրավիճակը նույնպես բավարար չէ: Թեև Գլխավոր դատախազությունը նշում է, որ ուսումնասիրել է Եվրոպայի խորհրդի փորձագետների խորհրդատվական կարծիքը, սակայն դեռ չեն վերանայվել կառավարող մարմնի մոդելը, բռնագանձված գույքի կառավարման մոդելը, քննչական և դատախազական մարմինների միջև տեղեկության փոխանակման հարթակը և կառավարման հանձնված ակտիվների շտեմարանի ստեղծումը: Այս գործողությունները պետք է կատարված լինեին դեռևս 2024-ին:

Այժմ նշված փոփոխությունները պետք է իրականացվեն 2025-ին, որոնց հիման վրա նախատեսված է մշակել իրավական ակտերի փոփոխություններ՝ հաշվի առնելով 2025-ի ապրիլի 16-ին ՀՀ սահմանադրական դատարանի կայացրած «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ որոշումը³⁴: Հակակոռուպցիոն ռազմավարությամբ սահմանված ժամկետներ

³⁴ 2025 թ. ապրիլի 16-ի ՀՀ սահմանադրական դատարանի «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի՝ Սահմանադրությանը համապատասխանության

րին համապատասխան՝ այս խումբ գործողությունների կատարման համար մնացել է ընդամենը 8 ամիս: Հարց է առաջանում, թե հնարավոր է արդյոք այդ ժամանակահատվածում իրականացնել նման ամբողջական և իրավական առումով անխոցելի բարեփոխումներ:

Որոշակի առաջընթաց է արձանագրվել կոռուպցիոն հանցագործություններով արգելադրված և բռնագրավված գույքը կառավարելու կառուցակարգերը բարելավելու ուղղությամբ: ՀՀ կառավարության 05.12.2024-ի 1922-Ն որոշմամբ սահմանվել են քրեական վարույթներով պետությանը, համայնքին և այլ կազմակերպություններին պատճառված վնասի վերականգնման նպատակով դրամական միջոցների վճարման միասնական կարգավորումներ: Սակայն ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթով պետությանն անցած գույքը կառավարելու համակարգային լուծումներ, ինչպես նշվեց վերևում, դեռևս ներդրված չեն:

Ազդարարման համակարգի զարգացման ուղղությամբ արձանագրվել է նշանակալի առաջընթաց: Արդարադատության նախարարության և «Իրավաբանների հայկական ասոցիացիա» ՀԿ-ի համատեղ ջանքով Երևանում և ՀՀ մարզերում իրականացվել են լայնածավալ վերապատրաստում և իրազեկման միջոցառումներ՝ ընդգրկելով **788** մասնակցի: Վերապատրաստման արդյունավետությունը գնահատելու համար ներդրվել է հատուկ գործիք, որի միջոցով չափվել է մասնակիցների գիտելիքների աճը: Առաջին փուլում, որին մասնակցել է **222** քաղաքացիական և համայնքային ծառայող, գիտելիքը գնահատելու արդյունքում գրանցվել է **35% աճ**, իսկ երկրորդ փուլում, որին մասնակցել են է **566** համայնքային ծառայող, ուսուցիչ, աշակերտ, ուսանող, դասախոս ու մասնավոր ոլորտի ներկայացուցիչներ, այդ ցուցանիշը կազմել է **55.64%**³⁵: Ի լրումն վերապատրաստումների՝ ազդարարման ընկալումների և վարքագծի փոփոխման, հանրային գիտակցությունը բարձրացնելու նպատակով վերոհիշյալ թեմաներով մշակվել են հատուկ ուսումնական և իրազեկման նյութեր³⁶:

հարցը որոշելու վերաբերյալ որոշումը հասանելի է հետևյալ հղմամբ. https://www.concourt.am/decision/decisions/6807363e2d4aa_SDV-1776.pdf

35 <https://www.moj.am/article/4024> , <https://www.moj.am/article/4030> , <https://www.moj.am/article/4217>

36 Ազդարարման համակարգի զարգացման, հանրային ընկալումներն ու վարքագիծը փոփոխելու վերաբերյալ կատարված աշխատանքներին և իրազեկման նյութերին կարող եք ծանոթանալ այստեղ. <https://armla.am/?s=%D5%A1%D5%A6%D5%A4%D5%A1%D6%80%D5%A1%D6%80>

Ազդարարման համակարգը իրավական առումով ամրապնդելու ուղղությամբ մշակվել են օրենսդրական նախագծեր, որոնք ներկայացվել են շահագրգիռ մարմիններին և գտնվում են լրամշակման փուլում: Մասնավորապես, մշակվել են «ՄԻՊ-ի մասին» սահմանադրական օրենքում, «Ազդարարման համակարգի մասին» օրենքում, «ԿԿՀ-ի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր:

Հակակոռուպցիոն կրթության ոլորտի վիճակը Հայաստանում

2021-ին ՀՀ կառավարության որոշմամբ արդեն հաստատվել էր «Նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշիչը», որում ներառված էին էթիկայի և բարեվարքության հետ կապված որոշ թեմաներ: 2023-2024թթ. ԿԿՀ-ն և Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (ԿԳՄՍՆ) այս ուղղությամբ արել են նոր քայլեր: Նախադպրոցական ուսումնական հաստատություններում մշակվել է 5-6 տարեկան երեխաների համար էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով կրթական ծրագիր, որը ներդրվել է հաստատություններում:

Մանկավարժներին վերապատրաստելու ուղղությամբ նույնպես արվել է աշխատանք: Նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժ աշխատողների համար մշակվել է էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստման ծրագիր. 2024-ին վերապատրաստվել է շուրջ 1500 մանկավարժ: Պիլոտային ծրագիրն իրականացվել է ՀՀ չորս մարզերի և Երևան քաղաքի 20 ՆՈՒՀ-երում, որոնցից 10-ը՝ գյուղական համայնքներում:

Հանրակրթության ոլորտում ԿԳՄՍՆ-ն մշակել է «Հասարակագիտություն» առարկայի էականորեն լրամշակված ծրագրեր, որոնցում ներառվել է հակակոռուպցիոն բաղադրիչ: Ծրագիրը ներդրվել է Տավուշի մարզի հանրակրթական ուսումնական հաստատություններում: Բացի այդ՝ ԿԿՀ-ն մշակել և ԿԳՄՍ նախարարություն է ներկայացրել «Հանրակրթությունում հակակոռուպցիոն կրթության ներդրման հայեցակարգի և մեթոդական ձեռնարկի» նախագիծը՝

հանրակրթական դպրոցների ուսուցիչների և հակակոռուպցիոն ու ժողովրդավարության խմբակներ վարողների համար:

Բարձրագույն կրթության ոլորտում ևս կա որոշակի առաջընթաց: Մի քանի պետական բուհերում, ինչպիսիք են՝ Երևանի պետական, Մ. Հերացու անվան պետական բժշկական, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական, Հայաստանի ազգային ագրարային համալսարաններում, մշակվել և ներդրվել են հակակոռուպցիոն բնագավառին առնչվող (կամ ընտրական, կամ պարտադիր) դասընթացներ: Բուհերի դասախոսական կազմի համար իրականացվել են էթիկայի, բարեվարքության և հակակոռուպցիոն թեմաներով վերապատրաստում:

Չնայած այս ձեռքբերումներին՝ հակակոռուպցիոն կրթության ոլորտում կան մի շարք մարտահրավերներ: Մասնավորապես, նախադպրոցական հաստատություններում և դպրոցներում հակակոռուպցիոն կրթական ծրագրերի գնահատման համակարգը թերի է: Բացակայում է գիտելիքների գնահատման համակարգի մշակման վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև տեղեկատվություն չկա ընտրված հաստատություններում գիտելիքների ելակետային գնահատման իրականացման մասին: Սա թույլ չի տալիս գնահատել կատարած աշխատանքի և ծրագրի արդյունավետությունը և դրանց՝ սովորողների կրթական մակարդակի վրա ազդեցությունը:

Բացի այդ՝ դպրոցներում հակակոռուպցիոն ակումբներ և բուհերում հակակոռուպցիոն լաբորատորիաներ (R&D) ստեղծելու ուղղությամբ առաջընթացը սահմանափակ է: Թեև այս ուղղությամբ ծրագիր է մշակվել և նախատեսվում է ներդնել 2025 թ-ին, սակայն ակտիվ գործող ակումբներ և լաբորատորիաներ դեռևս չեն ստեղծվել, թեև դրանց ստեղծումը նախատեսված էր 2024 թ-ին:

Մեկ այլ կարևոր խնդիր է հակակոռուպցիոն հանրային հաղորդակցության և իրազեկման գործողությունների ծրագրի և դրա գնահատման համակարգի բացակայությունը: Թեև ԿԿՀ-ն մշակել և հաստատել է հանրային կարծիքն ուսումնասիրելու մեթոդաբանություն, սակայն դեռևս հանրային հաղորդակցության և իրազեկման ծրագրեր չկան, ինչպես և՛ դրանց արդյունքները պարբերաբար գնահատելու համակարգ:

ՔՀԿ-ների դերը հակակոռուպցիոն կրթության և իրազեկման ոլորտում նույնպես լրիվ չի իրացվել:

Գործարար ոլորտում կոռուպցիայի կանխարգելման վիճակը Հայաստանում

Պետական և համայնքային մասնակցությամբ կազմակերպություններում կոռուպցիոն ռիսկերը գնահատելու և կառավարելու համակարգերի ներդրման ուղղությամբ ԿՀԿ-ը մշակել է համապատասխան մեթոդաբանություն և օրենսդրական փոփոխությունների փաթեթ, սակայն դա Կառավարությունը դեռևս չի հաստատել և չի ներկայացրել ԱԺ-ին:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակի ինստիտուցիոնալ կարողությունները հզորացնելուն միտված առաջընթացը սահմանափակ է: Թեպետ գործարարության ոլորտում իրավունքների պաշտպանության ստորաբաժանման հաստիքները համալրվել են երկու աշխատակցով, սակայն նախատեսված վերապատրաստումը չի իրականացվել, ինչը կարող է սահմանափակել նոր համալրված աշխատակազմի արդյունավետությունը:

Բիզնես համայնքի իրազեկվածության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ արվել են որոշակի գործողություններ: Կազմակերպվել է «Հայաստանի նոր Կորպորատիվ կառավարման կանոնագիրքը. կիրարկման և հարկադրանքի հարցեր» թեմայով աշխատաժողով, իրականացվել է Իրավաբանների հայկական ասոցիացիայի «Ազդարարի, Հայաստան» ծրագիրը և «Հակակոռուպցիոն իրազեկման շաբաթի» միջոցառումը: Արդարադատության նախարարության և Իրավաբանների հայկական ասոցիացիայի գործակցությամբ կազմակերպվել են ազդարարման, բարեվարքության և գործարար ոլորտին առնչվող կարգավորումների վերաբերյալ վերապատրաստում՝ ընդգրկելով **72 մասնավոր կազմակերպությունների 101 ներկայացուցիչի:**

Իրական շահառուների բացահայտման ինստիտուտի արդյունավետության ուղղությամբ արված աշխատանքը բավարար չէ: Թեև մշակվել են «Իրավաբանական անձանց պետական գրանցման, իրավաբանական անձանց առանձնացված ստորաբաժանումների, հիմնարկների և անհատ ձեռնարկատերերի

պետական հաշվառման մասին» օրենքում և հարակից օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին նախագծեր, սակայն դրանք դեռևս չեն հաստատվել: Ինչի արդյունքում, փաստացի չեն ներդրվել իրական շահառուների վերաբերյալ տեղեկությունների արժանահավատության ստուգման միասնական կառուցակարգերը, չեն մշակվել և հաստատվել իրավաբանական անձանց ռիսկայնության որոշման մեթոդաբանությունն ու տեխնիկական կանոնակարգերը:

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի և իրական շահառուների հայտարարագրման էլեկտրոնային համակարգը արդիականացնելու ուղղությամբ արված աշխատանքը նույնպես բավարար չէ: Օրենսդրական նախագծերի մշակման աշխատանքը չի հանգեցրել փաստացի համակարգային փոփոխությունների: Չեն ներդրվել տվյալները մշակելու, վերլուծելու և որոնելու գործառույթներ, չեն լուծվել համակարգի տեխնիկական խափանումների, օրենսդրությամբ պահանջվող տվյալների պարտադիր լրացման խնդիրները, չեն ներդրվել խելացի գործիքներ, չեն կիրառվել բաց տվյալների և բաց աղբյուրների ստանդարտները:

4

ՀԱՅԱՍՏԱՆ–ԵՄ ՎԻՋԱՆԵՐԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ. ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿ, ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՍՏԵՓԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ,
*«Գլոբալիզացիայի և տարածաշրջանային
համագործակցության
վերլուծական կենտրոն»
ՀԿ-ի նախագահ*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի և Եվրոպական Միության (ԵՄ) միջև վիզաների ազատականացման երկխոսությունը կարևոր քայլ է երկկողմ հարաբերությունների խորացման և ժողովուրդների միջև շփումների խթանման համար: Թեև զգալի առաջընթաց է գրանցվել՝ ներառյալ շարունակական ԵՄ փորձագիտական առաքելությունների այցերը և Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի (VLAP) սպասվող ներկայացումը, գործընթացը պահանջում է կողմերի շարունակական, կենտրոնացված ջանքեր:

Սույն բաժինն ամփոփ ներկայացնում է է Հայաստանի և ԵՄ-ի միջև վիզաների ազատականացման գործընթացը, դրա բացերը և առաջարկությունները: Մասնավորապես, այն քննարկում է գործընթացի ներկա կարգավիճակը, բացահայտում է հիմնական խնդիրներն ու բացերը, որոնք ՀՀ-ն պետք է հաղթահարի ԵՄ չափանիշներին համապատասխանելու համար, և ներկայացնում է հստակ առաջարկություններ ինչպես Հայաստանի կառավարության, այնպես էլ Եվրոպական Միության համար՝ այս կենսական նշանակության նպատակին արագ հասնելու նպատակով:

ՆԱԽԱՊԱՏՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԻՐԱՎԻՃԱԿ

Հայաստանը և ԵՄ-ն պաշտոնապես մեկնարկեցին վիզաների ազատականացման երկխոսությունը 2024 թ.՝ հիմնվելով 2014 թ-ից գործող Վիզաների դյուրացման համաձայնագրի վրա: Երկխոսության նպատակն է Հայաստանի քաղաքացիների համար Շենգենյան գոտի մուտք գործելու համար ստեղծել առանց վիզայի ռեժիմ (կարճաժամկետ՝ ցանկացած 180-օրյա ժամանակահատվածում մինչև 90 օր):

Հայաստանի քաղաքացիների համար Շենգենյան գոտի առանց վիզայի մուտքի ապահովումը էական օգուտներ կբերի Հայաստանի ժողովրդավարական զարգացմանը, տնտեսական աճին և բարեկեցությանը՝ միաժամանակ ուժեղացնելով ԵՄ ռազմավարական ներգրավվածությունը Հարավային Կովկասում:

ԵՄ-ի և Հայաստանի միջև վիզաների ազատականացման երկխոսությունը պաշտոնապես մեկնարկել է 2024 թ. սեպտեմբերին: Մեկնարկից հետո ԵՄ հաստատությունների և անդամ պետությունների փորձագիտական առաքելություններն այցելել են Երևան 2025 թ-ի փետրվարին և ապրիլին: Առաքելություններն իրականացրել են «բացերի վերլուծություն»՝ գնահատելու Հայաստանի պատրաստվածությունը և բացահայտելու առանց վիզայի ռեժիմին անցնելու համար անհրաժեշտ պայմանները: Այս փորձագիտական առաքելությունների արդյունքները կօգտագործվեն պայմանների ցանկը սահմանելու համար, որոնք էլ կդառնան Վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի (VLAP) հիմքը:

Հիմնվելով այլ երկրների փորձի վրա՝ Վիզաների ազատականացման գործողությունների ծրագիրը (VLAP) ուրվագծում է սպասվող բարեփոխումների շրջանակը չորս հիմնական ոլորտներում.

1. **Տվյալների պաշտպանություն և փաստաթղթերի անվտանգություն:**

Այս ոլորտում առաջարկվող բարեփոխումները ներառում են եվրոպական չափանիշներին համապատասխան կենսաչափական համակարգի ամբողջական ներդրում, ճամփորդական փաստաթղթեր տրամադրելու ընթացակարգերի ներդաշնակեցում և կեղծ փաստաթղթերի տրամադրումը կանխելու միջոցառումներ:

2. **Սահմանների կառավարում, միգրացիա և ապաստան:** Այս բարեփոխումներն ուղղված են սահմանային վերահսկողության ամրապնդմանը, ապաստանի գործող համակարգի ստեղծմանը և միգրացիոն մարմինների կարողությունների շարունակական բարձրացման ապահովմանը:
3. **Հասարակական կարգ և անվտանգություն:** Այս ոլորտի բարեփոխումները ներառում են կազմակերպված հանցավորության և կոռուպցիայի դեմ պայքարի միջոցառումներ, դատական իշխանության անկախության ամրապնդում և կողմերի իրավապահ մարմինների միջև ավելի մեծ համագործակցության խթանում:
4. **Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանություն:** Այս բարեփոխումները ներառում են մարդու իրավունքների պաշտպանության միջազգային չափանիշներին համապատասխանեցմանը, միգրանտների, ապաստան հայցողների և փախստականների իրավունքների ապահովմանը ուղղված միջոցառումներ՝ նաև տարբեր կոնվենցիաներ ստորագրելու միջոցով:

ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐ

Հայաստանը և Եվրոպական Միությունը զգալի ճանապարհ են անցել՝ զարգացնելով ժողովուրդների միջև կապերը: Հարկ է նշել, որ վիզաների երկխոսությունը մեկնարկել է. ԵՄ-ն 2025 թ. սկզբին Հայաստան է ուղարկել մի քանի փորձագիտական առաքելություններ՝ գնահատելու Հայաստանի պատրաստվածությունը և բացահայտելու բացերը հիմնական ոլորտներում: ԵՄ-ն գտնվում է Վիզաների ազատականացման գործողությունների ծրագիրը (VLAP) Հայաստանին ներկայացնելու վերջին փուլերում: Մյուս կողմից՝ Հայաստանը կսկսի կենսաչափական անձնագրեր և ID քարտեր տրամադրել 2026 թ. կեսերից: «IDEMIA Identity Security France և A.C.I. Technology S.à.r.l.» կոնսորցիումը շահել է Հայաստանի Հանրապետության կենսաչափական անձնագրեր և ID քարտեր տրամադրելու ենթակառուցվածքի և ծառայությունների մշակման պետություն-մասնավոր գործընկերության (ՊՄԳ) մրցույթը:

Նկատի առնելով երկխոսության գործընթացում առկա առաջընթացն ու դրա-

կան զարգացումները, այնուամենայնիվ՝ դեռևս կան մարտահրավերներ և լուծում պահանջող կարիքներ: Ստորև ներկայացված են մի քանի քաղաքականության առաջարկություններ.

- **Չնայած Վիզաների դյուրացման համաձայնագրով նախատեսված արտոնություններին՝** Հայաստանի քաղաքացիները վիզաների դիմումների գործընթացում շարունակում են բախվել դժվարությունների, հիմնականում պահանջարկի աճի պայմաններում հյուպատոսական ծառայությունների ծանրաբեռնվածության պատճառով:
- **Համապարփակ խտրականության դեմ պայքարի օրենքի ընդունում.** Արագացնել համապարփակ խտրականության դեմ պայքարի օրենքի ընդունման օրենսդրական գործընթացը, որն ընդգրկում է խտրականության բոլոր հիմքերը՝ համահունչ մարդու իրավունքների միջազգային չափանիշներին և Եվրոպայի Խորհրդի ու այլ միջազգային կառույցների առաջարկություններին:
- **Անձնական Տվյալների Պաշտպանության Գործակալության (ԱՏՊԳ) կարողությունների ընդլայնում.** Լրացուցիչ մարդկային, տեխնիկական և ֆինանսական ռեսուրսներ հատկացնել Անձնական Տվյալների Պաշտպանության Գործակալությանը (ԱՏՊԳ)՝ ուժեղացնելու նրա վերահսկողական, իրավական և խորհրդատվական կարողությունները: ԱՏՊԳ-ի ամրապնդումը կենսական նշանակություն ունի անձնական տվյալների պաշտպանության օրենսդրության հուսալի իրականացումն ապահովելու, տվյալների մշակման աճող բարդություններին լուծում տալու և Հայաստանի գործելակերպը տվյալների պաշտպանության եվրոպական բարձր չափանիշներին համապատասխանեցնելու համար, ինչը վիզաների ազատականացման հիմնական պահանջներից է:
- **Սահմանների ինտեգրված կառավարման և միգրացիայի վերահսկողության ամրապնդում.** Շարունակական վերապատրաստումների, սարքավորումների արդիականացման և ԵՄ անդամ երկրների հետ հետադիմուման համաձայնագրերի արդյունավետ իրականացման միջոցով էլ ավելի բարձրացնել սահմանային և միգրացիոն մարմինների կարողությունները: Հիմնական ուշադրությունը պետք է դարձնել տվյալների հու-

սալի փոխանակման, իրական ժամանակի տեղեկատվության տարածման և անկանոն միգրացիոն հոսքերը հասցեագրելու և ապաստանի ընթացակարգերի չարաշահումը կանխելու արդյունավետ մեխանիզմների վրա, որոնք էական մտահոգություններ են ԵՄ-ի համար:

- **Հանրային իրազեկման արշավ պատասխանատու ճանապարհորդության համար.** Հայաստանում սկսել և շարունակել համապարփակ հանրային իրազեկման արշավ՝ քաղաքացիներին տեղեկացնելու առանց վիզայի ճանապարհորդության հետ կապված պարտականությունների և կանոնների մասին (երբ որ այն տրամադրվի): Սա ներառում է կարճաժամկետ մնալու սահմանափակումների (90 օր ցանկացած 180-օրյա ժամանակահատվածում), ճանապարհորդության նպատակների և Շենգենյան կանոնները խախտելու հետևանքների վերաբերյալ հստակ հաղորդակցություն՝ դրանով իսկ նվազագույնի հասցնելով չարաշահումների ռիսկերն ու ապահովելով առանց վիզայի ռեժիմի կայունությունը:

-

5

ՀՈՈՄԻ ՍՏԱՏՈՒՏԻ ԻՄՊԼԵՄԵՆՏԱՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ՄՔԴ. ԿԱՅՈՒՆ ԱՌԱՋԸՆԹԱՅ ԱՆԴԱՄԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՀԻՑ Ի ՎԵՐ

ԳՈՒՐԳԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ,
*Նյուրնբերգի համալսարանի դասախոս,
միջազգային քրեական իրավունքի մասնագետ*

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

2023 թվականի հոկտեմբերին Հռոմի կանոնադրությունը վավերացնելուց ի վեր, Հայաստանը կայուն և գիտակցված առաջընթաց է գրանցել իր ներպետական իրավական շրջանակը և ինստիտուցիոնալ կառուցվածքը Միջազգային քրեական դատարանի չափորոշիչներին և պարտավորություններին համապատասխանեցնելու գործում: Այս վավերացումը նշանավորեց մի քանի տարի առաջ բռնած իրավական և քաղաքական ուղու տրամաբանական ավարտը: Հռոմի կանոնադրության հետ **համատեղելիությունը** հաստատող ՀՀ Սահմանադրական դատարանի որոշումից հետո, Ազգային ժողովը քվեարկեց պայմանագիրը վավերացնելու և ՄՔԴ-ի իրավագործությունը 2021 թվականի մայիսի 10-ից հետադարձ ուժով ընդունելու օգտին: Հայաստանը վավերացման մասին իր պաշտոնական հավաստման փաստաթուղթը հանձնեց 2023 թվականի նոյեմբերի 14-ին, և Կանոնադրությունը երկրի համար ուժի մեջ մտավ 2024 թվականի փետրվարի 1-ին: Կարճ ժամանակ անց Հաագայում տեղի ունեցավ **անդամակցության** պաշտոնական արարողություն, որտեղ ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանը հանդիպեց ՄՔԴ-ի ղեկավարությանը՝ ընդգծելով միջազգային քրեական արդարադատությանը Հայաստանի Հանրապետության լիակատար հանձնառությունը:

Հայաստանի Հանրապետության՝ ՄՔԴ-ին միանալու շարժառիթները և՛ իրավական, և՛ աշխարհաքաղաքական են: Որոշումը լայն շրջանակներում ընկալվել է որպես ռազմավարական քայլ՝ Ադրբեյջանի հետ հակամարտությունների, մասնավորապես՝ 2020 թվականի Լեռնային Ղարաբաղի երկրորդ պատերազմի ընթացքում և դրանից հետո կատարված ռազմական հանցագործությունների և մարդկության դեմ հանցագործությունների համար միջազգային պատասխանատվություն հայցելու ուղղությամբ: Հետագարժ ուժով ընդունելով ՄՔԴ-ի իրավագործությունը՝ Հայաստանը ստեղծեց իրավական հիմք՝ այդ համատեքստում կատարված միջազգային հանցագործությունների քննությունն ու դատական կարգով հետապնդումը թույլատրելու համար: Միևնույն ժամանակ, այս քայլն ազդարարեց Հայաստանի Հանրապետության արտաքին քաղաքականության վերադասավորումն ավելի լայն համատեքստում՝ ի ցույց դնելով բացառապես Ռուսաստանի գլխավորությամբ անվտանգային համակարգերից կախվածությունից հրաժարումը ի նպաստ եվրոպական և միջազգային իրավական հաստատությունների հետ ավելի մեծ ինտեգրման: Այս վերակողմնորոշումը, սակայն, զերծ չմնաց հակասականություններից. ռուս պաշտոնյաները սուր քննադատության ենթարկեցին Կանոնադրության վավերացումը, մասնավորապես՝ ՄՔԴ-ի կողմից Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինի ձերբակալման օրդերի լույսի ներքո: Սակայն, Հայաստանի իշխանությունները պարզաբանեցին, որ ՄՔԴ-ի հետ իրենց համագործակցությունը կենտրոնանալու է ադրբեյջանական ուժերի կողմից կատարված ենթադրյալ հանցագործությունների վրա:

ՕՐԵՆՄԻՐԱԿԱՆ ՆԱԽԱՁԵՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՋԱՐԳԱՅՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վավերացումից զատ Հայաստանը կոնկրետ քայլեր է ձեռնարկել՝ իր իրավական և ինստիտուցիոնալ համակարգերը Դատարանի հետ արդյունավետ համագործակցության համար նախապատրաստելու ուղղությամբ: Ամենակարևոր զարգացումներից մեկը 2022 թվականին Հայաստանի Հանրապետության նոր **Քրեական օրենսգրքի** ընդունումն էր, որը ներառում է ցեղասպանության, մարդկության դեմ հանցագործությունների և պատերազմական

հանցագործությունների սահմանումները՝ համաձայն Հոռմի կանոնադրության: Այս օրենսդրական բարեփոխումը հիմք հանդիսացավ հետագայում փոխլրացման սկզբունքով ներպետական հետապնդումների համար: Բացի այդ, ներկայումս Հայաստանի Հանրապետության կառավարությունը մշակում է ՄՔԴ-ի հետ **համագործակցության մասին օրենքի** նախագիծը, որը կարգավորելու է ձերբակալության, հանձնման, ապացույցների փոխանակման և դատական աջակցության այլ ձևերը: Չնայած օրենքի նախագիծն առաջին անգամ հանրությանն է ներկայացվել 2024 թվականի սկզբին, այն այնուհետև երկու վերանայում է անցել: ՄՔԴ-ի հետ համագործակցության մասին առանձին օրենք սահմանելու փոխարեն, ներկայիս մոտեցումը ՄՔԴ-ի հետ համագործակցությունը ինտեգրում է քրեական գործերով միջազգային համագործակցության ավելի լայն իրավական դաշտին՝ դրա մասին առանձին գլխով: Օրենսդրական իմաստով ռազմավարության այսպիսի փոփոխության հիմքում ընկած հիմնավորումը, ինչպես նաև օրենսդրական գործընթացի ընդհանուր ձգձգման պատճառը դեռևս անհասկանալի են: Չնայած Արդարադատության նախարարության հետ սերտ համագործակցությամբ «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ն ակտիվ ներգրավված է եղել օրենքի տեքստի մշակման գործում և զգալի ներդրում է ունեցել այն վերջնական տեսքի բերելու փուլում, նախագիծը դեռ պետք է ներկայացվի Ազգային ժողով: Ինչպես ընթացակարգային ժամանակացույցի, այնպես էլ Կառավարության մտադրությունների շուրջ հստակության շարունակական բացակայությունը մտահոգություններ է առաջացնում Հայաստանի Հանրապետության միջազգային պարտավորությունների կատարման ուղղությամբ քաղաքական կամքի և թափանցիկության վերաբերյալ:

Օրենսդրական գործողություններին զուգահեռ, քաղաքացիական հասարակությունը ներդրումներ է կատարել իր իրավաբանների կարողությունների զարգացման ուղղությամբ: Դատավորների, դատախազների, քննիչների և իրավապահ մարմինների աշխատակիցների համար մի շարք վերապատրաստման ծրագրեր և աշխատաժողովներ են կազմակերպվել՝ միջազգային քրեական իրավունքի և ՄՔԴ ընթացակարգերի վերաբերյալ նրանց իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով: Այս ջանքերում կենտրոնական դերակատարներից մեկը եղել է Երևանում գործող «Իրավունքի Եվրոպա միավորում» քաղաքա-

ցիական հասարակության կազմակերպությունը, որը վճռորոշ դեր է խաղացել ՄՔԴ-ին Հայաստանի անդամակցության խթանման և հետվավերացման գործընթացի բովանդակային և շարունակական կայունության հարցում:

ՄՔԴ-ին անդամակցության ընթացքում «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ն կամուրջ է հանդիսացել Հայաստանի Հանրապետության իշխանությունների, միջազգային կառույցների և քաղաքացիական հասարակության միջև: Նույնիսկ վավերացումից առաջ «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ն ակտիվորեն ներգրավված էր իրավական և հանրային շահերի պաշտպանության գործում՝ աշխատանք տանելով խորհրդարանական հանձնաժողովների հետ, հրապարակելով իրավական կարծիքներ և իր մասնակցությունը բերելով Դատարանին անդամակցության օգուտների և հետևանքների թեմայով հանրային բանավեճերին: Վավերացումից հետո «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ն սկսել է իրականացնել օժանդակության հատուկ ծրագիր, որի նպատակն է աջակցել Հայաստանի իշխանություններին հետվավերացման գործողությունների փուլում: Այս ծրագիրը, որը ֆինանսավորվում է Հայաստանում Նիդեռլանդների դեսպանատան կողմից, ուղղված է ինստիտուցիոնալ կարողությունների ամրապնդմանը և հայաստանյան իրավաբանական համայնքի անդամների և միջազգային փորձագետների միջև անմիջական շփումների խթանմանը:

«Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ի հատկապես ուշագրավ նախաձեռնությունը 2024 թվականի օգոստոսին Ծաղկաձորում անցկացված երկօրյա աշխատաժողովն էր, որը համախմբեց դատավորներին, դատախազներին, օրենսդիրներին և նախարարության պաշտոնատար անձանց՝ քննարկելու ՄՔԴ-ի հետ համագործակցության գործնական հայեցակետերը: Միջոցառմանը մասնակցում էին միջազգային ճանաչում ունեցող փորձագետներ, այդ թվում՝ ՄՔԴ-ի դատավոր Զոհաննա Քորները և Նյուրնբերգի ակադեմիայի դոկտոր Գուրգեն Պետրոսյանը: Մասնակիցներն ուսումնասիրեցին այնպիսի թեմաներ, ինչպիսիք են ձերբակալման ընթացակարգերը, փոխլրացականությունը, տուժողների դերը և ապացուցման չափորոշիչները: Այս աշխատաժողովը եկավ լրացնելու 2024 թվականի հունիս-հուլիս ամիսներին Նիդեռլանդներ կատարած ճանաչողական այցին, որի շրջանակներում ՀՀ պաշտոնատար անձանց պատվիրակությունն այցելել էր ՄՔԴ, Եվրաջասթ,

Կոսովոյի հարցերով մասնագիտացված պալատներ և Նիդեռլանդների դատական հաստատություններ: Այս շփումները հայաստանյան շահագրգիռ դերակատարներին հնարավորություն տվեցին անմիջական պատկերացում կազմել միջազգային քրեական արդարադատության հետ կապված լավագույն փորձի և դատավարական կառուցակարգերի մասին:

«Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ի ներգրավվածությունն ավելին է, քան տեխնիկական հարցերի շուրջ ուսուցումը: Որպես Հայաստանի Հանրապետությունում տարիներ շարունակ իրավունքի գերակայության և դատական անկախության ջատագով և իրավապաշտպան կազմակերպություն՝ «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ն նաև գործունեություն է ծավալել ՄՔԴ-ին անդամակցությունը ԵՄ-Հայաստան Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (CEPA) և Եվրոպայի խորհրդի գործողությունների ծրագրերով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորությունների ավելի լայն շրջանակին համապատասխանեցնելու նպատակով: ՄՔԴ-ի հետ համագործակցությունը որպես Հայաստանի ժողովրդավարական և իրավական զարգացման բաղադրիչ ձևակերպելով՝ «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ն օգնել է ամրապնդել գործընթացի օրինականությունը և երկարաժամկետ կայունությունը: Ավելին, այն մշտապես ընդգծել է հաշվետվողականության կարևորությունը ոչ միայն աշխարհաքաղաքական նպատակներով, այլ որպես սկզբունքային և ինստիտուցիոնալ բարեվարքության խնդիր:

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԶԵՌՆԱՐԿԸ

2024 թվականի վերջին «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ն հրապարակեց Միջազգային քրեական դատարանի (ՄՔԴ) հետ համագործակցության **համապարփակ ձեռնարկ՝** նշանակալից ներդրում ունենալով Հայաստանի անդամակցությանը հետևող կիրարկման գործողություններում: Այս ձեռնարկը գործնական ուղեցույց է երկրում իրավաբանության ոլորտի դերակատարների, այդ թվում՝ դատավորների, դատախազների, իրավապահ մարմինների աշխատակիցների և իրավախորհրդատուներ համար: Այն ուրվագծում է Դատարանի հետ համագործակցությունը կարգավորող ընթացակարգային և օրենսդրական շրջանակները:

Ձեռնարկն ընդգրկում է այնպիսի հիմնական հայեցակետեր, ինչպիսիք են ձերբակալման հրամանների կատարումը, ապացույցների փոխանակումը, մեղադրյալի իրավունքները, տուժողների մասնակցությունը և ազգային իշխանությունների դերը ՄՔԴ-ի մանդատի իրացմանը նպաստելու գործում: Այն նաև բացատրում է փոխլրացականության սկզբունքը և ազգային իրավագործությունների և դատարանի միջև պարտականությունների բաշխումը: Դրանով ձեռնարկն անդրադառնում է ՄՔԴ-ին անդամակցելու ամենակարևոր, բայց հաճախ անտեսված բաղադրիչներից մեկին՝ ներպետական հաստատությունների պատշաճ տեղեկացվածությունը և Դատարանի հետ արդյունավետորեն և օրինական կերպով համագործակցության պատրաստականությունը ապահովելուն:

Այս նախաձեռնությունն արտացոլում է «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ի ավելի լայն հանձնառությունը՝ կամրջելու միջազգային իրավական չափորոշիչները և ներպետական մակարդակում կիրարկման միջև բացը: Այն նաև օգնում է զարգացնել հաշվետվողականության մշակույթը Հայաստանի իրավական համակարգում և խթանում է երկրի կարողությունը՝ կատարելու Հռոմի կանոնադրության ներքո ստանձնած իր պարտավորությունները: Ձեռնարկն արդեն օգտագործվել է վերապատրաստման դասընթացներում, դրան հղումներ են արվում պետական կառույցների միջև իրավական քննարկումների ժամանակ՝ էլ ավելի ամրապնդելով դրա՝ որպես ՄՔԴ-ի հետ Հայաստանի զարգացող հարաբերությունների հիմնարար գործիքի արդիականությունը:

ՀՀ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԸ

Միջազգային մակարդակում Հայաստանը համագործակցել է ՄՔԴ-ի ղեկավար մարմինների և անդամ պետությունների հետ: Հայաստանի ներկայացուցիչները մասնակցել են Մասնակից պետությունների ասամբլեային, ինչպես նաև Դատարանի ղեկավարության հետ բարձր մակարդակի հանդիպումների և վերահաստատել միջազգային արդարադատությանը երկրի հանձնառությունը: 2024 թվականի դեկտեմբերին ԱԳ նախարար Միրզոյանը ելույթ ունեցավ Հաագայում Մասնակից պետությունների 23-րդ ասամբլեայում՝ կարևորելով Հայաստանի առաջընթացը և ամուր աջակցություն հայտնելով ՄՔԴ-ի՝

համաշխարհային մակարդակում պատասխանատվության ենթարկողի դերին: Արդարադատության նախարարությունը նաև մատնանշել է համագործակցության ուղիները պաշտոնականացնելու և ՄՔԴ-ի կողմից ներկայացվող պահանջներին վերաբերող ներքին ընթացակարգեր ստեղծելու ծրագրերը:

Ապագային ընդառաջ՝ Հայաստանը դեռևս բախվում է մի շարք մարտահրավերների՝ ՄՔԴ-ի առջև իր պարտավորություններն ամբողջությամբ իրականացնելու համար: Դրանցից գլխավորը համագործակցության մասին օրենքը վերջնական տեսքի բերելու և ընդունելու անհրաժեշտությունն է, որը հստակ իրավական հիմք կտրամադրի ներպետական հաստատություններին Դատարանի հետ փոխգործակցության համար: Մյուս կարևոր քայլը միջգերատեսչական համակարգման կառուցակարգերի ստեղծումը և դատական և գործադիր իշխանություններում ՄՔԴ համագործակցության համար պատասխանատուների նշանակումը կլինի: Միջազգային գործընկերների, այդ թվում՝ ԵՄ-ի, Եվրոպայի խորհրդի, Նիդեռլանդների և հենց ՄՔԴ-ի կողմից շարունակական աջակցությունը էական նշանակություն կունենա այս ձեռքբերումներն ամրապնդելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ամփոփելով՝ ՄՔԴ-ին անդամակցելուց հետո Հայաստանի բռնած ընթացքը բնութագրվել է ռազմավարական մտադրության, օրենսդրական բարեփոխումների և միջազգային արդարադատության կառուցակարգերին ակտիվ ներգրավվածության համադրությամբ: Քաղաքացիական հասարակությունը կենտրոնական դեր է խաղացել այս գործընթացում՝ ոչ միայն որպես իրավական և ինստիտուցիոնալ զարգացումների շարժիչ ուժ, այլև որպես հաշվետվողականության պահապան: «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ-ն, այլ կազմակերպությունների հետ միասին, հանդես է եկել որպես նպաստող և վերահսկող դերակատար՝ աշխատելով ապահովել Հայաստանի՝ միջազգային արդարադատությանը հանձնառության արտացոլումը գործնական կիրարկման փուլում:

Այնպիսի հաստատությունները, ինչպիսիք են «Ճշմարտության և արդարադատության կենտրոնը» և «Նյութաբերգյան սկզբունքների միջազգային ակադեմիան», զգալիորեն նպաստել են՝ միջազգային քրեական իրավունքի փորձագիտական կարողություններ բերելով Հայաստան: Համաժողովների,

փորձագիտական շփումների, հրապարակումների և կարողությունների զարգացման նախաձեռնությունների միջոցով նրանք նպաստել են հայ իրավաբանական համայնքի անդամների մոտ ՄՔԴ գործընթացների մասին ավելի խորը պատկերացումների ձևավորմանը: Միևնույն ժամանակ, տուժողների ներկայացուցչության վրա կենտրոնացող այլ կազմակերպություններ քայլեր են ձեռնարկել արդարադատության մատչելիությունն ապահովելու ուղղությամբ՝ ՄՔԴ դատախազի գրասենյակին ներկայացնելով բազմաթիվ հաղորդակցություններ, որոնք ընդգծում են տարածաշրջանային հակամարտությունների համատեքստում կատարված ենթադրյալ հանցագործությունները:

Քանի որ Հայաստանը շարունակում է ընթանալ այս ճանապարհով, Միջազգային քրեական դատարանի հետ նրա զարգացող համագործակցությունը կարող է ծառայել որպես արժեքավոր նախադեպ այլ հետխորհրդային պետությունների համար, որոնք ձգտում են հավասարակշռել ազգային ինքնիշխանությունը հաշվետվողականության և միջազգային իրավական նորմերի պահպանման հրամայականների հետ:

Այնուամենայնիվ, ցավալի է, որ Հայաստանը դեռևս պաշտոնական քայլեր չի ձեռնարկել Միջազգային քրեական դատարանի իրավագործությունը Լեռնային Ղարաբաղից հայերի տեղահանության կամ իր տարածքում ենթադրաբար կատարված պատերազմական հանցագործությունների վերաբերյալ ակտիվացնելու համար: Չնայած Դատարանի իրավագործությունը հետադարձ ուժով ընդունելուն և Հռոմի կանոնադրությանը միանալուն, այս կոնկրետ համատեքստերում կոնկրետ գործողությունների բացակայությունը շարունակում է զգալի բաց լինել միջազգային իրավական կառուցակարգերի միջոցով պատասխանատվության ապահովման ջանքերում:

Հայաստանի կողմից Կամպալայի փոփոխությունների վավերացումը և Միջազգային քրեական դատարանի վերանայման համաժողովներին Հայաստանի հետագա մասնակցությունը պետք է դիտարկել որպես միջազգային քրեական արդարադատության համակարգում նրա ավելի խորը ներգրավմանն ուղղված հաջորդ քայլը: Հաշվի առնելով Հայաստանի առջև ծառացած տարածաշրջանային անվտանգության մարտահրավերները, Միջազգային քրեական դատարանի շրջանակներում ագրեսիայի հանցագործության ըն-

դուռնումը ոչ միայն սկզբունքային, այլև ռազմավարական նշանակության հարց է: Այն ամրապնդում է Հայաստանի հանձնառությունը՝ պահպանելու միջազգային իրավունքը, կանխելու ուժի անօրինական կիրառումը և նպաստելու համաշխարհային խաղաղությանը և կայունությանը: Հաջորդ վերանայման համաժողովին ակտիվ մասնակցությունը Հայաստանին թույլ կտա որոշակի դերակատարում ունենալ ագրեսիայի հանցագործության զարգացող մեկնաբանությունների և կիրարկման գործընթացները ձևակերպելու հարցում: Այն նաև հնարավորություն կտա ամրապնդել դաշինքները այլ մասնակից պետությունների հետ և ավելի ուժեղացնել Հայաստանի դիրքերը կանոնների վրա հիմնված միջազգային կարգի համար պայքարող պետությունների համայնքում: Այս համատեքստում, Կամպալայի փոփոխությունների լիարժեք ընդունումը պետք է դիտարկել որպես անդամակցությանը հաջորդող փուլում Հայաստանի՝ ավելի լայն արտաքին քաղաքականության և իրավական ռազմավարության կենսական բաղադրիչ:

6

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԵՆ ԻԳԻԹՅԱՆ,

*Հայաստանի պեդոհիմնարկների,
տեղական ինքնակառավարման մարմինների աշխատողների
արհմիության կազմակերպական աշխատանքների
և արտաքին կապերի մասնագետ*

Ձեկույցում ամփոփված է ՀՀ - ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրով (այսուհետ՝ Համաձայնագիր կամ ՀԸԳՀ) նախատեսված աշխատանքային իրավունքին և զբաղվածության ու սոցիալ-տնտեսական քաղաքականությանը վերաբերող դրույթների կատարման ընթացքը, կատարման ենթակա պարտավորությունները, առկա խնդիրները, միջազգային իրավական փաստաթղթերին համապատասխանությունը և առհասարակ բարեփոխումների կարգավիճակը:

Ձեկույցը մեծ մասով հիմնված է ՀԸԳՀ 366-րդ հոդվածով ստեղծված Քաղհասարակության պլատֆորմի հրապարակած խորհրդատվական կարծիքների, հոդվածների ու զեկույցների վրա, ինչպես նաև՝ այդ հրապարակումներին հետևած զարգացումների: Արձանագրված են կոլեկտիվ աշխատանքային հարաբերություններում աշխատողների իրավունքների և դրանց խախտման վերաբերյալ խնդիրները, պետության կողմից համապատասխան քաղաքականության մշակման անհրաժեշտությունը՝ այդ թվում աշխատանքում ժողովրդավարության, առողջ և անվտանգ աշխատանքի և ՀԸԳՀ դրույթներին մոտարկման համատեքստում:

ՀԸԳՀ-Ն ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

2021 թ. մարտի 1-ին ուժի մեջ մտած ՀԸԳ Համաձայնագրով³⁷ սահմանված են տարբեր ոլորտներին՝ այդ թվում աշխատանքային ու սոցիալական իրավունքներին և հավասար հնարավորություններին վերաբերող շրջանակային դրույթներ: Բացի շրջանակային դրույթներից՝ ՀԸԳՀ-ով սահմանված է, որ ՀՀ-ն մինչև համապատասխան տարեթվերը պետք է օրենսդրությունը աստիճանաբար մոտարկի ԵՄ օրենսդրական ակտերին՝ հիմնականում ԵՄ Խորհրդի հրահանգներին, ինչպես նաև ԵՄ կանոնակարգերին: Ըստ Համաձայնագրի 15-րդ գլխի՝ ՀՀ-ն պարտավորվում է առաջխաղացնել ԱՄԿ Արժանապատիվ աշխատանքի օրակարգը, աշխատանքում առողջությունն ու անվտանգությունը, սոցիալական երկխոսությունը, գենդերային հավասարությունն ու խտրականության բացառումը, ընդլայնել սոցիալական համերաշխությունը, կրճատել ոչ ֆորմալ աշխատանքը, ընդլայնել սոցիալական գործընկերների մասնակցությունը քաղաքականության մշակման մեջ, խթանել սոցիալական երկխոսությունը, զարգացնել աշխատանքում առողջություն ու անվտանգությունը, կորպորատիվ սոցիալական պատասխանատվությունը: ՀԸԳՀՀԸԳՀ-ը նաև սահմանում է, որ ՀՀ-ն պարտավորվում է հարգել, խրախուսել, օրենքներում, գործելակերպում և ամբողջ տարածքում կիրառել աշխատանքի միջազգայնորեն ճանաչված հիմնարար ստանդարտներն այնպես, ինչպես որ դրանք ամրագրված են ԱՄԿ-ի հիմնարար կոնվենցիաներով և այդ կոնվենցիաների արձանագրություններով: Միաժամանակ, սահմանվում են ԵՄ հրահանգներ, որոնց ՀՀ-ն պետք է մոտարկի իր օրենսդրությունը: Դրանք ներառում են օրենսդրական կարգավորումներ՝ կապված ռասայական, էթնիկ, տարիքի, հիվանդության, հաշմանդամության, աշխատանքում, կրթության, սոցիալական պաշտպանվածության, միավորման ազատության և այլ ոլորտներում խտրականության բացառման, կանանց և տղամարդկանց հավասարությունը, աշխատողների աշխատանքային պայմանագրերում միջառք պայմանների և տվյալների մասին տեղեկատվության ներառմանը, սեփականատիրոջ փոփոխման ժամանակ հիմնարկի աշխատողների իրավունքների պահպանմանը, ժամկետային և ոչ լրիվ դրույթով աշխատողների

37 «ՀԸԳՀ-ի մասին» քաժին, <https://eu-armenia.am/>

միջև, ինչպես նաև մի շարք հատկանիշների հիմքով (այդ թվում՝ սեռական կողմնորոշման) աշխատանքում խտրականության բացառմանը, առևտրում և ծառայություններում սեռի հիմքով խտրականության բացառմանը, աշխատողների հետ խորհրդակցությանը, մայրության պաշտպանությանը, հաստիքների զանգվածային կրճատումներին և այլն:

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԸՆԹԱՑՔԸ ԵՎ

EU-ARMENIA ԱՌՅԱՆՑ ԳՈՐԾԻՔԸ

Բարեփոխումների ժամանակացույցը և ընթացքը

ԵՄ օրենսդրությանը մոտարկման համար սահմանված են հետևյալ պարտավորությունները.

Մինչև 2024 թվականը՝

- Ռասայական և էթնիկ խտրականության բացառում աշխատանքում, կրթության և սոցիալական պաշտպանվածության, միավորման ազատության և այլ համատեքստերում:
- Կանանց և տղամարդկանց հավասար իրավունքների ու հնարավորությունների ապահովում աշխատանքում, կրթության և սոցիալական պաշտպանվածության ոլորտներում, թոշակային տարիքի, միավորման ազատության և այլ համատեքստերում:
- Կանանց և տղամարդկանց համար հավասար պայմանների ապահովում սոցիալական պաշտպանության ոլորտում, այդ թվում՝ կապված տարիքի, հիվանդության, աշխատանքային պատահարների, հաշմանդամության հետ:

Վերը նշված բարեփոխումները կարելի է համարել ընդհանուր առմամբ կատարված՝ առնվազն շրջանակային մակարդակում, քանի որ աշխատանքային օրենսդրությամբ այդ կարգավորումները կամ ի սկզբանե սահմանված են եղել մինչև Համաձայնագրի ուժի մեջ մտնելը, կամ մինչև 2024 թ. ընդունվել են համապատասխան փոփոխություններ: Գործնականում, սակայն, դեռևս առկա են վարձատրության խզվածքի և գենդերային հիմքով խտրականության հետ կապված մի շարք խնդիրներ: Պետությունը պետք է մշակի չափորոշիչներ ու

ենթաօրենսդրական ակտեր, ինչպես նաև ուժեղացնի հսկողությունը, որպեսզի աշխատանքային հարաբերություններում և սոցիալական իրավունքի ոլորտում իրապես պահպանվեն կանանց և տղամարդկանց իրավահավասար պայմանները, ինչպես նաև բացառվի խտրականությունը:

Մինչև 2026 թվականը՝

- Աշխատանքային պայմանագրում գործատուի կողմից մի շարք տեղեկությունների ներառման (աշխատանքի պայմանների, գործատուի տվյալների ու վայրի, աշխատանքի նկարագրության, աշխատանքային հարաբերությունների մեկնարկի և ավարտի ամսաթվերի, ծանուցման եղանակների, աշխատավարձի և դրանից պահումների, եկամտի այլ կոմպոնենտների, սոցիալական վճարների ու կենսաթոշակային ֆոնդերի, առկայության դեպքում կոլեկտիվ պայմանագրերի մասին տեղեկությունների) պարտավորության ապահովում:
- Որոշակի ժամկետով աշխատանքային պայմանագրով և ոչ լրիվ դրույքով աշխատողների հանդեպ խտրականության բացառման ապահովում:

Վերոնշյալ բարեփոխումները մեծամասամբ նույնպես կարելի է գրեթե կատարված համարել՝ որոշ բացառություններով: Ընդ որում՝ այս բարեփոխումները ներդրվել են նաև 2023 թ. Աշխատանքային օրենսգրքում փոփոխությունների միջոցով:

Դեռևս բացակայող, բայց մինչև 2026 թ. վերջնաժամկետ ունեցող կարևորագույն պարտավորությունից կարելի է առանձնացնել գործատուների՝ աշխատողների հետ խորհրդակցելու պարտավորության ներդրումը օրենսդրական և ինստիտուցիոնալ մակարդակով (Եվրոպական Խորհրդարանի և Խորհրդի 2002/14/EC Հրահանգ): Մինչ այժմ բացակայում է հանրապետական մակարդակով սոցիալական երկխոսության (գործընկերության) համակարգը, իսկ կազմակերպությունների մակարդակով բացակայում է աշխատողների հետ խորհրդակցելու գործատուների պարտավորությունը: Մասնավորապես, թեև Աշխատանքային օրենսգրքով սահմանված է սոցիալական գործընկերությունը և նկարագրված են դրա մակարդակները, օրենսդրական կարգավորումներով

ապահովված չէ կառավարություն - գործատու - արհմիություն եռակողմ մարմնի ձևավորումն ու գործունեությունը, ինչպես նաև սոցիալական գործընկերների հետ քաղաքական որոշումներ կայացնելու կառավարության պարտավորությունը: Մինչդեռ, սոցիալական գործընկերների միջև խորհրդակցելու, կոլեկտիվ բանակցելու և տեղեկություն փոխանակելու պարտավորությունը ոչ միայն ՀԸԳՀ-ի, այլև Աշխատանքի միջազգային կազմակերպության կողմից վավերացված Կոնվենցիաների և դրանց կից Հանձնարարականների պահանջն է: Կառավարությունը չի տեղեկացրել, թե ինչ քայլեր է պատրաստվում ձեռնարկվել այս բարեփոխումները կյանքի կոչելու համար: 2023 թ. Աշխատանքային օրենսգրքում կատարված փոփոխությունների մշակման և քննարկման ժամանակ Կառավարությունը անտեսել է սոցիալական գործընկերության վերոնշյալ համակարգը ներդնելու և խորհրդակցության պարտավորությունը սահմանելու վերաբերյալ արհմիությունների ներկայացրած առաջարկները:

Համաձայնագրի մեկ այլ պահանջը **հակախտրականության համապարփակ քաղաքականության ներդրումն է**, այդ թվում՝ աշխատանքային ոլորտում: Արդարադատության նախարարությունը պատրաստվել է իրավահավասարության և հակախտրականության մասին օրենքի նախագիծ, բայց նախագծի առաջխաղացումը տարիներ շարունակ տարբեր պատճառներով տեղի չի ունենում³⁸: Ներկայումս այն շարունակվում է լրամշակվել և քննարկվել Ազգային ժողովում³⁹:

Թե՛ սոցիալական գործընկերության, թե՛ հակախտրականության քաղաքականության դեպքում հստակ հայտնի չէ՝ մինչև 2026 թ. գարուն իրատեսական է արդյոք ակնկալել այդ բարեփոխումները, թե ոչ:

Եվս մեկ բարեփոխում վերաբերում է **երիտասարդների և երեխաների աշխատանքի պաշտպանության քաղաքականությանը**:

Մինչև 2028 թվականը՝

- Զանգվածային կրճատումների վերաբերյալ եվրոպական ստանդարտների ներդրում, ինչը ներառում է զանգվածային/խմբային կրճատումներ

38 Armenia: New draft law on anti discrimination is now open to public discussion, CSO meter 39 http://www.parliament.am/news.php?cat_id=2&NewsID=20693

րի դեպքում գործատուի և արհմիությունների միջև բավարար ժամանակ առաջ պատշաճ խորհրդակցությունների անցկացումը, արհմիություններին անհրաժեշտ տեղեկությունների ու հաշվարկների տրամադրումը, ինչպես նաև կրճատումները մեղմելու ուղիների համատեղ փնտրումը: Ակնհայտ է, որ այս բարեփոխումն իրականացնելուց առաջ դեռևս պետք է իրականացնել առհասարակ սոցիալական երկխոսության պարտավորության ներդրումը;

- Աշխատաժամանակի եվրոպական Հրահանգի (Working Time Directive) դրույթներին ՀՀ օրենսդրության համապատասխանեցում: ՀՀ Աշխատանքային օրենսգրքի աշխատանքային ռեժիմների կարգավորումները մեծ մասամբ համապատասխանում են այս Հրահանգի պահանջներին, թեպետ գործնականում առկա են աշխատանքային պայմաններ, տեղեկություն տրամադրելու և վերահսկողության հետ կապված խնդիրներ:

Սակայն, բացի Համաձայնագրի վերոնշյալ պահանջներից հատկանշական է **առողջ և անվտանգ աշխատանքային պայմանների վերաբերյալ ոլորտային ու մասնագիտական համապարփակ կարգավորումներ ներդնելու** պահանջը: Մասնավորապես, Համաձայնագիրը նախատեսում է, ի թիվս առողջ և անվտանգ աշխատանքի վերաբերյալ ընդհանուր կարգավորումների, կարգավորումներ սահմանել աշխատանքի գործիքների, անհատական պաշտպանիչ միջոցների հետ կապված, շարժական կառուցապատման մարմինների, ասբեստի, քաղցկեղածին ու մուտագեն նյութերի հետ կապված, կենսաբանական ու քիմիական ազեմների, վիբրացիոն, օպտիկական ու ձայնային հարուցիչների հետ կապված, էկրանների հետ աշխատողների, ծովային/ջրային աշխատողների վերաբերյալ և այլն: Այնուամենայնիվ, Համաձայնագիրը այս բարեփոխումների կատարման համար վերջնաժամկետ չի սահմանել՝ թողնելով այն Գործընկերության խորհրդի որոշմանը: 2025 թ. դրությամբ, սակայն, այդ վերջնաժամկետը չի սահմանվել, չեն սահմանվել նաև առողջ և անվտանգ աշխատանքի հետ կապված բարեփոխումների ճանապարհային քարտեզներ:

eu-armenia.am առցանց գործիքը

Հայաստան - Եվրամիություն Քաղհասարակության պլատֆորմը 2023 թ-ին մշակվել է Համաձայնագրի կատարման ընթացքը պարբերաբար գնահատող ու պատկերող անկախ գործիք, որը տեղակայված է Պլատֆորմի eu-armenia.am վեբկայքում՝ «ՀԸԳՀ-ն պատկերավոր» բաժնում⁴⁰: Գործիքում ՀԸԳՀ Համաձայնագրով սահմանված տարբեր ոլորտների համար ներկայացված են պահանջվող բարեփոխումները մատչելի նկարագրությամբ՝ ըստ դրանց կատարման համար սահմանված վերջնաժամկետի հերթականության: Յուրաքանչյուր բարեփոխումն ուղեկցվում է պիտակով, որը ցույց է տալիս՝ այն արդեն կատարվել է, կատարման փուլում է, թե՞ դեռ կատարված չէ: Գործիքը նաև տոկոսային արտահայտմամբ պատկերում է ամեն ոլորտի կատարման քանակական գնահատականը: Այդ գնահատականի համար հիմք է ընդունվում Համաձայնագրով սահմանված դրույթների և մոտարկման ենթակա ԵՄ օրենսդրական ակտերի ընդհանուր քանակն ու ներդրված դրույթների քանակը: Ինչ վերաբերում է աշխատանքային ու սոցիալական իրավունքին՝ համաձայն առցանց գործիքի, Համաձայնագրի պահանջների շուրջ 12%-ը կարելի է համարել ներդրված: Դրույթների շուրջ 10%-ը կամ կատարման ընթացքում են, կամ Համաձայնագրի պահանջներին համապատասխանում են մասամբ: Միևնույն ժամանակ Համաձայնագրի պահանջների գերակշիռ մասը՝ շուրջ 78%-ը, դեռևս կատարված չէ:

Ստորև կանդրադառնանք առանձին ոլորտների գործնական և օրենսդրական խնդիրներին:

⁴⁰ eu-armenia.am, «ՀԸԳՀ-ն պատկերավոր»

ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ

ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԴԱՇՏԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԻԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՐԾՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2023 թ-ից աշխատանքային քաղաքականության մեջ ՀԸԳՀ-ի ներդրման հետ կապված շոշափելի փոփոխություն չի արձանագրվել: Ըստ Կառավարության ներկայացուցիչների տված տեղեկության՝ ՀԸԳՀ-ի զբաղվածության և սոցիալական քաղաքականության հետ կապված, ինչպես նաև աշխատանքի միջազգային ստանդարտների ներդրման հետ կապված բարեփոխումների համար առանձին հստակ պլաններ դեռ չկան:

ԳՈՐԾԱԴՈՒԼԻ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

Թեպետ Աշխատանքային օրենսգրքի 2023թ. փոփոխություններով գործադուլ կազմակերպելուն վերաբերող որոշ ընթացակարգերի պահանջները մի քիչ մեղմացվել էին, այնուամենայնիվ, օրինական գործադուլ հայտարարելու հնարավորությունը մնում է անիրատեսական, քանի որ պահանջում է չափազանց շատ նախապայմաններ՝ հակասելով Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Միավորման ազատության կոմիտեի որոշումներին ու սկզբունքներին⁴¹: ԱՄԿ միջազգային ստանդարտների տեսանկյունից՝ գործադուլի վերաբերյալ ներպետական կարգավորումները չափազանց խիստ են և սահմանափակում են աշխատողների հիմնարար իրավունքները: Միաժամանակ, խոչընդոտվում է նաև գործադուլի սահմանադրական իրավունքը: Օրենքով սահմանափակված է նաև ոլորտային կամ ազգային մակարդակում գործադուլներ հայտարարելու իրավունքը, քանի որ, մասնավորապես, սահմանված չէ դրանց հայտարարելու կարգը: Արհմիությունները նաև ոլորտային և (կամ) հանրապետական խնդիրներ լուծելու նպատակ հետապնդող գործադուլներ հայտարարելու հնարավորություն չունեն:

⁴¹ ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԳՈՐԾՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ, Խորհրդատվական կարծիք, ԵՄ-ՀՀ Քաղիասարակության պլատֆորմ

ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄ

«Արհեստակցական միությունների մասին» ՀՀ օրենքի կարգավորումները սահմանափակում են միջազգային նորմերով սահմանված միավորման ազատության սկզբունքներն աշխատողների համար: Այդպիսի կարգավորումներով աշխատողները չեն կարող ազատորեն որոշել, թե որ մակարդակում են միավորվելու: Օրենսդրությունը ֆիզիկական անձին հնարավորություն է տալիս անդամակցել միայն կազմակերպության մակարդակի արհմիությանը, իսկ ավելի խոշոր՝ ոլորտային կամ ազգային մակարդակի միավորմանը վերջինիս միավորումը հիմնված է կամավորության վրա: Այս հանգամանքն էլ որոշիչ է դառնում աշխատողի կողմից համապատասխան մակարդակում կամ ոլորտում միավորվելու հնարավորության համար: Աշխատանքային օրենսգիրքը նույնպես աշխատող է համարում քաղաքացիների, որոնք «աշխատանքային պայմանագրի հիման վրա գործատուի օգտին կատարում է որոշակի աշխատանք»:

Վերը նշված օրենքը առհասարակ սահմանափակում է նաև մի շարք աշխատողների միավորման ազատության իրավունքը: Այսպես, օրենքի ներկայիս դրույթներով սահմանափակված է ոչ ֆորմալ և ոչ-ավանդական (պլատֆորմային տնտեսություն, ինքնազբաղված, ֆրիլանս) աշխատանքներում ներգրավված աշխատողների միավորման ազատության իրավունքը, քանի որ օրենքի իմաստով նման կատեգորիայի անձինք աշխատող չեն համարվում: Օրինակ, Արհեստակցական միությունների մասին ՀՀ օրենքը աշխատողին դեռևս սահմանում է որպես «օրենքով աշխատելու իրավունք ունեցող ֆիզիկական անձ, որը աշխատանքային պայմանագրի հիման վրա աշխատանք է կատարում գործատուի մոտ», իսկ միավորվել կարող են գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող աշխատողները:

ՄԻԱՎՈՐՄԱՆ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՈՒՄԸ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ

Պետական կառավարման, ինչպես նաև տեղական ինքնակառավարման ոլորտներում գործատուների (տվյալ դեպքում՝ պետական բարձրաստիճան պաշտոնյաների և համայնքի ղեկավարների) կողմից արհմիությունների ազատ և անկախ գործունեությունը սահմանափակելը կամ արհմիությունների գոր-

ծունեության վրա ազդեցություն և ճնշում գործադրելու փորձերը շարունակում են համակարգային բնույթ կրել և նախորդ հրապարակված զեկույցից հետո այս բնագավառում առաջընթաց չի գրանցվել: Մասնավորապես, տարածված է պետական ու համայնքային մարմիններում գործատուների և գործատուների ներկայացուցիչների կողմից (նախարարությունների ղեկավար կազմ, քաղաքի վարչական շրջանների ղեկավարներ, համայնքների ղեկավարներ) ինքնաառաջադրումը որպես իրենց աշխատողներին միավորող արհմիությունների ղեկավար մարմինների անդամներ՝ այդպիսով ապահովելով արհմիության գործունեության վրա իրենց անմիջական ազդեցությունը: Նկարագրված երևույթը օրինաչափ չէ թե՛ ՀՀ օրենսդրության, և թե՛ ԱՄԿ միջազգային ստանդարտների տեսանկյունից: Գործատուի կամ պետության կողմից արհմիությունների գործունեությանը, վարչարարության և ներքին գործերին միջամտելը, ազդելը, ուղղորդելը, խոչընդոտելը, վերահսկողություն սահմանելը հակասում են միջազգային նորմերին և օրենսդրությանը⁴²: Այնուամենայնիվ խնդիրը լայն տարածում ունի մի շարք հանգամանքների պատճառով, այդ թվում՝ ոչ այնքան հստակ օրենսդրական կարգավորումների, տեսչական ինստիտուտների ոչ բավարար բանիմացության, գործատուի կողմից միջամտելու կամ ազդեցություն գործելու դեպքում այդ հանգամանքների դժվար ապացուցելիության, աշխատողների ու արհմիությունների խոցելիության: Նույնը վերաբերում է պետական և համայնքային ոլորտում ղեկավարության կողմից արհմիության ներքին վարչարարության վերահսկողության փորձերին:

Արհմիությունների գործունեությունը խոչընդոտելու մեկ այլ տարածված դրսևորում է գործատուի կողմից արհմիության անդամավճարների հավաքագրման գործընթացի միակողմանի կասեցումը, չնայած, որ հարկային գործակալի (գործատուի) կողմից արհմիության անդամավճարների գանձման կազմակերպումն ու գանձված գումարի արհմիության հաշվեհամարին փոխանցումը սահմանված է որպես արհմիության անքակտելի իրավունք. այն սահմանված է աշխատանքի միջազգային ստանդարտներով: Ներպետական օրենսդրությամբ այս իրավունքը ևս սահմանված է, թեպետ օրենսդրական ձևակերպումները որոշակիորեն թերի են, ինչը դրանք մեկնաբանելու տարընկալումներ է ստեղծում: Անդամավճարները գանձելու կասեցումը գործնականում բերում է

42 Միավորման ազատությունը ր սոցիալական երկխոսությունը, 2022թ զեկույց, Հայաստանի պետիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիություն (eu-armenia.am)

արհմիության գործունեության փաստացի կասեցման, ինչը կոպիտ խախտում է: Վերջին մի քանի տարում նմանատիպ խախտում է գրանցվել, օրինակ, Միասնական սոցիալական ծառայության ղեկավարության կողմից:

ՀԱՐԱՅԻՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ «ԳՐԱՆԱՅԻՆ» ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Միավորման ազատության իրավունքի սահմանափակման և խոչընդոտման դրսևորումներից է լայն տարածում գտած գործատուների «Գրպանային» արհմիությունները՝ հատկապես հանրային հատվածում⁴³: Գրպանային կամ «դեղին» է ընդունված պիտակավորել այն արհեստակցական կազմակերպությունները, որոնք միավորում են միայն կոնկրետ հիմնարկի աշխատողներին և գործում են ոլորտային կամ հանրապետական մակարդակի արհմիություններից առանձին: Գործնականում այսպիսի արհմիությունները գործում են գործատուի իշխանության ներքո և ծառայում են գործատուի ֆինանսական կարիքներին: «Գրպանային» պիտակն օգտագործվում է հետևյալ պատճառով: Արհմիությունների հիմնական նպատակը, գործադուրը չհաշված, կոլեկտիվ բանակցություն ու խորհրդակցությունն է: Եթե կազմակերպության մակարդակի արհմիությունը գործում է արհմիութենական ոլորտային կամ ազգային շարժումից անկախ, ապա այդպիսի արհմիության անդամները սկզբունքորեն զրկված են ոլորտային կամ ազգային մակարդակներում բանակցելու և խորհրդակցելու իրավունքից: Ինչ վերաբերում է կազմակերպության մակարդակում անմիջական գործատուի հետ կոլեկտիվ բանակցությանը, ապա հայտնի չէ կոլեկտիվ բանակցելու և իմաստալից կոլեկտիվ պայմանագիր կնքելու որևէ փորձ:

Այսպիսով, նման արհմիության հիմնադրումը և գործունեությունը ակնհայտորեն այլ շահեր է հետապնդում և արհմիութենական գործունեության հետ կապ չունի: Առավել ևս, որ նման դեպքերի գերակշիռ մասում արհմիության ղեկավար մարմնում ներկայացված են գործատուի ներկայացուցիչները: Փաստորեն, տեղի է ունենում ԱՄԿ «Կազմակերպվելու և կոլեկտիվ բանակցելու իրավունքի մասին» թիվ 98 կոնվենցիայի հոդված 2-ի կոպիտ խախտում և այդ խախտումը տեղի է ունենում հենց պետական և համայնքային ոլորտներում:

⁴³ Ա. Իգիթյան, Ա. Բարիկյան, Տ. Նազարեթյան, Միավորման ազատությունը և սոցիալական գործընկերությունը Հայաստանի Հանրապետությունում – Խորհրդատվական կարծիք (հասանելի է eu-armenia.am վեբ կայքում)

Առավել հատկանշական է, որ «դեղին» արհմիություններ գործում են ընդհուպ այնպիսի հիմնարկներում, ինչպիսիք են Արդարադատության նախարարությունը և Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինը: Այսինքն, աշխատանքային հիմնարար իրավունքներն ու ՀՀ միջազգային պարտավորություններով սահմանված ստանդարտները խախտում են նաև այն մարմինները, որոնց լիազորություններում է այդ իրավունքների պաշտպանությունն ու օրենքի գերակայության ապահովումը: Պետությունն ուղղակիորեն չի ապահովում աշխատողների ներկայացուցիչների օրենսդրորեն ամրագրված անկախության սկզբունքը: Միաժամանակ, Հայաստանի պետական և համայնքային կառավարման մարմինների աշխատողներին միավորող ճյուղային հանրապետական արհմիության կողմից տրամադրված տվյալների համաձայն՝ հանրապետական արհմիությանն անդամակցող արհեստակցական կազմակերպությունների գրեթե կեսը ամեն տարի բախվում է գործատուների կողմից վերը նկարագրված խոչընդոտների ու միջամտությունների այս կամ այն տեսակին:

Սույն զեկույցում նկարագրված խնդիրներն արտացոլվում են նաև աշխատողների իրավունքների հետ կապված իրավիճակը գնահատող և Արհմիությունների միջազգային կոնֆեդերացիայի (ITUC) կողմից հրապարակվող Global Rights Index տարեկան զեկույցում⁴⁴, որտեղ Հայաստանը դասվում է «աշխատանքային իրավունքի կանոնավոր խախտումներ» դասակարգմամբ պետությունների շարքին: ՀՀ-ի այս դասակարգումը և 2022-ի զեկույցում դիրքի վատթարացումը⁴⁵ պայմանավորված է այդ թվում պետական համակարգում գործող «գրպանային» արհմիություններով և պետական գերատեսչությունների ղեկավարների կողմից արհմիությունների գործունեության վրա ազդելու, միջամտելու և խոչընդոտելու հանգամանքներով: Վերջին 3 տարում ՀՀ-ի դիրքերը չեն բարելավվել: ՀՀ-ում աշխատանքային իրավունքի հետ կապված խնդիրների համատեքստում հեղինակավոր զեկույցն անդրադառնում է նաև գործադուլի իրավունքն իրացնելու սահմանափակմանը, միավորման ազատության ու կազմակերպման իրավունքի վերաբերյալ չափազանց կարգավորող ներպետական օրենսդրությանը, քաղաքացիական ծառայողների համար ոլորտային մակարդակում կոլեկտիվ բանակցելու անհնարինությանը և այլն⁴⁶: Ամենամյա Global Rights Index զեկույցները հրապարակվում են հունիս ամսին,

44 https://www.ituc-csi.org/IMG/pdf/2024_ituc_global_rights_index_en.pdf

45 <https://www.ituc-csi.org/ituc-global-rights-index-2022>

46 https://www.ituc-csi.org/spip.php?page=legal_info&cc=ARM&lang=en

իսկ դրանցում արձանագրված խախտումները ներկայացվում են նաև ԱՄԿ ամենամյա Աշխատանքի միջազգային կոնֆերանսին:

ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ

Արհմիությունները որոշակի դժվարությունների են հանդիպում պետական գրանցման և դրա հետ կապված գործընթացում: Յուրաքանչյուր կազմակերպության մակարդակի արհմիությունը (արհեստակցական կազմակերպությունը), անկախ դրա չափսից, պարտավոր է գրանցվել որպես իրավաբանական անձ: Համաձայն ԱՄԿ Միավորման ազատության կոմիտեի, որը լիազորված է մեկնաբանել Միավորման ազատության մասին հիմնարար Կոնվենցիայի դրույթներն ու Կոնվենցիային համապատասխանության մասին որոշումներ ընդունել, արհմիությունների պետական գրանցման գործընթացը պետք է կրի ձևական բնույթ, ինչպես նաև գործընթացը չպիտի լինի ծախսատար և ժամանակատար, քանի որ այդ դեպքում սահմանափակվում է միավորման ազատությունը լիաժեք իրացնելու իրավունքը (ԱՄԿ Միավորման ազատության կոմիտեի որոշումների ժողովածու, վերջին էլեկտրոնային հրատարակություն, bit.ly/e-compilation, կետեր՝ 427, 430, 448, 463, 464): Չնայած դրան՝ գործնականում արհմիություններ գրանցելիս կամ փոփոխություններ անելու ժամանակ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունը թղթաբանական խիստ և հաճախ անհարկի ստանդարտներ է կիրառում: Մասնավորապես, արհմիությունների ժողովների արձանագրություններում և կանոնադրություններում ձևակերպումների, օգտագործվող եզրույթների ու շարադրական ձևերի հետ կապված՝ գործակալությունը որոշակի կամայական պահանջներ է դնում՝ մի քանի անգամ վերադարձնելով փաստաթղթերը՝ ուղղումների, մինչև որ տեղի է ունենում գրանցումը: Ընդ որում՝ նման պահանջները որևէ կերպ կանոնակարգված չեն և ավելի շատ արտացոլում են գործակալության ներքին քաղաքականությունները, այնինչ համաձայն միջազգային նորմերի՝ արհմիություններն իրենք պետք է որոշեն իրենց ներքին վարչարարությունը: Ի տարբերություն շահույթ հետապնդող ընկերությունների գրանցման՝ արհմիությունների գրանցումը կամ փոփոխությունների գրանցումը տևում է 10 աշխատանքային օր և պահանջում 10 000 ՀՀ դրամ

պետական տուրք: Աշխատավարձով աշխատողներից բաղկացած ինքնաֆինանսավորող անդամակցային կառույցի համար սա կարող է զգալի գումար լինել: Արհմիությունների գրանցումը, դրա կանոնադրության կամ ղեկավարի փոփոխությունների գրանցումը դեռևս հնարավոր չէ կատարել թվայնացված եղանակով, այնինչ պետական ռեգիստրի գործակալությունում ծանրաբեռնվածության պատճառով նշված գործառույթների համար փաստաթղթերի հանձնումը տևում է չափազանց երկար: Միջինում հերթում սպասելու ժամանակը կազմում է 80-ից 150 րոպե⁴⁷:

Արհմիությունների վրա լրացուցիչ վարչարարական և ֆինանսական բեռ է ստեղծել նաև իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրեր ներկայացնելու պահանջը, ինչը, սակայն, արհմիության դեպքում անիմաստ է: Փաստորեն, պետական ռեգիստրում արդեն իսկ գրանցված արհմիության նախագահի տվյալները մեկ անգամ էլ ներկայացվում է որպես իրական շահառուի տվյալներ՝ արհմիությունների համար ստեղծելով անիմաստ վարչարարություն և ֆինանսական ծախս, ինչպես նաև լրացուցիչ վարչարարական և ռեսուրսային բեռ՝ պետական ապարատի համար: Արհմիությունների դեպքում, համաձայն ՀՀ օրենսդրության, իրական շահառուն միշտ արհմիության նախագահն է՝ առանց բացառությունների, իսկ նախագահի տվյալներն արդեն գրանցվում են պետական ռեգիստրում նրա ընտրությունից հետո: Այսպիսով, տեղի է ունենում կրկնակի վարչարարություն, իսկ արդյունքում արհմիությունների ղեկավարների փոփոխության պետական գրանցումը գործնականում արդեն արժենում է 20 000 ՀՀ դրամ:

47 Չափված է ՀՀ արդարադատության նախարարության Հանրային ծառայությունների միասնական գրասենյակում 2024-2025թթ ընթացքում շուրջ 12 այցելություններով՝ Պետական ռեգիստրի գործակալության գործառույթների համար հերթի սպասելաժամանակի միջին ժամանակահատվածի հիման վրա

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԵՐԿԻՈՍՈՒԹՅԱՆ (ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ) ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Սոցիալական երկխոսության սկզբունքը ժողովրդավարության և արդյունավետ պետական կառավարման հիմնաքարերից է, ընդ որում, համաձայն Աշխատանքի միջազգային կազմակերպության սահմանման⁴⁸՝ սոցիալական երկխոսությունը տնտեսական և սոցիալական քաղաքականությանը վերաբերող ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցերի շուրջ կառավարությունների, գործատուների և աշխատողների ներկայացուցիչների միջև ամեն տեսակի բանակցությունների, խորհրդակցությունների և տեղեկատվության փոխանակման իրականացումն է։ Սոցիալական երկխոսության (ՀՀ աշխատանքային օրենսգրքում օգտագործվում է «սոցիալական գործընկերություն» եզրույթը) սկզբունքն ամրագրված է ԱՄԿ կոնվենցիաներով, ՄԱԿ-ի Արժանապատիվ աշխատանքի օրակարգով, ՀՀ – ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության Համաձայնագրի Գլուխ 15-ով։ Քաղաքականություն մշակելիս սոցիալական գործընկերների հետ խորհրդատվություն անցկացնելու սկզբունքն ամրագրված է նաև ԱՄԿ «Ազգային և ճյուղային մակարդակներում խորհրդատվության մասին» թիվ 113 Հանձնարարականում։ Ազգային մակարդակում սոցիալական երկխոսության սկզբունքը ենթադրում է մի շարք ոլորտների հետ կապված նորմատիվ իրավական ակտերի մշակման և հրապարակման ընթացքում սոցիալական գործընկերների հետ եռակողմ ֆորմատով քննարկումների, խորհրդակցությունների, բանակցությունների ապահովում։ Այդ նպատակով, օրինակ, եվրոպական և մի շարք այլ պետություններում ստեղծված են համապատասխան լիազորություններով և նպատակներով եռակողմ հանձնաժողովներ կամ խորհուրդներ⁴⁹։ Այդ եռակողմ մարմիններում հավասարապես ներկայացված են կառավարության, ինչպես նաև ազգային մակարդակի գործատուների ու արհմիությունների ներկայացուցիչներ։ Կազմակերպության մակարդակում արհմիության և գործատուի միջև կոլեկ-

48 Social dialogue and tripartism. <https://www.ilo.org/topics-and-sectors/social-dialogue-and-tripartism>

49 Challenges and opportunities for social dialogue and tripartism, European Union Presidency conference summary Luxembourg: Office for Official Publications of the European Communities 2003

տիվ բանակցելու իրավունքը սահմանված է ԱՄԿ թիվ 98 հիմնարար կոնվենցիայով: Չնայած վերոնշյալին՝ պետությունը ազգային և կազմակերպության մակարդակներում դեռևս չի ապահովում սոցիալական գործընկերների երկխոսության սկզբունքը ոչ ինստիտուցիոնալ, և ոչ գործնական առումով: Աշխատողների սոցիալական, տնտեսական ու այլ իրավունքների վրա անմիջական ազդեցություն ունեցող իրավական ակտերը մեծամասամբ ընդունվում են ոչ միայն առանց եռակողմ սոցիալական երկխոսության, այլև՝ առանց պատշաճ հանրային քննարկման: Ավելին՝ սոցիալական երկխոսության եռակողմ հանձնաժողով գոյություն չունի: Կառավարության, Գործատուների հանրապետական միության և Արհմիությունների կոնֆեդերացիայի միջև վերջին 14 տարվա ընթացքում մի քանի անգամ կնքվել են Հանրապետական կոլեկտիվ պայմանագրեր, որոնցով սահմանվել է նման հանձնաժողով: Նման կոլեկտիվ պայմանագրերը, սակայն, ժամկետային են և հետագա նոր պայմանագրերի կնքումը կախված է իշխանությունների քաղաքական կամքից: Այդպիսով, եռակողմ խորհրդակցային-բանակցային մարմնի բուն առկայությունն ու սոցիալական գործընկերների միջև երկխոսության ինստիտուտն ուղղակիորեն կախված է հանրապետական եռակողմ համաձայնագրերի առկայությունից, այլ ոչ թե սահմանված է օրենքով: Կազմակերպության մակարդակում պետությունը ևս չի ապահովում արհմիության բանակցելու իրավունքը, քանի որ գործատուի համար որևէ պարտավորություն ստեղծված չէ արհմիության հետ բանակցելու համար: Առանձին անդրադարձի կարիք ունեն նաև պետական աշխատողները, առավելապես՝ քաղաքացիական ծառայողները, քանի որ տվյալ դեպքում գործատուն կառավարությունն է⁵⁰: Քաղաքացիական ծառայողների համար ճյուղային մակարդակով կոլեկտիվ բանակցելու իրավունքն ապահովելու համար պետությունը պետք է սահմանի մի մարմին, որը լիազորված կլինի բանակցել քաղաքացիական ծառայողներին միավորող ճյուղային արհմիության հետ: Մինչև օրս, սակայն, նման մարմին չի սահմանվել, և ուրեմն քաղաքացիական ծառայողների կոլեկտիվ բանակցելու իրավունքն ապահովված չէ:

50 Social Dialogue in the Public Sectors of the EU Member States: An Analysis of Different Models at the Level of the Central Public Administration, European Institute of Public Administration Maastricht

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Առողջ և անվտանգ աշխատանք, տեսչական վերահսկողություն

Առողջ և անվտանգ աշխատանքը մարդու հիմնարար իրավունքներից է, որը ամրագրված է ՀՀ Սահմանադրությամբ (82-րդ հոդված), ՀՀ աշխատանքային օրենսգրքով և միջազգային փաստաթղթերով՝ հատկապես ԱՄԿ թիվ 155 և 187 կոնվենցիաներով, ինչպես նաև Համաձայնագրում ընդգրկված մի քանի տասնյակ ԵՄ Հրահանգներին, որոնց ներդրման վերջնաժամկետներն այդպես էլ չեն սահմանվել: Չնայած իրավական այս հիմքերին՝ առկա են մի շարք լուրջ համակարգային խնդիրներ, որոնք խոչընդոտում են այս իրավունքի լիարժեք իրագործմանը⁵¹: Այդ թվում՝

- **Թերի օրենսդրական դաշտ:** Բացակայում է նորմատիվ իրավական ակտ, որը կընդգրկի առողջ և անվտանգ աշխատանքի ապահովման քաղաքականությունը, համապարփակ կարգավորումները և չափանիշները:
- **Անբավարար վերահսկողություն:** Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի լիազորությունները խիստ սահմանափակ են, իսկ դրա արդյունավետությունը՝ անբավարար⁵²: Չնայած 2021 թ-ն տեսչական մարմնի որոշ լիազորությունների վերականգնումը՝ այն չունի հսկողության լիազորություն և կատարում է միայն վերահսկողության գործառույթ, այն էլ՝ ոչ լիարժեք, քանի որ կան օրենսդրական զգալի սահմանափակումներ: Օրինակ՝ վարչական վարույթ կարող է նախաձեռնվել միայն կամ գրավոր, անձնավորված դիմումի առկայության դեպքում կամ էլ՝ ըստ ստուգումների տարեկան պլանի: Օրինախախտումների դեպքում տեսչական մարմինը միջոցներ ձեռնարկելու այլ միջոցներ չունի: Ներկա օրենսդրական կարգավորումները, փաստորեն, շարունակում են տապալել տեսչական ինստիտուտը՝ տեսչական գործառույթը դարձնելով կցկտուր, անարդյունավետ և սահմանափակ: Օրենքի խախտումների մասին դիմումներ

51 Ա. Բարիկյան, Տ. Նազարեթյան, ԱՌՈՂՋ ԵՎ ԱՆՎՏԱՆԳ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ ՈՒՆԵՆԱԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄՈՏԱՐԿՈՒՄԸ «ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԵՎ ԸՆԴՀԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ» ԴՐՈՒՅԹՆԵՐԻՆ, Խորհրդատվական կարծիք (իրապարակված է eu-armenia.am կայքում)

52 <https://arhmiutyun.org/2024/08/27/health-and-labor-inspection-body-is-in-dissaray/>

ներկայացնելու դեպքում էլ վարչական վարույթի ընթացակարգը արհեստականորեն ցածրացնում է խախտումները լիարժեք բացահայտելու հավանականությունը: Տեսչական մարմինը, մասնավորապես, պետք է ստուգումների մասին գործատուին ծանուցի նախապես, բացահայտի դիմողի տվյալները, և այլն: Նման գործընթացը նվազեցնում է առհասարակ տեսչական մարմին դիմելու հավանականությունը: Ավելին, ինչպես ցույց է տալիս փորձը, նույնիսկ օրինախախտումների վերաբերյալ դիմումների առկայության դեպքում, տեսչական մարմինը վարչական վարույթները հարուցում և վարում է այնպես, որ զգալի դեպքերում դրանք որևէ արդյունք չեն գրացնում⁵³ նույնիսկ երբ դիմումատուն ներկայացնում է օրենսդրության խախտման ապացույցներ:

- **Տեսչական այլ թերություններ:** ՀՀ-ում տեսուչների թիվը և իրավասությունները չեն համապատասխանում ԱՄԿ թիվ 81 կոնվենցիայի (Աշխատանքի տեսչության մասին) պահանջներին, որը վավերացված է ՀՀ կողմից:
- **Իրավական ակտերի բարդ կառուցվածք:** Աշխատանքի անվտանգության հետ կապված գոյություն ունեցող իրավական ակտերը ցրված են տարբեր ոլորտային ակտերում՝ շինարարական, հիգիենիկ, և այլն, ինչը գործատուների և աշխատողների համար դժվարացնում է հասանելիությունն ու կիրառումը:
- **Արհմիությունների դերի թերառժևորում:** Չկան բավարար իրավական հիմքեր, որոնք կխթանեն արհմիությունների ներգրավումն աշխատանքի անվտանգության ոչ-պետական վերահսկողության մեջ:

Թերություններ կան նաև գյուղատնտեսության և շինարարության ոլորտներում: Առաջինի դեպքում տարածված են թունաքիմիկատների կիրառման ժամանակ թունավորումներ, կիզիչ արևի տակ աշխատելու կարճաժամկետ և երկարաժամկետ հետևանքներ՝ ընդհուպ մինչև քաղցկեղ, գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման ժամանակ խեղումներ՝ վերջույթների կորուստ:

⁵³ Տեղեկատվությունը հիմնված է Քաղհասարակության պլատֆորմի մասնակցի կողմից Տեսչական մարմինների (այդ թվում՝ Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմինն) ուղղված դիմումների և դրանց վերաբերյալ հարուցած վարույթների ուսումնասիրության վրա:

Աշխատանքի պաշտպանություն

Ի լրումն անարդյունավետ տեսչական ինստիտուտի և արհմիությունների կողմից ոչ-պետական վերահսկողության գործնական իրացման խնդիրների՝ օրենսդրական բացեր են առկա դատական կարգով աշխատանքային իրավունքները վերականգնելու ոլորտում: Համաձայն Աշխատանքային օրենսգրքի 25-րդ հոդվածի՝ արհմիություններն իրավունք ունեն կազմակերպություններում ՀՀ օրենսդրությանը, կոլեկտիվ և աշխատանքային պայմանագրերին հակասող կամ աշխատողների կամ աշխատողների ներկայացուցչի իրավունքները խախտող գործատուի և նրա լիազորած անձանց որոշումները և գործողությունները բողոքարկելու դատական կարգով: Մինչդեռ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 50-րդ հոդվածի համաձայն՝ աշխատողների իրավունքները խախտող գործատուի և նրա լիազորած անձանց որոշումներն ու գործողությունները բողոքարկելու համար արհմիությունները իրավունք չունեն դատարանում որպես ներկայացուցիչ հանդես գալու: Հետևաբար՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի այս դրույթը չի կիրարկվում և մնում է թղթի վրա: Արհմիություններին այդ իրավունքն ապահովելու համար անհրաժեշտ է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքում կատարել համապատասխան փոփոխություն և լրացում:

Օտարերկրացիների աշխատանքային շահագործում

Վերջին տարիներին Հայաստանում պարբերաբար նկատվել է Հարավ-արևելյան ասիայի երկրներից, առավելապես՝ Հնդկաստանից, աշխատանքային միգրանտների ներհոսք: Ի տարբերություն աշխատանքային միգրացիայի հայտնի ձևաչափի՝ դեպի ՀՀ նշված պետություններից քաղաքացիների հոսքն ունի ապօրինի միգրացիայի, թրաֆիքինգի և աշխատանքային շահագործման հետ կապված մի շարք առանձնահատկություններ: Միգրանտների հետ բանավոր շփումներից, ինչպես նաև բաց աղբյուրներում առկա տեղեկատվությունից կարելի է եզրակացնել, որ նրանց զգալի մասը Հայաստան է մտնում էլեկտրոնային եղանակով ստացած մուտքի արտոնագրով և սահմանին ներկայանում է որպես զբոսաշրջիկ՝ թեպետ այցի հիմնական նպատակը Հայաստանում աշխատանք գտնելն ու կացություն հաստատել է: Հետագայում, սակայն, նշված անձինք հիմնականում կատարում են աշխատանքներ՝

առանց աշխատանքային պայմանագրի կամ ոչ-ֆորմալ ոլորտում, ընդ որում՝ այդ աշխատանքներին նրանք ներգրավվում են տարատեսակ ցանցերի միջոցով, որոնք շինարարության, ճանապարհաշինության, գյուղատնտեսության, սպասարկման, առաքման և այլ ոլորտներում գործող տնտեսավարողներին և անձանց առաջարկում են օտարերկրյա մատչելի աշխատուժ։ Համացանցում եղած հրապարակումների ուսումնասիրությունից կարելի պարզել, որ սոցիալական ցանցերում կան հնդկական թիրախային լսարանին ուղղված բազմաթիվ գովազդներ, որոնք առաջարկում են կազմակերպել անձանց տեղափոխումը Հայաստան, այնուհետև նրանց ընդունել աշխատանքի սննդի առաքման ոլորտում։ Միաժամանակ, Հայաստանյան «list-am» հարթակում և Ֆեյսբուքյան տարբեր խմբերում (օրինակ՝ foreigners in armenia, indians in armenia), ոչ հազվադեպ նաև փողոցներում փակցված հայտարարություններում առկա են առնվազն մի քանի հարյուր հայալեզու «գովազդային հրապարակումներ», որոնք մատչելի գնով տարատեսակ աշխատանքներ կատարելու համար առաջարկում են «հնդիկ աշխատողներ», կամ պարզապես «հնդիկներ»։ Փաստերը համադրելով՝ կարելի է ենթադրել, որ աշխատանքային միգրացիայի վերոնշյալ գործընթացում կարող են ներգրավված լինել տարբեր սուբյեկտներ (չի բացառվում՝ անդրազգային) ներառող ցանցեր, որոնք փաստացի կազմակերպում են միգրանտների զանգվածային ներգաղթ և նրանց հետագա աշխատանքային շահագործում, այդ թվում՝ հարկադիր աշխատանքի տարրերով։ Թեմային բազմիցս անդրադարձել են նաև մի շարք լրատվամիջոցներ ու հետաքննական կենտրոններ՝ բացահայտելով ՀՀ ներգաղթած Հնդկաստանի քաղաքացիների հումանիտար ու աշխատանքային խնդիրները⁵⁴, ինչպես նաև ներգաղթի ու գործունեության հետ կապված փաստերը⁵⁵։ Սննդի առաքման ոլորտում արված հետազոտությունը⁵⁶ նույնպես ցույց է տվել այդ ոլորտում օտարերկրացիների՝ առանց իրավական հիմքերի աշխատելու, հարկադիր աշխատանքի և նրանց իրավունքների խախտման զգալի դեպքեր։

Ներկայացված իրավիճակն ուշագրավ է Հայաստանում հնարավոր թրաֆիքինգի, ինչպես նաև հարկադիր և անօրինական աշխատանքի տեսանկյունից։

54 «Հնդիկները Հայաստանում». կարիքի մեջ, աշխատավարձի սպասելիս, <https://www.azatutyun.am/a/33244760.html>

55 Մութ պատմություններ՝ դեղին ուսապարկերի հետևում, <https://www.hetq.am/hy/article/166369>

56 Սննդի առաքիչների աշխատանքային պայմանները, ՀԱՄԿ / Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ

Այն բացահայտում է միջգերատեսչական համագործակցության խնդիրները, քանի որ ինստիտուցիոնալ բացթողումները տեղի են ունենում միանգամից մի քանի օղակներում, այդ թվում՝ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում: Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմիններ կայացված՝ տարբեր կազմակերպություններում առանց աշխատանքային պայմանագրի աշխատող օտարերկրյա միգրանտների վերաբերյալ դիմումները հիմնականում նշանակալից արդյունքի չեն բերում, ավելին, նման խախտումների դեպքերը տվյալ գործատուն տեսչական մարմնից հեշտորեն կոծկվում է: Սա այդ թվում կապված է ստուգումների վերաբերյալ օրենսդրական սահմանափակումներով ու տեսչական մարմնի անբավարար լիազորություններով: Պետք է հաշվի առնել նաև, որ օտարերկրացիների զգալի մասը ներգրավվում է կարճաժամկետ ոչ-ֆորմալ կամ տնային աշխատանքներում, որտեղ հսկողություն իրականացնելն անհնար է⁵⁷:

Թեև մի քանի պետությունների քաղաքացիների համար ՀՀ մուտքի կարգավորումներն ի վերջո խստացվեցին՝ խնդրի համակարգային լուծումը պետք է այլ տեղ փնտրել, քանի որ ապօրինի աշխատանքի սկզբնաղբյուրը օտարերկրացիների առկայությունը չէ, այլ պետության թերատ ջանքն ու օրենսդրության ոչ բավարար հսկողությունը: ՀՀ-ում օտարերկրացիների անօրինական շահագործման խնդիրը համակարգայնորեն լուծելու համար առաջարկվում է կատարել միջգերատեսչական միջոցառումներ: Այն է՝ լիովին բարեփոխել աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողության ինստիտուտն այնպես, որ լիազոր մարմիններն ունենան բավարար լիազորություն և կարողություն ամենօրյա ռեժիմով և սեփական նախաձեռնությամբ ՀՀ տարածքում արդյունավետորեն բացահայտել ու կանխարգելել առանց իրավական հիմքերի օտարերկրյա քաղաքացիներին շահագործող անձանց ու տնտեսավարողներին, ինչպես նաև օտարերկրյա աշխատուժի առաջարկող հայտարարություններ հրապարակող և տարածող անձանց ու ցանցերը՝ այդ թվում կիրառելով ստեղծագործական մոտեցում, հաշվի առնելով, որ հայտարարությունների զգալի մասը տարածվում է սոցիալական ցանցերով և ոչ իրական օգտահաշիվների կողմից:

57 ՀՀ-ում անկանոն միգրացիայի և սահմանների կառավարման խնդիրները ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության Համաձայնագրի համատեքստում, Արսեն Իգիթյան, Երևան, 2024

Պլատֆորմային զբաղվածություն

Հայաստանում պլատֆորմային զբաղվածությունը վերջին տարիներին զգալիորեն աճել է՝ հատկապես հավելվածներով ուղևորափոխադրման (օրինակ՝ Yandex Go, GG Taxi, uTaxi) և սննդի առաքման (Glovo, Yandex Eats) ոլորտներում: Թեև այս ոլորտները ստեղծում են ճկուն աշխատատեղեր, դրանք հաճախ գործում են կանոնակարգման բացակայության պայմաններում՝ առաջացնելով աշխատողների իրավունքների խախտման⁵⁸, ինչպես նաև պետության եկամուտների նվազման լուրջ ռիսկեր:

2024 թ. սեպտեմբերի 1-ից ուժի մեջ են մտել պլատֆորմային ուղևորափոխադրման ծառայությունները կարգավորելու հետ կապված ՀՀ կառավարության նախաձեռնությունները : Ըստ նոր օրենսդրական կարգավորումների՝ ինտերնետային հավելվածի միջոցով ուղևորափոխադրում իրականացնող վարորդը համարվում է «ծանուցման ենթակա գործունեություն» ծավալող: Նա պարտավոր է գրանցվել որպես անհատ հարկ վճարող և ամեն ուղևորափոխադրման համար դուրս գրել վճարահաշվարկային փաստաթուղթ և վճարել պետական տուրք: Յուրաքանչյուր ուղևորափոխադրման դիմաց սահմանվել է պետական տուրք՝ կանխիկ և անկանխիկ վճարումների համար տարբեր դրույքաչափերով: Օրինակ՝ անկանխիկ վճարման դեպքում 2024-ի սեպտեմբերից կիրառվում է 1.5% տուրք, որը 2026-ին պետք է հասնի մինչև 4%: Թեև սա լիարժեք կարգավորում չէ, քանի որ հավելվածային փոխադրումները չի հավասարեցնում տաքսի ծառայություններին և պլատֆորմային վարորդները դեռ չեն համարվում դասական իմաստով աշխատող, բայց այս քայլը կարելի է համարել ոլորտի ֆորմալացման և կարգավորման սկիզբ:

Ի տարբերություն ուղևորափոխադրումների՝ սննդի պլատֆորմային առաքման ոլորտը Հայաստանում շարունակում է մնալ չկարգավորված: Թեև առաքիչը որոշ դեպքերում գրանցվում է որպես անհատ ձեռնարկատեր, սակայն այս գործընթացը հիմնականում կախված է նրա կամքից և ոլորտային որևէ օրենքով չի կարգավորվում: Արդյունքում, ինչպես և վարորդը, նրանք զրկված են սոցիալական երաշխիքներից, ինչպես օրինակ՝ կենսաթոշակային համակարգում ընդգրկվելու իրավունքից, միավորման իրավունքից, աշխատանքի անվտանգության երաշխիքներից և այլն:

⁵⁸ Սննդի առաքիչների աշխատանքային պայմանները, ՀԱՄԿ / Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ

Ընդհանուր առմամբ պլատֆորմային զբաղվածության անբավարար կարգավորումը բերում է մի շարք բացասական հետևանքների, ինչպիսիք են՝

- **Աշխատողների խոցելիություն.** աշխատողը, չունենալով աշխատանքային պայմանագիր, բայց գործնականում հանդիսանալով վարձու աշխատող, չունի աշխատանքային իրավական բավարար պաշտպանություն:
- **Ստվերային տնտեսության աճ.** չկանոնակարգված ոլորտները խրախուսում են ստվերային տնտեսության զարգացումը՝ կրճատելով պետության հարկային մուտքերը:
- **Թափանցիկության և հաշվետվողականության պակաս.** Պլատֆորմային տնտեսությունում ջնջվում են աշխատանքային հարաբերությունները, դժվարանում է գործատուի և պատասխանատու մարմինների նույնացումը: Համաձայն հետազոտության՝ Հայաստանում սննդի առաքիչների զգալի մասն իրականում չգիտի, ով է իր գործատուն և որտեղ է գտնվում (տես՝ ՀԱՄԿ և Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամի համատեղ հետազոտությունը):
- **Կարգավորման անհավասարություն.** տաքսի և սննդի առաքման ոլորտների միջև կարգավորման տարբերությունները խաթարում են հավասար մրցակցությունը և ոլորտում ներգրավվածների համար ստեղծում շփոթություն:
- Այսպիսով, չնայած Հայաստանի կառավարությունը ուղևորափոխադրման ոլորտը կարգավորելու ուղղությամբ որոշակի քայլեր է ձեռնարկել՝ սննդի առաքման հարթակները շարունակում են գործել անկանոն դաշտում: Պետք է մշակել համապարփակ կարգավորումներ, որոնք միաժամանակ կապահովեն աշխատողի սոցիալական պաշտպանությունը և կնպաստեն պետության եկամուտների կայուն աճին:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒ ԿԻՐԱՐԿՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ճանապարհային քարտեզներ, թափանցիկություն, միջգերատեսչական հանձնաժողով

2025թ. դրությամբ ՀՀ կառավարությունից ստացված տեղեկությունների համաձայն, ներկայումս մշակվում են Համաձայնագրի կիրարկումն ապահովող նոր ճանապարհային քարտեզներ: Քանի որ Համաձայնագիրն ինքնին պարունակում է հստակ բարեփոխումների ցանկ՝ համապատասխան վերջնաժամկետներով, Համաձայնագրի ներդրումն ավելի արդյունավետ և արագ ապահովելու համար նոր ճանապարհային քարտեզները ցանկալի է մշակել այնպես, որ դրանք ավելի պարզորեն արտապատկերեն Համաձայնագրի Հավելվածներում ցուցակագրված բարեփոխումները: Դա հնարավորություն կտա թե՛ ավելի լավ ապահովել այդ ճանապարհային քարտեզների ընթեռնելիությունը, թե՛ ավելի հստակ հետևել բարեփոխումների ժամանակացույցին:

Համաձայնագրի հետ կապված բարեփոխումներին հետևելու կամ դրանց հետ պարբերաբար ծանոթանալու մեխանիզմներ պետությունը դեռևս չի ապահովել, թեև 2025 թ. ապրիլին Աժ Եվրոպական ինտեգրման հարցերի մշտական հանձնաժողովի նախագահը տրամադրել է տեղեկություն⁵⁹, որ Կառավարությունը մշակում է Համաձայնագրի կատարման ընթացքը պատկերող առցանց պորտալ: Ներկայումս նման պորտալ մշակել է միայն ՀՀ-ԵՄ քաղաքացիության պլատֆորմը, որն անկախ կերպով գնահատում և տեսանելիորեն արտապատկերում է Համաձայնագրի կատարման առաջընթացը⁶⁰:

Վարչապետի՝ 2018 թ. հուլիսի 2-ի N 906-Ա որոշմամբ ստեղծվել է կիրարկումն ապահովող միջոցառումները համակարգող միջգերատեսչական հանձնաժողով, որի կազմում են ՀՀ փոխվարչապետը, ՀՀ Ազգային ժողովի մշտական հանձնաժողովների նախագահները, ոլորտը համակարգող նախարարների տեղակալներն ու մի քանի այլ պետական գերատեսչությունների ներկայացուցիչներ: Իր աշխատանքները հանձնաժողովը կազմակերպվում է նիստերի միջոցով, որոնք պետք է գումարվեն ոչ պակաս, քան յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ: Միաժամանակ Վարչապետի՝ 2019 թ. հունիսի 1-ին N 666-Լ որոշմամբ սահմանված է, որ միջգերատեսչական հանձնաժողովը կատարում է ճանապարհային քար-

59 6TH MEETING OF THE EU-ARMENIA CIVIL SOCIETY PLATFORM, eu-armenia.am, News section

60 ՀԸԳՀ-ն պատկերավոր, eu-armenia.am

տեղի մշտադիտարկում, իսկ համապատասխան գերատեսչությունները ամեն եռամսյակի ավարտից հետո 10-օրյա ժամկետում այդ հանձնաժողովին ներկայացնում են իրականացված և իրականացվող աշխատանքների վերաբերյալ ամփոփ տեղեկություն: Գործնականում՝ նշված հանձնաժողովի նիստերը տեղի են ունեցել ոչ ավելի հաճախ, քանի տարին մեկ անգամ:

Հանձնաժողովի՝ միայն պետական գերատեսչությունների ներկայացուցիչներից կազմված լինելը բավարար ներառական չէ, հաշվի առնելով, որ դա չի ենթադրում քաղաքացիական հասարակության և այլ շահագրգիռ կողմերի հետ քննարկումները համաձայնագրի հետ կապված բարեփոխումների ընթացքում, ինչպես նաև չի ապահովում կատարման թափանցիկությունը⁶¹: Մասնավորապես, հանձնաժողովում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներգրավումը թույլ կտա բարեփոխումների գործընթացը դարձնել ավելի ժողովրդավար ու կառավարելի: Միջգերատեսչական հանձնաժողովին որոշ նիստերին որպես հյուր հրավիրվել են նաև Համաձայնագրի 366-րդ հոդվածով ստեղծված Քաղաքացիական հասարակության պլատֆորմի որոշ ներկայացուցիչներ, սակայն դա չի կրել ընթացակարգային բնույթ: Ըստ այդմ՝ առաջարկվում է ՀՀ-ԵՄ Քաղհասարակության պլատֆորմի անդամներին նույնպես դարձնել հանձնաժողովի մաս, ինչպես նաև ապահովել պլատֆորմի հետ տեղեկության փոխանակում, իսկ հարկ եղած դեպքում՝ բարեփոխումների մշակման և դրանց քննարկման ժամանակ խորհրդակցել Պլատֆորմի հետ:

ՀՀ-ԵՄ Քաղհասարակության պլատֆորմի ստեղծումից ի վեր պլատֆորմը կառավարությանը ներկայացրել է տարատեսակ ոլորտային խորհրդատվական կարծիքներ և տարեկան զեկույցներ, սակայն կառավարության արձագանքը ոչ միշտ է եղել կառուցողական: Դրանք համապատասխան գերատեսչությունները ընդունել են որպես օրենսդրական առաջարկություններ կամ քննադատություններ, որին տրվել են հետադարձ կարծիքներ, հաճախ նաև՝ խորհրդատվական կարծիքներում տեղ գտած առաջարկների հետ չհամաձայնվելու, հերքելու, դրանց ընդունելու նպատակահարմարությունը հարցականի տակ դնելու, դրանց մասին դեկլարատիվ մտորումներ անելու բովանդակությամբ: Ավելին, խորհրդատվական կարծիքների վերաբերյալ կառավարության հետ տապալ գործողությունները հայտնի չեն:

⁶¹ ԵՄ-ՀՀ Քաղհասարակության պլատֆորմի 6-րդ համատեղ հռչակագիրը

Զբաղվածության և սոցիալական քաղաքականության ՀԸԳՀ-ի դրույթները սերտորեն կապված են նաև ՄԱԿ-ի կայուն զարգացման նպատակների հետ, սակայն պետությունը այստեղ էլ է թերացել: Կայուն զարգացման նպատակների օրակարգ կիրարկելու, մշտադիտարկելու և համակարգելու համար ՀՀ Վարչապետի 2020թ. ապրիլի 22-ի որոշմամբ ստեղծվել է Կայուն զարգացման նպատակների Խորհուրդ, հաստատվել է Խորհրդի կազմն ու աշխատակարգը: Սեպտեմբերի 15-ին Խորհրդի կազմում որպես Աշխատանքի, զբաղվածության և աղքատության հաղթահարման ոլորտում գործող հասարակական կազմակերպություն է ընտրվել Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիան: Համաձայն վերը նշված որոշման՝ Խորհուրդն իր աշխատանքները կազմակերպում է նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են առնվազն յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ: Այնուամենայնիվ, չորս տարի անց, 2024 թ. դրությամբ Խորհրդի որևէ նիստ չի հրավիրվել:

ԵՄ գործընկերության նոր օրակարգ

Դեռևս ավելի քան մեկ տարի առաջ հայտարարվեց, որ Հայաստանի Հանրապետությունը և Եվրոպական միությունը մշակում են ԵՄ Նոր գործընկերության օրակարգ⁶², որը գալիս է լրացնելու ՀԸԳՀ Համաձայնագիրը: Չնայած այդ օրակարգի վերաբերյալ շարունակական բանակցություններին՝ Քաղհասարակության պլատֆորմի ներկայացուցիչների հետ տեղի է ունեցել ընդհամենը մեկ ամբողջական կազմով հանդիպում, որին ներկայացվել է Օրակարգի ընդհանուր կոնցեպտը: Այնուամենայնիվ, մինչև այժմ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների համար հայտնի չէ այդ փաստաթղթի բովանդակությունը, դրա կապը Համաձայնագրի հետ, ընդգրկված դրույթները, ինչպես նաև նոր փաստաթուղթ մշակելու շարժառիթները: Որպեսզի մշակվող օրակարգն իսկապես լինի արդյունավետ և խթանի Համաձայնագրի կատարումն ու հետագա զարգացումը, անհրաժեշտ է, որ փաստաթղթի բովանդակությունն ավելի պրոակտիվ քննարկվի քաղհասարակության ներկայացուցիչների միջև և բանակցվող փաստաթղթի տեքստը դառնա հասանելի: Մասնավորապես, աշխատանքային քաղաքականության համատեքստում, Նոր օրակարգը կարող է ընդգրկել Համաձայնագրով չնախատեսված լրացուցիչ ԵՄ ստանդարտներ: Դրանցից կարող են լինել, օրինակ Աղեկվատ և արդար նվազագույն աշխատավարձի մասին Հրահանգը⁶³ և Պետական գնումների մասին Հրահանգը⁶⁴:

62 Armenia and EU to launch 'ambitious' partnership agenda, OC-media, 14-02-2024

63 <http://data.europa.eu/eli/dir/2022/2041/oj>

64 <https://eur-lex.europa.eu/legal-content/EN/TXT/?uri=CELEX:02014L0024-20240101>

7

**ՀՀ-ՈՒՄ ԱՆԿԱՆՈՆ ՄԻԳՐԱՑԻԱՅԻ ԵՎ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՀՀ-ԵՄ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ
ԵՎ ԸՆԴԱՅՆՎԱԾ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ**

ԱՐՍԵՆ ԻԳԻԹՅԱՆ

*Հայաստանի պետիիմնարկների,
ՏԻՄ-երի աշխատողների արհմիության կազմակերպական
աշխատանքների և արտաքին կապերի մասնագետ*

Հայաստանի Հանրապետության և Եվրոպական միության միջև Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագիրը⁶⁵ (այսուհետ՝ ՀԸԳՀ կամ ՀԸԳՀ) առանցքային փաստաթուղթ է, որը ստորագրվել է 2017 թ. նոյեմբերի 24-ին Բրյուսելում և ուժի մեջ մտել 2021թ. մարտի 1-ից: ՀԸԳՀ-ն պատկանում է այսպես կոչված «հարմոնիզացման և ստաբիլիզացման» համաձայնագրերի շարքին, որոնք Եվրամիությունն առաջարկում է ԵՄ հարևանության պետություններին՝ նպատակ ունենալով ապահովել նրանց աստիճանական մերձեցումն ու ինտեգրումը եվրոպական ընդհանուր արժեքներին ու նորմերին: Համաձայնագիրը լայն հնարավորություն է տալիս՝ խորացնելու փոխադարձ համագործակցությունն ու ինտեգրումը, ինչպես նաև նախատեսում է բարեփոխումներ տարբեր ոլորտներում:

ՀԸԳՀ-ով մի շարք ոլորտների՝ շրջակա միջավայրի, էներգետիկայի, կլիմայի, սպառողների պաշտպանության, ինֆորմացիոն տեխնոլոգիաների, տրանսպորտի, աշխատանքային իրավունքների համար նախատեսված է Հայաստանի օրենսդրության աստիճանական մոտարկում Եվրամիության իրավական ակտերին, ընդ որում՝ հստակ ժամանակահատվածում: Միաժամանակ, բազ-

⁶⁵ ՀԸԳՀ-ի մասին, <https://eu-armenia.am/about-ՀԸԳՀ-1>

մաթիվ այլ ոլորտների համար սահմանված են չափանիշային և այլ պայմանագրային դրույթներ, ինչպես նաև համագործակցությունը խորացնելու դրույթներ: Այս ոլորտներում ընդգրկված են նաև միգրացիայի, շարժունակության, սահմանային ամրության, միջպետական համագործակցության մասին դրույթները:

Միգրացիան ՀԸԳՀ-ի համատեքստում

Միգրացիային և հարակից դրույթներին վերաբերում են ՀԸԳՀ-ի 14-17-րդ հոդվածները: Մասնավորապես սահմանվում է, որ կողմերը վերահաստատում են միմյանց միջև միգրացիոն հոսքերի համատեղ կառավարման կարևորությունը և հիմնելու են միգրացիայի հետ կապված խնդիրների վերաբերյալ համապարփակ երկխոսություն, այդ թվում՝ օրինական միգրացիայի, ապօրինի միգրացիայի դեմ պայքարի և միջազգային պաշտպանության, թրաֆիքինգի և մարդկանց ապօրինի տեղափոխման մասին:

Կարելի է առանձնացնել ՀԸԳՀ-ով սահմանված հետևյալ պարտավորությունները՝

- միգրացիայի հիմքում ընկած պատճառների բացահայտում և կանխարգելում;
- անօրինական միգրացիայի, միգրանտների ապօրինի տեղափոխման և մարդկանց թրաֆիքինգի դեմ ուղղված արդյունավետ ու կանխարգելիչ քաղաքականության մշակում և այդ խնդրի լուծում, այդ թվում անօրինական ճանապարհով միգրանտներ ներս բերող և թրաֆիքինգ իրականացնող անձանց ցանցի դեմ պայքար;
- կողմերն ապահովում են կատարել Եվրոպական միության եւ Հայաստանի Հանրապետության միջև վիզաների տրամադրումը դյուրացնելու մասին համաձայնագիր:

ՀԸԳՀ-ով սահմանված պարտավորությունների կատարումը

Հաշվի առնելով, որ միգրացիան չի վերաբերում այն ոլորտներին, որոնց համար սահմանված են կոնկրետ թվով ԵՄ օրենսդրական ակտերին մոտարկման պահանջներ, այս ոլորտում ՀԸԳՀ կատարողականը կարող է տարբեր կերպ չափվել: Այնուամենայնիվ, ՀԸԳՀ 366-րդ հոդվածով ստեղծված ՀՀ-ԵՄ Քաղհասարակության պլատֆորմը գործարկել է ՀԸԳՀ ոլորտների կատարու-

մը ցուցադրող էլեկտրոնային գործիք⁶⁶, որում արտացոլվում է ՀԸԳՀ դրույթների քանակական և որակական գնահատականը՝ արտահայտված նշված ոլորտում թվարկված դրույթների թվի և գործնականում այդ դրույթներից կատարվածների թվի միջև տոկոսային հարաբերությամբ: Այդ իմաստով կարելի է գնահատել, որ ՀԸԳՀ-ի միգրացիոն ոլորտի պարտավորությունների շուրջ 13%-ը լիարժեք կատարված է, իսկ շուրջ 75%-ը կատարման փուլում է:

Դրական զարգացումներից կարելի է առանձնացնել՝

- Եվրամիության պետությունների հետ տարվող արդյունավետ աշխատանքներն ու պայմանագրային հարաբերությունները անձանց ռեադմիսիայի հետ կապված;
- Հայաստանի և ԵՄ Քրեական դատավարության գործակալության (Eurojust) միջև համագործակցության համաձայնագրի վավերացումը;
- Կենսաչափական անձնագրերի համակարգի սպասարկման համար հայտարարված մրցույթի ամփոփումն ու ծառայություն մատուցողի ընտրությունը (Ֆրանսիական անդրազգային Idemia Group կորպորացիայի և արգենտինահայ էդուարդո էռնեսկյանին պատկանող Կորպորասյոն Ամերիկա ընկերության դուստր ձեռնարկության համատեղ կոնսորցիում), որը 2026 թ. երկրորդ կեսից կներդնի Կենսաչափական անձնագրերի համակարգ;
- ՀՀ պետական սահմանի որոշ հատվածներում ՌԴ մարմիններից սահմանային հսկման գործառույթը հետ վերցնելը;

Միաժամանակ, հարկ է նշել 2013 թ. ՀՀ-ԵՄ վիզաների դյուրացման Համաձայնագրի կիրառման հետ կապված լուրջ խնդիրները, որոնք գոյանում են ԵՄ անդամ պետությունների հյուպատոսությունների կարողությունների ոչ բավարար լինելու, ինչպես նաև այդ ծառայությունները արտապատվիրակելու հետևանքով: Հյուպատոսարանների մարդկային ռեսուրսների անհամապատասխանությունը պահանջարկին, ինչպես նաև արտապատվիրակումն իրականացնող կորպորացիաների կողմից (VFS Global, Teleperformance) ծառայությունների ոչ բարեխիղճ մատուցումը հանգեցնում է վիզաների կենտրոն այցելելու գործնական անհնարինության՝ սահմանված 2-շաբաթյա ժամկետի փոխարեն:

«Անկանոն» միգրանտների կուտակումը Հայաստանում ին և նրանց ներգրավումը ապօրինի աշխատանքում:

⁶⁶ eu-armenia.am, «ՀԸԳՀ-ն պատկերավոր» բաժին:

Վերջին տարիներին Հայաստանում պարբերաբար նկատվել է Հարավ-արևելյան ասիայի երկրներից, առավելապես՝ Հնդկաստանից, աշխատանքային միգրանտների ներհոսք: Ի տարբերություն աշխատանքային միգրացիայի հայտնի ձևաչափի՝ դեպի Հայաստան նշված պետություններից քաղաքացիների հոսքն ունի մի շարք առանձնահատկություններ, որոնք կապված են ապօրինի միգրացիայի, թրաֆիքինգի և աշխատանքային շահագործման հետ: Միգրանտների հետ բանավոր շփումներից, ինչպես նաև բաց աղբյուրներում առկա տեղեկատվությունից կարելի է եզրակացնել, որ նրանց զգալի մասը Հայաստան է մուտք գործում էլեկտրոնային եղանակով ստացված մուտքի արտոնագրով և սահմանին ներկայանում է որպես զբոսաշրջիկ, թեպետ այցի հիմնական նպատակը Հայաստանում աշխատանք գտնելն ու կացություն հաստատելն է: Հետագայում, սակայն, նշված անձինք հիմնականում կատարում են աշխատանքներ՝ առանց աշխատանքային պայմանագրի, կամ ոչ-ֆորմալ ոլորտում, ընդ որում՝ այդ աշխատանքներին նրանք ներգրավվում են տարատեսակ ցանցերի միջոցով, որոնք շինարարության, գյուղատնտեսության, առաքման և այլ ոլորտներում գործող տնտեսավարողներին և անձանց առաջարկում են օտարերկրյա մատչելի աշխատուժ: Քանի որ որոշ ժամանակ անց Հայաստանի մուտքի արտոնագրի ժամկետը սպառվում է, իսկ չձևակերպված աշխատանքի դեպքում գործատուներն աշխատողներին կացության իրավական հիմքեր չեն տրամադրվում, օտարերկրացիները շարունակում են բնակվել Հայաստանում՝ առանց որևէ օրինական հիմքի: Համացանցում եղած հրապարակումների ուսումնասիրությունից կարելի պարզել, որ սոցիալական ցանցերում առկա են հնդկական թիրախային լսարանին ուղղված բազմաթիվ գովազդներ, որոնք առաջարկում են կազմակերպել անձանց տեղափոխումը Հայաստան, այնուհետև ընդունել աշխատանքի սննդի առաքման ոլորտում: Միաժամանակ, Հայաստանյան «list-am» հարթակում և Ֆեյսբուքյան տարբեր խմբերում (օրինակ՝ *foreigner in armenia*, *indians in armenia*, *secret yerevan* և այլն), ոչ հազվադեպ նաև փողոցներում փակցված հայտարարություններում առկա են առնվազն մի քանի հարյուր հայալեզու «գովազդային հրապարակումներ», որոնք առաջարկում են «հնդիկ աշխատողներ», կամ պարզապես «հնդիկներ»՝ մատչելի գնով տարատեսակ աշխատանքներ կատարելու համար: Փաստերը համադրելով կարելի է ենթադրել, որ աշխատանքային միգրացիայի վերոնշյալ գործընթացում կարող են ներգրավված լինել տարբեր

սուբյեկտներ (չի բացառվում՝ անդրազգային) ներառող ցանցեր, որոնք փաստացի կազմակերպում են միգրանտների զանգվածային ներգաղթ և նրանց հետագա աշխատանքային շահագործում՝ այդ թվում հարկադիր աշխատանքի տարրերով: Թեմային բազմիցս անդրադարձել են նաև մի շարք լրատվամիջոցներ ու հետաքննական կենտրոններ՝ վեր հանելով ՀՀ ներգաղթած Հնդկաստանի քաղաքացիների հումանիտար ու աշխատանքային խնդիրները⁶⁷, նաև ներգաղթի ու գործունեության հետ կապված փաստերը⁶⁸: Սննդի ոլորտում արված հետազոտությունը նույնպես ցույց է տվել այդ ոլորտում օտարերկրացիների՝ առանց իրավական հիմքերի աշխատելու, հարկադիր աշխատանքի և նրանց իրավունքների խախտման զգալի դեպքեր⁶⁹:

Ներկայացված հիմնախնդիրն ուշագրավ է ոչ միայն պարզապես Հայաստանում ապօրինի կամ անկանոն միգրացիայի և հնարավոր թրաֆիքինգի տեսանկյունից: Այն նաև բացահայտում է միջգերատեսչական համագործակցության խնդիրները, քանի որ ինստիտուցիոնալ բացթողումները տեղի են ունենում միանգամից մի քանի օղակներում, այդ թվում՝ աշխատանքային օրենսդրության վերահսկողության ոլորտում: Թեպետ ՀՀ մուտքի ազատականացումը զարկ է տալիս մի շարք երկրներից քաղաքացիների ներհոսքին, անկանոն միգրացիայի հիմնաքարային պատճառը օտարերկրացիների՝ առանց իրավական հիմքերի աշխատանքներում ներգրավելու երևույթն է և այդ համատեքստում հսկողության փաստացի բացակայությունը: Այսպես, Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիությունը, ինչպես նաև արհմիության աշխատակիցները տարբեր առիթներով դիմումներ են ներկայացրել Առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնին՝ հայտնելով այս կամ այն կազմակերպությունում չձևակերպված օտարերկրյա աշխատուժի վերաբերյալ⁷⁰: Սակայն, կապված օրենսդրական սահմանափակումների ու անբավարար լիազորությունների հետ, տեսչական մարմինը ստուգումներով չի կարողացել բացահայտել չգրանցված աշխատողներին: Պետք է նաև հաշվի առնել, որ օտարերկրացիների զգալի մասը ներգրավվում է կարճաժամկետ ոչ-ֆորմալ կամ տնային աշխատանքներում, որտեղ հսկողությունն անհնար է:

67 «Հնդկները Հայաստանում». կարիքի մեջ, աշխատավարձի սպասելիս, <https://www.azatutyun.am/a/33244760.html>

68 Մութ պատմություններ՝ դեղին ուսապարկերի հետևում, <https://www.hetq.am/hy/article/166369>

69 Սննդի առաքիչների աշխատանքային պայմանները, ՀԱՄԿ / Ֆրիդրիխ Էբերտ հիմնադրամ, <https://hamk.am/uploads/files/%D4%B1%D5%BC%D5%A1%D6%84%D5%AB%D5%B9%D5%B6%D5%A5%D6%80-%D5%B8%D6%82%D5%BD%D5%B8%D6%82%D5%B4%D5%B6%D5%A1%D5%BD%D5%AB%D6%80%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6.pdf>

70 Առողջապահության և աշխատանքի տեսչական մարմնի լիազորություններն անբավարար են, <https://arhmiutyun.org/2024/08/27/health-and-labor-inspection-body-is-in-dissaray/>

2024 թ. հոկտեմբերին ՀՀ ՆԳՆ նախարարության Միգրացիայի և քաղաքացիության ծառայությունից ստացված տեղեկության համաձայն⁷¹ առանց օրինական հիմքերի ՀՀ-ում բնակվելու համար վերջին 24 ամսվա ընթացքում (01.10.2022թ.-30.09.2024թ.) Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 201-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով վարչական իրավախախտման համար վարչական տուգանքի է ենթարկվել 4979 օտարերկրացի: Միաժամանակ, ծառայությունից հայտնել են, որ ՀՀ-ում առանց օրինական հիմքերի բնակվող (ՀՀ մուտք գործած և մուտքի արտոնագրի ժամկետը սպառվելուց հետո կացության կարգավիճակ չստացած և ՀՀ-ից դուրս չեկած) օտարերկրացիների թվի վերաբերյալ տվյալներ չունի: Այնուամենայնիվ, նույն հոկտեմբեր ամսին Ներքին գործերի նախարարությունը ՀՀ կառավարությանն է ներկայացվել մի վերլուծություն⁷², որում անդրադարձել է վերը նշված անկանոն միգրացիայի երևույթին, ընդ որում՝ ներկայացրել է նաև որոշակի վիճակագրություն: Մասնավորապես, նշվում է, որ զգալիորեն աճել է Հնդկաստանի, Եգիպտոսի և Իրաքի քաղաքացիների ներհոսքը Հայաստան և այդ քաղաքացիների՝ առանց օրինական հիմքի ՀՀ-ում կուտակումը: 2022թ. Եգիպտոսի քաղաքացիներին տրվել է 3260 մուտքի արտոնագիր, իսկ 2023թ.՝ 6246, Իրաքի քաղաքացիներին 2022թ. տրվել է 10.884, իսկ 2023թ.՝ 10.564 մուտքի արտոնագիր: 2023թ. ընթացքում ՀՀ մուտքի վիզա ստանալու համար Հնդկաստանի քաղաքացիներից ստացվել է 86,942 դիմում: Նախորդ տարի՝ 2022թ.-ին դիմումների քանակը կազմել է 34,199:

Աղյուսակ 1. Հնդկաստանի, Իրաքի և Եգիպտոսի քաղաքացիների 2022-2023թթ ներգաղթի վիճակագրությունը

Քաղաքացիությունը	Տրամադրված ՀՀ մուտքի վիզաներ
Եգիպտոս	9 506
Իրաք	21 448
Հնդկաստան	շուրջ 95 000
Ընդամենը	126 000

71 Միգրացիայի և քաղաքացիության ծառայության ՝ 2024թ հոկտեմբերի 8-ի թիվ 42/94/4/180785-24 գրություն

72 Կառավարության 2024 հոկտեմբերի 24-ի նիստի օրակարգ, <https://www.e-gov.am/sessions/archive/2024/10/24/>

Միաժամանակ նշվում է, որ Ազգային անվտանգության ծառայության տվյալներով՝ միայն 2024 թվականի հունվար-հոկտեմբերին ՀՀ են ժամանել և առանց իրավական հիմքի մնացել վերոնշված երեք պետությունների քաղաքացիներից 12787-ը: Թեպետ վերլուծության մեջ նշվված չէ 2024 թվականի նույն ամիսներին տրամադրված մուտքի արտոնագրերի քանակը, դրանց աճի դինամիկան հաշվի առնելով և թվաբանական մոտարկում անելով, կարելի է մոտավոր գնահատել, որ ՀՀ մուտք գործելուց հետո ապօրինի մնացել են Հնդկաստանի քաղաքացիների շուրջ 20%-ը, Եգիպտոսի քաղաքացիների՝ 11%-ը, և Իրաքի քաղաքացիների՝ 4%-ը: Այս գնահատականի համաձայն, 2022-2023թթ. միջոցում միայն այս երեք պետություններից ՀՀ-ում հնարավոր է կուտակված լինի շուրջ 35 000 անկանոն միգրանտ, իսկ ընդհանուր թիվը կարող է լինել ավելին:

Այս հիմնավորումները հաշվի առնելով՝ ՀՀ կառավարությունը 2024 թ. հոկտեմբերի 24-ին օրենսդրական փոփոխություն կատարեց⁷³՝ խստացնելով նշված պետություններից քաղաքացիների համար մուտքի արտոնագրի պայմանները: Սակայն, հաշվի առնելով խնդրի բազմակողմանիությունը, արտոնագրեր տրամադրելու սահմանափակումը կարող անկանոն միգրացիային է համակարգային լուծում չտալ, քանի դեռ աշխատանքի ոլորտում հսկողությունն ու վերահսկողությունը թերի է:

Սահմանային կարգավորումներ և «վիզառան»

Համաձայն «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի՝ այն պետությունների քաղաքացիները, որոնց համար սահմանված է ՀՀ. ժամանելու առանց մուտքի վիզայի ռեժիմ, Հայաստանի տարածքում կարող են մնալ առավելագույնը 180 օր՝ մեկ տարվա ընթացքում:

2022 թ-ին, Ուկրաինայի վրա ՌԴ-ի լայնամասշտաբ հարձակման արդյունքում, կտրուկ ավելացավ դեպի ՀՀ հիմնականում Ռուսաստանի, բայց որոշ թվով նաև Բելառուսի և Ուկրաինայի քաղաքացիների ներհոսքը: Հայաստանում ԱՊՀ երկրների մեծ թվով քաղաքացիներ կացություն հաստատեցին: Նրանց հասարակական և տնտեսական ինտեգրացիայի նպատակով ինտերնետում ստեղծվեցին տարբեր հաղորդակցման հարթակներ (խմբային չաթեր, տելեգ-

⁷³ ՀՀ Կառավարության 2024 թ հոկտեմբերի 24-ի N 1692-Ն որոշում, <https://www.arlis.am/documentview.aspx?docid=198829>

րամյան ալիքներ) և թեմատիկ հրապարակումներ: Ուսումնասիրելով այդպիսի հարթակներում գրառումները՝ նկատելի է այսպես կոչված «վիզառան»⁷⁴ երևույթի և Հայաստանում դրա կիրառման մասին մեծ թվով գրառումներ: Չնայած բառի անգլալեզու ծագմանը՝ եզրույթը հիմնականում տարածված է ՌԴ-ից և այլ ԱՊՀ սլավոնական երկրներից արտագաղթած անձանց լեզվամշակույթում: Սրա էությունը այն է, որ սահմանված թույլատրելի ժամկետի շեմը լրանալուց հետո օտարերկրացին դուրս է գալիս երկրի տարածքից և նորից մուտք գործում, այսպիսով «գրոյացնելով» թույլատրելի օրերի քանակը, ինչը թույլ է տալիս երկրում մնալ ավելին, քանի սահմանված է օրենքով: Ըստ ԱՊՀ «ռեյտկանտների» կողմից հրապարակված հաղորդագրությունների ու հրապարակումների՝ ՌԴ-ի և Բելառուսի քաղաքացիներն օգտագործում են այս մեթոդը՝ առանց կացության քարտ ստանալու Հայաստանում տարվա մեջ 180 օրից ավելի ապրելու համար: 180 օր ՀՀ-ում բնակվելուց հետո, ըստ հաղորդումների, նրանք մեկնում են Վրաստան և մի քանի օրից վերադառնում Հայաստան՝ արդյունքում Հայաստանում մնալով գրեթե ողջ տարի: Նման հաղորդումները զուգորդվում են հավելումներով, որ նշված մեթոդն օրինական չէ, թեև իրականում հաճախ գործում է: Ուշագրավ է, որ որոշ նման գրառումներ արնում են նաև Ուկրաինայի քաղաքացիները, ինչը նշանակում է, որ վիզառանից կարողանում են օգտվել ոչ միայն ԵԱՀԿ քաղաքացիները: Համացանցում քիչ չեն նաև ռուսական ծագման տուրիստական և խորհրդատվական տարբեր ընկերությունների հրապարակած ուղեցույցներ, որոնցում Հայաստանը մատնանշվում է որպես մի երկիր, որտեղ «վիզառանը» թեպետ ոչ միշտ, բայց աշխատում է: Այս տեղեկությունների հիմա վրա կարելի է ենթադրել, որ ՀՀ սահմանային ծառայությունը չունի մուտք գործող օտարերկրացիների տվյալները հավաքագրելու, նրանց՝ ՀՀ-ում գտնվելու գումարային ժամկետը հաշվարկելու, տվյալները համադրելու, սահմանը հատող անձանց պատշաճ նույնացնելու, ուրեմն և՛ «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի համապատասխանությունն ապահովելու բավարար գործիքներ:

Խնդիրների հասցեագրման հնարավոր տարբերակները

- ՀՀ-ում անօրինական միգրացիայի հետ կապված ապօրինի աշխատանքի խնդիրը համակարգային լուծելու համար առաջարկվում է կատարել

միջգերատեսչական միջոցառումներ: Այն է՝ լիովին բարեփոխել աշխատանքային օրենսդրության նկատմամբ վերահսկողության ինստիտուտն այնպես, որ լիազոր մարմիններն ունենան բավարար լիազորություն և կարողություն ամենօրյա ռեժիմով և սեփական նախաձեռնությամբ ՀՀ տարածքում արդյունավետորեն բացահայտել ու կանխարգելել առանց իրավական հիմքերի օտարերկրյա քաղաքացիներին շահագործող անձանց ու տնտեսավարողներին, ինչպես նաև օտարերկրյա աշխատուժ առաջարկող հայտարարություններ հրապարակող և տարածող անձանց ու ցանցերը, ընդ որում՝ կիրառելով ստեղծագործական մոտեցնում, քանի որ աշխատանքի հայտարարությունները հիմնականում տեղադրվում են սոցիալական ցանցերում «Ֆեյք» օգտատերերի կողմից:

- Ազգային անվտանգության ծառայության, Ներքին գործերի նախարարության, Պետական եկամուտների կոմիտեի և տեսչական մարմինների միջև տվյալների փոխանակման և վերլուծության հիմա վրա կանխարգելել ապօրինի աշխատանքներում ներգրավվելու նպատակով օտարերկրյա քաղաքացիների ՀՀ ժամանումը:
- Արդիականացնել և վերազինել ԱԱԾ սահմանային գործերն ու սահմանային էլեկտրոնային կառավարման համակարգը՝ բացառելու համար օտարերկրյա քաղաքացիների կողմից այն չարաշահելու և «Օտարերկրացիների մասին» ՀՀ օրենքի դրույթները շրջանցելու դեպքերը:
- Աշխատանք տանել ԵՄ անդամ պետությունների հետ և ջանքեր գործադրել, որպեսզի ԵՄ անդամ պետությունների արտաքին հարաբերությունների գերատեսչությունները ՀՀ-ԵՄ Վիզաների դյուրացման համաձայնագիրը պատշաճ կիրարկելու համար ավելացնեն ֆինանսական հատկացումներն ու հաստիքները ՀՀ-ում տեղակայված հյուպատոսական ծառայություններում:

8

ՀԸԳՀ-ՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ

ՀՈՎՍԵՓ ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ

Ազատ քաղաքացի ՀԿ-ի նախագահ

ՀԸԳՀ-ի անվտանգային բաղադրիչը վերաբերում է էներգետիկ անվտանգությանը, տարածաշրջանային անվտանգությանը, խաղաղությանը և կայունությանը, սովորական սպառազինությունների տարածման վերահսկողությանը, թրաֆիքինգին, կիբեր-անվտանգությանը և սննդի անվտանգությանը: Այս զեկույցը ներկայացնում է էներգետիկ անվտանգության մասով ՀՀ պարտավորությունները և դրանց կատարման ընթացքը:

ՀԸԳՀ-ի նախաբանում կողմերը նշում են, որ նրանք.

ՀԱՆՁՆ ԱՌՆԵԼՈՎ բարձրացնել էներգիայի մատակարարման անվտանգության և ապահովության մակարդակը՝ դյուրացնելով համապատասխան ենթակառուցվածքի զարգացումը, մեծացնելով շուկայի ինտեգրումը և նորմատիվային հիմքերի աստիճանական մոտարկումն այսուհետ հիշատակվող ԵՄ օրենսդրության առանցքային տարրերի հետ, ներառյալ, *inter alia*, խթանելով էներգաարդյունավետությունը և վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործումը՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության՝ էներգիայի մատակարարողի, տարանցման և սպառող երկրների նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքներին հավատարիմ լինելու հանձնառությունները.

ՀԱՆՁՆ ԱՌՆԵԼՈՎ ապահովել այսուհետ հիշատակվող միջուկային ապահովության և միջուկային անվտանգության բարձր մակարդակ.

ԸՆԴՈՒՆԵԼՈՎ ընդլայնված էներգետիկ համագործակցության անհրաժեշտությունը և էներգետիկ խարտիայի պայմանագրի դրույթների լիակատար պահպանման վերաբերյալ Կողմերի հանձնառությունը.

Համաձայնագրի երկրորդ գլխի՝ (CHAPTER 2: ENERGY COOPERATION, INCLUDING NUCLEAR SAFETY) Հոդված 42-ում (ARTICLE 42), մասնավորապես նշվում է էներգետիկ ռազմավարությունների և քաղաքականությունների զարգացման կարևորությունը՝ ներառյալ էներգետիկ անվտանգության առաջնման և էլեկտրաէներգիայի արտադրության ու մատակարարման բազմազանության նպատակով (energy strategies and policies, including for the promotion of energy security and diversity of energy supplies and power generation):

Կարևորվում է նաև միջազգային ուղեցույցների և պրակտիկայի հիման վրա միջուկային անվտանգության բարձր մակարդակի ապահովումը՝ (high levels of nuclear security, on the basis of international guidance and practices)

Այս նպատակին հասնելու համար ՀԸԳՀ-ով նախատեսված են հետևյալ գործողությունները.

- Էներգետիկ անվտանգության և էներգիայի աղբյուրների դիվերսիֆիկացում, ինչպես նաև էներգախնայողություն.
- Մրցակցակցային էներգետիկ շուկաների զարգացում.
- Վերականգնվող աղբյուրների, էներգաարդյունավետության և էներգախնայողության առաջխաղացում.
- Էներգետիկ անվտանգության և թափոնների կառավարման ոլորտում տեխնոլոգիաների փոխանակում.
- Մեծամորի ատոմակայանի անվտանգ ապաստիվացում և նոր փոխարինող ենթակառուցվածքի ստեղծման նախատեսում:

Վերը նշված գործողությունների շրջանակներում 2018թ-ից ի վեր ՀՀ կառավարությունը իրականացրել է մի շարք բարեփոխումներ, որոնցից գլխավորը, թերևս, մրցակցային էներգետիկ շուկաների զարգացումն է: Ըստ այդ դրույթի՝ ապամենաշնորհացնել և ազատականացնել էլեկտրաէներգիայի բաշխման շուկան: Դեռ 2018թ-ից մեկնարկած այս բարեփոխման արդյունքում արդեն 2022-ի փետրվարի 1-ից ՀՀ-ում էլեկտրաէներգիայի շուկան ազատականացվել է, ինչը նշանակում է, որ ՀԷՑ-ից բացի այլ կազմակերպություններ, որոնք ունեն մատակարարի կամ մեծածախ առևտուր իրականացնողի լիցենզիա, կարող են շուկայում հանդես գալ որպես միջնորդ արտադրողի և սպառողի

միջև, այսինքն՝ մատակարարը կարող է էլեկտրաէներգիա գնել արտադրող կայաններից և վաճառել սպառողին, ինչի արդյունքում ՀԷՑ-ի՝ որպես մատակարարի մենաշնորհը վերանում է, և դաշտում գործում են շուկայական հարաբերություններով կարգավորվող հավասարակշռված գներ:

Մյուս կարևոր բարեփոխումը վերաբերում է արևային էներգետիկայի զարգացմանը, հատկապես՝ պետական աջակցությամբ տնային տնտեսությունների կողմից արևային վահանակներ տեղադրելուն: Այսպես, կիրառվում է բաշխիչ ցանցերի կողմից տնային տնտեսությունների արտադրված արևային էներգիայի տարեկան կտրվածքով գոյացած ավելցուկի գնում, բացի այդ՝ կառավարությունը սուբսիդավորում է քաղաքացիների՝ արևային վահանակներ տեղադրելու նպատակով բանկերից վերցված վարկերի մասով գանձվող 10-15% տոկոսադրույքներից 10%-ը: Այս ծրագրից օգտվել է շուրջ 30.000 տնային տնտեսություն: Սա բերել է Հայաստանի էներգաարտադրության մեջ արևային էներգիայի մասնաբաժնի աճի, ինչն էլ, իր հերթին բերել է ոչ միայն երկրի էներգետիկ անկախության և անվտանգության մակարդակի բարձրացմանը, այլև բնակչության լայն շրջանակներում սոցիալական խնդիրների լուծմանը: Սակայն 2025թ. հուլիսի 1-ից այս սուբսիդավորումը դադարելու է, ինչը հարվածելու է ոլորտի աճին: Կարծում ենք՝ նպատակահարմար է, որ Կառավարությունը շարունակի այս ծրագրի գործողությունը:

Ընդհանրապես, արևային էներգետիկայի զարգացման հիմնական խոչընդոտ է դիտվում արևային էներգիայի գեներացման անկայունությունը օրվա ընթացքում: Արևային էներգիայի արտադրությունն աճել է այնքան, որ ցերեկային ժամերին առաջանում է լուրջ ավելցուկ, ինչը եղած ենթակառուցվածքներն ի վիճակի չեն ոչ կուտակել, ոչ էլ արտահանել, իսկ այդ ժամերին խթանման գործիքակազմ չի կիրառվում: Սրա պատճառով անհրաժեշտություն է առաջացել հավասարակշռել տատանումները՝ ցանցից անջատելով այլ էներգագերներացնող էլեկտրակայաններ, այդ թվում՝ ատոմային էլեկտրակայանից, ինչը էապես ավելացնում է մեկ կիլովատի ինքնարժեքը: Հարկ է նշել, որ վերոնշյալ խնդիրները բնորոշ են ոչ միայն Հայաստանին, այլև վերականգնվող էներգետիկայի զարգացմամբ աչքի ընկնող գործնականում բոլոր երկրներին և ունեն շատ կոնկրետ լուծումներ: Մասնավորապես՝

- ներդրվում է, այսպես կոչված, «պահանջարկի կառավարման» գործիքակազմ, որը գնային և այլ լծակների միջոցով խթանում է սպառումը ավել-

ցուկային ժամերին և հակառակը: Ընդ որում՝ սա արվում է առանց սակագների միջին մակարդակի աճի՝ պահպանելով խոցելի և այլ խմբերի նկատմամբ հոգածությունը:

- խթանվում է կուտակային համակարգերի ներդրումը բնակչության և բիզնեսի կիրառումներում:
- խթանվում են էներգետիկ նոր տեխնոլոգիաները, ինչպես, օրինակ, ջերմային պոմպ, էլեկտրական տրանսպորտ և այլն:

Այսպես, միայն կուտակային կայանների տեղակայումը նաև հնարավորություն կտա ամբողջապես ավտոնոմ էներգասնուցման անցնել ամբողջական բնակավայրերի համար, ինչը հատկապես սահմանամերձ բնակավայրերի համար անվտանգային նշանակություն ունի:

Հայաստանում էներգետիկ խնդիրների լուծման քաղաքականությունների ձևավորման ընթացքում արևային էներգետիկայով զբաղվող ընկերությունների առաջարկները հաճախ իշխանությունները անտեսում են, անգամ չեն ցանկանում լսել: Ինչ արժի այն փաստը, որ ՀԷՑ-ի հետ առնչվող խնդիրների լուծումներին նվիրված ԱԺ լսումների ժամանակ այդ ընկերությունների ներկայացուցիչները չէին հրավիրվել:

Մյուս կարևոր խնդիրներից է ՀԷՑ-երում կոռուպցիայի և հովանավորչության առկայությունը, որի մասին ներքին խոսակցություններում ահագանգում են էներգաարտադրողները: Այսպես, ՀԷՑ-ի ղեկավարությունը չի ապահովում արդար մրցակցությունը և լիցենզիաներ է տրամադրում իր (իր ղեկավար կազմի) հետ աֆիլացված ընկերություններին: Բացի այդ՝ ժամանակին ՀՀ կառավարության հետ բանակցությունների ընթացքում ՀԷՑ-ը հասել է նրան, որ իր էլեկտրաէներգիայի արտադրության մեջ պետք է 8% մաքուր շահութաբերություն ապահովի: Ուռճացված ծախսերի պայմաններում պետության կողմից այդ շահութաբերության երաշխավորումը որպես ծանր բեռ ընկնում է սպառողների ուսերին:

Ըստ պաշտոնական տվյալների՝ Հայաստանում էներգաարդյունավետությունը զիջում է ԵՄ-ին շուրջ 2.7 անգամ և Արևելյան Եվրոպայի երկրների միջին ցուցանիշին՝ 1.7 անգամ: Հայաստանը զգալի կախվածության մեջ է ներկրվող հանածո վառելիքից և վերջին տասնամյակում այդ կախվածությունն ավելացել է: 2009-2019թթ. առաջնային էներգիայի մատակարարման կառուցվածքում

հանածո վառելիքի (նավթամթերք և բնական գազ) մասնաբաժինը ավելացել է 1.6 տոկոսով՝ 2019 թ. կազմելով 70.6 տոկոս: Դիտարկվող ժամանակահատվածում, առաջնային էներգիայի մատակարարման կառուցվածքային փոփոխությունների և ներմուծվող հանածո վառելիքի առումով առանձնանում են երկու հիմնական միտում. բնական գազի մասնաբաժնի ավելացում և նավթամթերքի մասնաբաժնի նվազում: Բնական գազը դիտարկվող ժամանակահատվածում 60 և ավելի տոկոս մասնաբաժնով պահպանել և ամրապնդել է իր գերակա դիրքը: Փաստացի, դիտարկվող ժամանակահատվածում, առաջնային էներգիայի մատակարարման աճի 95 տոկոսից ավելին բաժին է ընկել բնական գազին՝ հիմնականում թեթև մարդատար տրանսպորտի և տնային տնտեսությունների աճող պահանջարկի հետևանքով:

Ներմուծվող հանածո վառելիքից կախվածության նվազեցումը գերակա խնդիր է Հայաստանի համար, որին հասնելու հիմնական ճանապարհը վերականգնվող էներգետիկայի առաջընթաց զարգացումն է: Վերջին տասնամյակում առաջնային էներգիայի մատակարարման կառուցվածքում վերականգնվող էներգակիրների մասնաբաժինը տատանվել է 11-ից 12 տոկոսի շրջանակներում: 2019 թ. վերականգնվող էներգետիկայի մասնաբաժինը կազմել է 11.7 տոկոս (առանց կենսավառելիքի՝ 5.7 տոկոս):

Ներքին պահանջարկը բավարարելու նպատակով ներքին պահանջարկի անփոփոխ պայմաններում բնական գազի ամբողջական փոխարինումը արևային էներգիայով, կապահանջի վերականգնվող (բացի հիդրոէներգետիկայից) էներգիայով աշխատող 700 ՄՎտ հզորության կայանների կառուցում, հաշվի առնելով, որ 2021 թ. առաջին կիսամյակում արդեն իսկ շահագործվում էին շուրջ 150 ՄՎտ հզորությամբ կայաններ⁷⁵:

Այս ուղղությամբ կատարված կարևոր քայլ կարող էր դիտարկվել ՀՀ կառավարության 2019թ-ի դեկտեմբերի 26-ի 1922-Լ որոշմամբ «ՄԱՍԴԱՐԱՐՄԵՆԻԱ ԾՐԱԳԻՐ» ներդրումային ծրագրին հավանություն տալը⁷⁶, որով նախատեսվում էր Արագածոտնի մարզի Թալինի ենթաշրջանում կառուցել 200 ՄՎտ հզորությամբ երկու՝ «Այգ-1» և «Այգ-2» ֆոտովոլտային կայանի կառուցում⁷⁷: Դրա ֆինանսավորմամբ հետաքրքրված ֆինանսական կառույցները, այդ թվում՝ Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկը (ՎԶԵԲ), գերմանական DEG, ֆրանսիական PROPARCO զարգացման գործակալություններ-

75 <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=161408>

76 <https://web.archive.org/web/20220804083631/https://www.e-gov.am/gov-decrees/item/33223/>

77 <https://web.archive.org/web/20220331121300/https://www.ecolur.org/hy/news/officials/13267/>

րը, ինչպես նաև ԱՄԷ Մասդար ընկերությունը պատրաստ էին ներդնել 200 մլն ԱՄՆ դոլար, իսկ արտադրվող էլեկտրոգիայի սակագինը մեկ կիլովատ/ժամի (կՎտժ) համար կկազմեր 0,0290 ԱՄՆ դոլար կամ 11,23 ՀՀ դրամ⁷⁸: Կայանների սեփականատերն էին լինելու Masdar Clean Energy ընկերությունը [75%] և ՀՀ պետական հետաքրքրությունների ֆոնդ ՓԲԸ-ն /Armenian National Interests Fund (ANIF)/ [15%]: Եվս 10% մասնաբաժնի սեփականատերն անհայտ է⁷⁹:

«Այգ-1»-ի կառուցման ՇՄԱԳ հաշվետվության վերաբերյալ ՀՀ Շրջակա միջավայրի նախարարությունը դեռ 2023թ.-ին տվել է դրական եզրակացություն: Նախատեսվում էր, որ կայանը կկառուցվի երկու տարում և արդեն 2025թ.-ին կհանձնվի շահագործման: Սակայն անհայտ պատճառներով կայանի անգամ շինարարությունը մինչ այժմ չի սկսվել:

Ինչ վերաբերում է վերականգնվող էներգետիկայի մեկ այլ ճյուղի՝ հողմաէներգետիկային, ապա 2003 թ. մշակվել են Հայաստանի հողմաէներգետիկ պաշարների քարտեզները, ըստ որոնց՝ տնտեսապես շահավետ հողմաէլեկտրակայանների ընդհանուր հզորությունը գնահատվում է մոտ 450 ՄՎտ և 1.26 մլրդ. կվտժ էլ. էներգիայի տարեկան արտադրանքով: Առանձնացվել են հիմնական հեռանկարային տեղանքները՝ Զոդի լեռնանցք, Բազումի լեռներ՝ Քարախաչի և Պուշկինի լեռնանցքներ, Ջաջուռի լեռնանցք, Գեղամա լեռների շրջանը, Սևանի լեռնանցքը, Ապարանի շրջանը, Սիսիանի և Գորիսի միջև գտնվող բարձունքային գոտին և Մեղրիի շրջանը: Սակայն 2019թ. հուլիսի 1-ի դրությամբ էլ.էներգիա է արտադրել միայն 2 հողմաէլեկտրակայան, որոնց զումարային դրվածքային հզորությունը կազմել է 2,9 ՄՎտ, 2 հողմակայան 5,3 ՄՎտ հզորությամբ դեռ կառուցման փուլում է: Համաձայն Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թ. մայիսի 29-ի թիվ 159-Ն որոշման՝ 2019 թ. հուլիսի 1-ից մինչև 2020 թ. հուլիսի 1-ը հողմային էլեկտրակայաններից առաքվող էլ.էներգիայի սակագինը կազմում է՝ 43,585 դրամ/կՎտաժ առանց ԱԱՀ (մինչև 01.11.2018 լիցենզավորված), իսկ մինչև 30 ՄՎտ (ներառյալ) տեղակայվող հզորություն ունեցող հողմակայանների համար սահմանվել է 24,233 դրամ/կՎտաժ սակագին (01.11.2018թ.-ից հետո լիցենզավորված): Այդ սակագինը սահմանվում և վերանայվում է ըստ հանձնաժողովի կողմից 2015 թ. ապրիլի 22-ի թիվ 88-Ն որոշմամբ ընդունված հստակ մեթոդիկայի: Վերոնշյալ մեթոդիկայի համաձայն՝ ամեն տարվա վերջում ինդեքսավորվում է հողմային էլեկտրակայանների հա-

78 <https://www.hetq.am/hy/article/157962>

79 https://www.gem.wiki/Ayg-1_solar_farm

մար սահմանված սակագինը՝ կախված դոլարի համեմատ ՀՀ դրամի տատանումներից, որոշակի ժամանակահատվածի համար և կախված Հայաստանում սպառողական գների փոփոխությունից: 30 ՄՎտ տեղակայվող հզորություններից ավելի հզորությամբ հողմային էլեկտրակայանների սակագինը սահմանվում է առանձին ներդրումային ծրագրերի շրջանակներում⁸⁰:

Այստեղ անհրաժեշտ է նշել, որ վերականգնվող էներգետիկայի զարգացումը բացի մակրոտնտեսական աջակցությանը և խթանմանը վերաբերող քայլերից՝ հաճախ կարիք է ունենում նաև անմիջական՝ միկրոտնտեսական միջատուության և աջակցության: Այդպես, օրինակ, մինչև օրս չի օգտագործվում աղբավայրերի էներգետիկ ներուժը:

Այս իմաստով ուշագրավ է Լուսակերտի թռչնաֆաբրիկայի թռչնաղբից ստացվող կենսազազի հենքով կառուցված կենսազազի կայանի փակման պատմությունը: Դրանում օրական մոտ 250 տ հեղուկ թռչնաղբ էր մշակվում, ինչի արդյունքում 60-70% մեթանի պարունակությամբ կենսազազ էր ստացվում: Կենսազազով գործարկվում էր գազի շարժիչն ու գեներատորը: Կիոտոյի արձանագրության եվրոպական փորձագետների հաշվարկով Լուսակերտի կենսազազի գործարանը կամ «Լուսակերտ Բիոգազ Փլանթ» ՓԲԸ կենսազազի գործարանը բացվել է 2008թ.-ին, դրա բաժնետերերից էր նորվեգական «Վեքստ» հիմնադրամը: Կատարվել էր 5,2 մլն եվրոի ներդրում (նախատեսվում էր ժամանակի ընթացքում ներդրումների ծավալը հասցնել 10 մլն եվրոյի) և արտադրում էր տարեկան 7 մլն կվտ ժամ էլեկտրաէներգիա, ընդ որում՝ ստացված էլեկտրաէներգիան վաճառվում էր հայկական էլեկտրոցանցերին՝ մեկ կվտ-ը 35 դրամով⁸¹: Միաժամանակ այն կրճատում էր 27 հազար տոննա ջերմոցային գազ՝ CO₂: Ֆինանսական դժվարությունների պատճառով այն 2013թ.-ից դադարեցրել է աշխատանքը: Ֆինանսական խնդիրները սկսվել են այն ժամանակ, երբ կառավարությունը գործարանին չտրամադրեց ԱԱՀ-ի մասով խոստացած արտոնությունները (սարքավորումների ներկրումից): Բացի այդ՝ կառավարության հետ քննարկումների ժամանակ, որոնք եղել էին նախագծման փուլում, քննարկվում էր անասնաբուժական թափոնները (խոշոր անասնապահական ֆերմաների, թռչնաֆաբրիկաների) անվերահսկելի թափելու համար տուգանքներ սահմանելու հնարավորությունը: Եթե նրանց բնապահպանական տուգանքների սպառնալիքով պարտավորեցնեին վճարել վերամշակման համար, ապա հանրապետությունում այլընտրանքային

80 <http://www.minenergy.am/page/verakang>

81 <https://armenpress.am/hy/article/448595>

էներգետիկա կզարգանար: Սակայն նման պահանջներ այն ժամանակ այդպես էլ չընդունվեցին: Եվ այս հարցում իրավիճակը մնում է անփոփոխ:

Դրանից հետո գործարանը լքեցին նորվեգացի և դանիացի գործընկերները՝ նորվեգական «Vekst Foundation»-ը և դանիական զարգացման հիմնադրամը (գործարանի համաներդրողները), ինչպես նաև տեխնոլոգիան կարգավորող դանիական ինժեներական «Bigadan» ընկերությունը: Նորվեգացիներին պատկանում էր գործարանի բաժնետոմսերի 16%-ը, դանիացիներին՝ 13-ական տոկոսը: 2019 թ.-ին Մանուկյանների ընտանիքը փորձեց վերականգնել գործարանը. մաքրեց տանկերները և փորձեց կրկին լուծել ներմուծվող սարքավորումների հետ կապված հարկային հարցերը, սակայն կառավարության հետ բանակցությունները նորից արդյունք չտվեցին⁸²:

Իսկ 2023թ. հոկտեմբերին ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը Լիցենզիան դադարեցման մասին որոշում կայացրեց: Կենսազազի գործարանում օգտագործված կենսազանգվածը վեր էր ածվում բնական պարարտանյութի, ինչը շատ պիտանի է գյուղացու տնտեսության համար: «Կենսազանգված-կենսազազ-օրգանական պարարտանյութ» կամ «կենսազանգվածկենսազազ-էլեկտրական և ջերմային էներգիա-պարարտանյութ» տեխնոլոգիաներով կենսազանգվածի վերամշակումը՝ որպես եկամտաբեր բիզնես խթանելու համար անհրաժեշտ է օրենսդրական կարգավորում: Այդ կարգավորումը հանգում է հետևյալին՝ արտադրական կազմակերպությունն իր թափոնները տեղափոխող ու վերամշակող կազմակերպությանը պետք է վճարի ըստ թափոնի զանգվածի՝ ինչպես եվրոպական երկրներում⁸³:

Կենսազազի հենքով էներգակայանների շուկայի զարգացման արգելակող գործոններից է նաև այն, որ Հայաստանում չի ձևավորվել carbon credits անվանումով հայտնի համակարգը, որի դեպքում ջերմոցային գազերի արտանետումները կրճատող ձեռնարկությունները բալեր են ստանում յուրաքանչյուր տնտեսած արտանետման տոննայի համար, այնուհետև այդ բալերը կարող են վաճառել այն ընկերություններին, որոնք գերազանցում են թույլատրելի արտանետումները:

Բացի էներգասպառման կառուցվածքի փոփոխությունից՝ ՀՀ կառավարությունը որոշ քայլեր է ձեռնարկում նաև առկա կառուցվածքի պայմաններում էներգիայի աղբյուրների դիվերսիֆիկացման ուղղությամբ: Այսպես, ԱՄՆ-ի

82 <https://arm.sputniknews.ru/20231008/hhum-kasecvel-e-kensagazi-artadrutjan-miak-licenzian-gvortsarani-hamar-gnvord-en-pntrum-66954209.html>

83 www.mathnet.ru/links/434d0b29615e0924254275313da59a7a/nuaca271.pdf

հետ 2022թ.-ին ստորագրվել է միջուկային ոլորտում ռազմավարական համագործակցության խարտիա, որից հետո սկսվել են բանակցություններ Հայաստանում ամերիկյան տիպի 300 կամ 600 ՄՎտ հզորությամբ մոդուլային ատոմային էլեկտրակայան կառուցելու համար: Այն նախատեսվում է կառուցել մինչև 2035թ.-ը, երբ կավարտվի գործող՝ Մեծամորի ատոմակայանի շահագործման վերջնաժամկետը:

Զուգահեռաբար բանակցություններ են ընթանում Թուրքմենիայից Հայաստան Իրանի գազային ցանցի միջոցով գազի սվոտային մատակարարումներ իրականացնելու շուրջ, ինչը կարող է էապես նվազեցնել այս հարցում Հայաստանի կախվածությունը Ռուսաստանից իրականացվող մատակարարումներից:

Էներգետիկ անվտանգության մակարդակի բարձրացման և արտաքին գործոններից էներգետիկ կախվածության նվազեցման ևս մեկ կարևոր ուղղություն է էներգախնայողության մակարդակի ավելացումը: Ըստ փորձագիտական գնահատականների՝ էներգախնայողության շնորհիվ հնարավոր է Հայաստանի տնային տնտեսությունների, պետական/համայնքային հիմնարկությունների և արտադրական ձեռնարկությունների սպառած էներգիան կրճատել շուրջ 30 տոկոսով:

Այս նպատակով Կառավարությունը 2018 ապրիլի 12-ին ընդունել է N 426-Ն որոշումը, որով սահմանվում է նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում և պետական միջոցաներով կառուցվող օբյեկտներում էներգախնայողության տեխնիկական կանոնակարգը. Կառուցապատման նորմերն ու էներգետիկ սերտիֆիկատներն էլ սահմանվել են առանձին հրամանագրով: Բացի այդ՝ Կառավարությունը 2023-ի հունիսի 8-ին ընդունել է 916-Ն որոշումը, որով կանոնակարգվում են սինթետիկ հիմքով ներկերն ու լաքերը, ինչը կնպաստի շենք-շինությունների ջերմամեկուսիչ/էներգախնայող ծածկույթների կիրառման կանոնակարգմանը: Այստեղ հարկ է նշել նաև բազմաբնակարան շենքերի ջեռուցման կենտրոնացման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու անհրաժեշտությունը, ինչը կարող է 35-40 տոկոսով նվազեցնել բնակարանների ջեռուցման համար գազի ծախսը:

Վերջապես, բայց ոչ վերջին հերթին, իշխանությունները անհրաժեշտ ուշադրությունը չեն հատկացնում ոլորտի կառավարմանը: Այսպես, նախ հեղափոխությունից անմիջապես հետո վերացվեց էներգետիկայի նախարարությունը՝ միացնելով այն Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը, իսկ այս պահի դրությամբ արդեն երկար ժամանակ է նշանակված չէ ՏԿԵՆ-ի՝ էներգետիկայի գծով փոխնախարարը: Նման մոտեցումը

Կառավարությունը պատճառաբանում է համապատասխան կադր չունենալով, ինչը չի կարող հիմնավոր պատճառ համարվել:

Ամփոփելով զեկույցը՝ ներկայացնում ենք ԵՄ-Հայաստան պլատֆորմի փորձագետների դիտարկմամբ ՀԸԳՀ-ով ՀՀ ստանձնած պարտավորությունների շրջանակներում գործողությունների կատարման ծավալները, ըստ որի՝ դրանց զգալի մասը դեռ չի կատարվել⁸⁴: Այսպես.

Նախատեսված էր կատարել մինչև 2024 թվականը, սակայն չեն կատարվել հետևյալ գործողությունները.

- Էներգետիկ ոլորտում ներդրումների հաշվետվողականություն.
- Մշակել կարգ էներգետիկ ոլորտում ներդրումների մասին պետությանը հաշվետվություններ ներկայացնելու կարգը և դրա վերաբերյալ ստանդարտները՝ համաձայն ԵՄ 1113/2014 կարգավորման.
- Ածխաջրային հանքարդյունաբերողների վերաբերյալ նորմերի սահմանում.

Ածխածնային հանքարդյունաբերության հայտ ներկայացնողների համար սահմանել ստանդարտներ և կարգավորումներ՝ ըստ 94/22/EC հրահանգի:

Նախատեսված էր կատարել մինչև 2025 թ. ավարտ, բայց դեռ չեն կատարվել հետևյալ գործողությունները.

- Մշակել և ներդնել էներգախնայողության և էներգաարդյունավետության համապարփակ քաղաքականություն.

Այդ թվում՝ սահմանել էներգիայի սպառման կրճատման ամենամյա նպատակակետ՝ ընդհանուր էներգիայի սպառման տարեկան 0.24 - 0.28% նվազեցում՝ ինչպես սահմանված է 2012/27/EC.

- Պետական հիմնարկների շենքերի տարածքի տարեկան 3% էներգախնայող ստանդարտներով վերակառուցում.

Սահմանվում է նույն 2012/27/EC հրահանգով.

- Պետական և ՏԻՄ մարմիններում աշխատանքի ու գնումների համար մշակել էներգախնայողական քաղաքականություն.

Ինչպես նաև գործողությունների պլան՝ ինչպես սահմանված է նույն 2012/27/EC հրահանգով.

- Զեռուցման համակարգերի կարգավորում.

⁸⁴ <https://eu-armenia.am/energy>

Մասնավորապես ներդնել ջեռուցման օգտագործման վերաբերյալ կարգավորումներ, օգտագործված ջեռուցման քանակը չափելու և դրա սահմանափակմանն ուղղված կարգավորումներ՝ ինչպես սահմանվում է նույն 2012/27/EC հրահանգով.

- Գազի հաշվիչների արդիականացում և հեռավար ընթերցում.

Ներդնել բնական գազի հաշվիչների ցուցմունքերի հեռավար ընթերցման հնարավորություն՝ ապահովելով գազի սպառման մասին տեղեկության չափելիություն. Սահմանվում է նույն 2012/27/EC հրահանգով.

- Ապրանքների էներգետիկ մականանշման ներդրում.

Արտադրողների, ներկրողների, վաճառողների և մատակարարողների համար սահմանել էլեկտրական սարքերի վրա էներգախնայողության դասերի վերաբերյալ պարտադիր պիտակներ փակցնելու մասին պարտավորություն՝ ըստ 2010/30/EC հրահանգի ստանդարտների.

- Ատոմային էներգետիկայի քաղաքականության ներդրում.

Մշակել և ներդնել ատոմային էներգետիկայի վերաբերյալ օրենսդրական և ինստիտուցիոնալ շրջանակ, ինչպես նաև ստեղծել լիազոր մարմին, որը կսահմանի, կմշակի և կվերահսկի ատոմային անվտանգության ստանդարտները (2009/71/Euroatom հրահանգ).

- Ներդնել վառելիքային թափոնների կառավարման համակարգ.

Ընդունել և ներդնել օրենսդրական ակտեր՝ կապված վառելիքային և ռադիոակտիվ թափոնների առաջացման, պահմանման և կառավարման հետ (2011/70/Euroatom հրահանգ).

Նախատեսված է կատարել մինչև 2026 թվականը.

- Ներդնել վառելիքի մինիմալ ազգային պահուստի պահանջ.

Պետությունը պարտավորվում է սահմանել առնվազն 61 օրվա սպառման քանակով գազի և այլ վառելիքների պահուստ ունենալու կարգավորում՝ ինչպես պահանջում է 2009/119/EC հրահանգը.

- Կո-գեներացիայում էներգակիրների շեմը համապատասխանեցնել.

Էներգիայի խառը արտադրման համար նախատեսել էներգակիրների չափաբաժիններ՝ ինչպես սահմանված է 2015/2402/EC հրահանգի հավելվածում.

- Շինությունների էներգետիկ պրոֆիլավորման քաղաքականության ներդրում.

Շենքերի ու շինությունների, տարածքների էներգետիկ սերտիֆիկացման, խնայողության համապատասխանեցման, կլիմայի համակարգերի վերահսկողության համակարգերի ներդրում՝ ինչպես սահմանում է 2010/31/EU հրահանգը:

Նախատեսված է կատարել մինչև 2027 թվականը.

- Ներդնել էլեկտրականության շուկայի անվտանգության ու կայունության համակարգ.

Ներդնել էլեկտրականության ներքին շուկայի պահանջարկի և առաջարկի միջև բալանսի, համակարգի կայունության երաշխիքներ, այդ թվում բավարար ներդրումների միջոցով՝ ինչպես սահմանում է 2005/89/EC հրահանգը.

- Նախապատրաստական աշխատանքներ են տարվում ռադիոակտիվ թափոնների կառավարման հետ կապված օրենսդրությունը նախագծելու համար: Ընդունված է ռազմավարություն:

Մեր գնահատմամբ ՀԸԳՀ-ի կատարողականի հարցում նման ոչ-բարվոք վիճակը կապված է հետևյալ գործոնների հետ.

1. ՀԸԳՀ-ի շրջանակներում ստանձնած պարտավորությունների (այսուհետ՝ Պարտավորություններ) կատարող համապատասխան պետական մարմինների աշխատակիցների կարողությունների խիստ անբավարար մակարդակ.
2. Պարտավորությունները կատարող համապատասխան պետական մարմինների որոշ աշխատակիցների կարողությունների ցածր մոտիվացիա.
3. Պարտավորությունները իրականացնող համապատասխան պետական մարմինների որոշ աշխատակիցների կողմից միտումնավոր սաբոտաժ՝ ներքաղաքական և արտաքին քաղաքական նկատառումներով.
4. Ինստիտուցիոնալ/կառուցվածքային խնդիրներ /օրինակ, Էներգետիկայի նախարարության լուծարում և ՏԿԵՆ կազմում երկար ժամանակ փոխնախարարի բացակայություն, Եվրոպական ինտեգրման և մոտարկման հարցերով մարմնի՝ նախարարության կամ փոխվարչապետի ինստիտուտի բացակայություն/.
6. Էներգետիկայի և բնապահպանության ոլորտում օրենսդրական դաշտի անբավարար տեմպերով զարգացում և համապատասխանեցում ԵՄ չափորոշիչներին.
7. Հանրության/քաղաքացիության կողմից պարտավորությունների կատարման ուղղությամբ տարվող աշխատանքների մոնիթորինգի և վերահսկողության անբավարար մակարդակ՝ համապատասխան ֆինանսական ռեսուրսների սակավության պատճառով: